



ԷՋՄԻԱԾԻՆ

1974
Թ

ՌՄԿ 196



ԼԱ
ՏԱՐԻ




ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ահապարտե մի էր

1974





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Սմենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական Ունեցողքը ռուսին օրթոդոքս եկեղեցու Նորին Արքեպիսկոպոս Ժուստինիան Պատրիարքին՝ ժողովրդական Ինովնիայի ազատագրության երեսնամյակի առթիվ, և ստացված պատասխանը	3
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական Ունեցողքը քուղար օրթոդոքս եկեղեցու Նորին Արքեպիսկոպոս Մաքսիմ Պատրիարքին՝ ժողովրդական Բուլղարիայի ազատագրության երեսնամյակի առթիվ, և ստացված պատասխանը	4
Թորքիայի հայոց ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքը Մայր Աթոռում Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի առաջնորդ տ. Վաչե եպիսկոպոս Հովսեփյանցի խոսքը Իրսկվայի և Ռամայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Արքեպիսկոպոս Պիմենի կողմից արված ճաշկերույթին	7
ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի պատվիրակության Ելյըր Սովետական Միություն	10
Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի ներկայացուցիչները Մայր Աթոռում	13
Հոգևոր ճեմարանի վերաբացումը	21
ԻՐԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ	22
ՊԱՐԳԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ—Անցիալիստական երկրների և կրոնական համայնքների խորհրդակցական ժողով Զագորսկի սուրբ Անրգլի վանքում	26
ԿԱՐԳԵՎ ՇԱՀԱԶՅԱՆ—Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջառլային գործերի հանձնաժողովի գործադիր կոմիտեի 28-րդ նստաշրջանը	28
Ի.ԶՆԻԿ ԱՐԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Մովսես Երզնկացու «Ընդդիմադրություն սակս ջրայն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին հայոց .2Ե՛՛՛» դավանաբանական թուղթը	33
Հ. Ա. ԵՂՆԱԶԱՐՅԱՆ—Հերմիտի ս. Սիմեոն և ս. Գևորգ ունապատները և դրանց վիճակն արձանագրությունները	43
ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ—Երկարամյա սրբուհիների արդյունքը	48
ՍՈՒՐԵՆ ԶՈՒՆՋՅԱՆ—Հայագիտության քաղաքականական մշակը	58

ԽՐԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ, ԿՍԸ, ԷԶՄԻԱՄԻՆ

«ԷԶՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Echmiadzine», Echmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 9/IX 1974 թ.: Ատրագրված է տպագրության 26/X 1974 թ.:

Տպագրական 4 մամուլ + 1 ներդիր, թուղթ 80x84/8, պատվեր 585

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1974 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱԹԱՌ ԵՒ ՍՐՈԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄՆԱԹՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈՂՈՔԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԺՈՒՍՏԻՆԻԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ
ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ, ԵՎ
ՍՏԱՅՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

Բուխարեան

Ռումին ժողովրդի ազգային վերածնության և հայրենաշեն պատմական իրագործումների երեսնամյա տոնակատարության առթիվ խնդրում ենք Ձերդ Սրբությանը՝ ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները և ջերմագին մաղթանքները, որ սոցիալիստական Ռումինիան միշտ աճի ու ծաղկի խաղաղության մեջ երջանիկ, միշտ լիակատար գերիշխան իր լուսավոր ապագայի վրա:

Ողջագուրում ենք Ձեզ եղբայրական բարի զգացմունքներով և սիրով ի Բրիտոս:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

**ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

20-ը օգոստոսի 1974 թ.,

Ս. Էջմիածին

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբության շնորհավորանքները և բարեմաղթությունները, ֆաշիստական տիրապետությունից Ռումինիայի ազատագրման երեսնամյակի առիթով, Մեզ խորապես հուզեցին: Սրտանց շնորհակալ ենք Ձեր զգացմունքների ջերմության և գնահատանքի համար, որ տաժում էք մեր երկրի և մեր ժողովրդի հանդեպ:


Մաղթում ենք Ձեզ երկար կյանք, պտղառատ ու երջանիկ հովվապետություն և ողջագուրում ենք Ձեզ եղբայրական սիրով ի Բրիտոս:

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈՂՈՔԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

28-ը օգոստոսի 1974 թ.,

Բուխարեան



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԲՈՒՂԱՐ ՕՐԹՈՂՈՒՔՍ
ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ԱԶՍԱԳՐՈՒԹՅԱՆ
ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ, ԵՎ ԱՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

Սոֆիա

Մեծ ուրախությամբ շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը՝ հերոսական Բուլղարիայի ազատագրության և վերածնության երեսնամյակի առթիվ: Ձերմտրեմն ցանկանում ենք, որ ձեր սոցիալիստական հայրենիքը ավելի ամրապնդվի և ծաղկի՝ աշխատասեր և տաղանդավոր բուլղար ժողովրդի նորանոր նվաճումներով: Ձեր մեծ տոնի առթիվ Մենք մի անգամ ևս հայտնում ենք Մեր անկեղծ սերը և հարգանքը դեպի եղբայր բուլղար ժողովուրդը:

Թող Աստված օգնական և պահապան լինի ձեր սուրբ եկեղեցուն այժմ և հավիտյան:

Եղբայրական ջերմ սիրով ի հրիստոս՝

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԵՄԵՐԱԳՈՒՆՏ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4-ը սեպտեմբերի 1974 թ.,

Ա. Էջմիածին

Ս. Էջմիածին

Եղբայրական սիրով հԱստված, ամբողջ հոգով շնորհակալ ենք Ձերդ Սրբության այն ջերմ և սրտագին շնորհավորանքի համար, որ Դուք հղել էիք Մեզ մեր երկրում սոցիալիստական հեղափոխության 30-ամյա տարեդարձի առթիվ, հեղափոխություն, որի շնորհիվ մեր երկիրը ձեռք բերեց ազատություն, վերելքի ու բազմակողմանի ծաղկման հնարավորություններ՝ շնորհիվ Սովետական մեծ Միության եղբայրական անջախանդի օգնության:

Թող Աստված ամրապնդի մեր փոխադարձ սիրո կապերը համայն աշխարհի խաղաղության համար մղվող պայքարում՝ հանուն ժողովուրդների բարեկամության և սոցիալական արդարության հողազնդի վրա:

Ձերդ Սրբության անձնվեր աղոթակից՝

Մ Ա Ք Ս Ի Մ

ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒՂԱՐ ՕՐԹՈՂՈՒՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

17-ը սեպտեմբերի 1974 թ.,

Սոֆիա



ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԾՆՈՐԷՔ ՍՐԱՍՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԷԱՅՈՑ ԹՈՒՐԿԻԱՅԻ



**ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԾՆՈՐՀՔ
ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԶԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ**

Ժ Ա Մ Ա Ն Ո Ւ Մ

Անպտեմբերի 9-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 18-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Թուրքիայի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Ծնորհք արքեպիսկոպոս Գալստյանը:

Սրբազան պատրիարքին ողեկցում էին Կ. Պոլսի Նարլըզարու թաղի ս. Հովհաննէս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Հովհան քհն. Իսթանպոլյանը և նույն եկեղեցու թաղական խորհրդի ատենապետ տիար Գևորգ Հակոբյանը:

Սրբազան պատրիարքին ընկերակցում էր նաև Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը:

Թուրքիայի հայոց սրբազան պատրիարքին և նրան ողեկցող անձանց երևանի օղանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ տ. Վահան եպս. Տերյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերքերյանը, հոգևոր ճեմարանի նախկին տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Ծիրվանյանը, «Էջմիածին» ամսագրի քարտուղար տ. Եզնիկ արեղա Պետրոսյանը և Մայր Աթոռի միաբաններ տ. Մասիս արեղա Գալստյանը, Գրիգոր սրկ. Քեշիշյանը և Աղվան սրկ. Գասպարյանը:

Սրբազան պատրիարքին օղանավակայանում դիմավորում և բարի գալուստ է մաղթում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանը:

Մայր տաճարի դռան առաջ սրբազան պատրիարքին ողջունում և բարի գալուստ են մաղթում Մայր Աթոռի միաբանները, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանի գլխավորությամբ, և առաջնորդում Մայր տաճար, ուր Վեհափառ Հայրապետը քարիզալստյան և ողջունի խոսք է ասում՝ ուղղված Թուրքիայի հայոց սրբազան պատրիարքին:

Սրբազան պատրիարքը պատասխան խոսքով շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին, կրկին Մայր Աթոռ ս. Էջմիածին և մայր հայրենիք այցելելու իրեն տրված պատեն առիթի համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն ու սրբազան պատրիարքը եկեղեցական թափորով առաջնորդվում են Վեհարան:

ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՄ

Անպտեմբերի 17—18-ին, երեքշաբթի և չորեքշաբթի օրերին, Թուրքիայի հայոց պատրիարք տ. Ծնորհք արքեպ. Գալստյանն ուխտագնացության է մեկնում Տաթև վանք:

Արքազան պատրիարքին ուղեկցում էին տ. Արիս Ծ. վրդ. Ծիրվանյանը, տ. Մասիս արդ. Գալստյանը, տ. Հովհան քհն. Իսթանպուլյանը և տիար Գև. վորգ Հակոբյանը:

Սեպտեմբերի 19-ին, հինգշաբթի օրը, Թուրքիայի հայոց պատրիարք տ. Ծնորհք արքեպ. Գալստյանն ուխտագնացության է մեկնում ս. Գեղարդ վանք:

Արքազան պատրիարքին ուղեկցում էին տ. Մասիս արդ. Գալստյանը, տ. Հովհան քհն. Իսթանպուլյանը և տիար Գևորգ Հակոբյանը:

Սեպտեմբերի 25-ին, չորեքշաբթի օրը, Թուրքիայի հայոց պատրիարք տ. Ծնորհք արքեպ. Գալստյանը ուխտագնացության է մեկնում Հաղպատի և Սանահնի վանքեր:

Արքազան պատրիարքին ուղեկցում էին Մայր Աթոռի միաբաններ տ. Հմայակ Ծ. վրդ. Ինդոյանը, տ. Գրիգորիս արդ. Բունիաթյանը, տ. Հովհան քհն. Իսթանպուլյանը և տիար Գևորգ Հակոբյանը:

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 2-ին, չորեքշաբթի օրը, ժամը 15-ին, Վեհաբանի սեղանատանը, ի պատիվ Թուրքիայի հայոց պատրիարք տ. Ծնորհք արքեպ. Գալստյանի, տրվում է ողջերթի ճաշկերույթ, որին ներկա են լինում տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Զգոն, տ. Գարեգին, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Հմայակ, տ. Արիս, տ. Ներսես արքազանները և այլ հրավիրյալներ:

Ողջերթի սույն ճաշկերույթին ներկա է լինում նաև Հայկական ՍՍՀ Միհիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Ընդունելության ժամանակ ողջերթի ջերմ խոսքեր են ասում Վեհապետ Հայրապետը և պրն. Ս. Գասպարյանը:

Այնուհետև ամենապատիվ տ. Ծնորհք արքազան պատրիարքը Հայոց Հայրապետին ուղղված շնորհակալության և երախտագիտության խոսք է ասում՝ իր նկատմամբ ցույց տրված ջերմ ընդունելության և հոգատարության համար:

Ողջերթի սույն ճաշկերույթն ավարտվում է ջերմ մթնոլորտում:


Մ Ե Կ Ն Ո Ւ Մ

Հոկտեմբերի 8-ին, հինգշաբթի օրը, ժամը 13-ին, իր ջքայմթով Մոսկվա է մեկնում Թուրքիայի հայոց պատրիարք տ. Ծնորհք արքեպ. Գալստյանը, ուր նա մի քանի օր լինելու է ռուս պրավոսլավ եկեղեցու հյուրը:

Արքազան պատրիարքին Երևանի օդանավակայանում քարի ճանապարհ են մաղթում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Էջմիածին» ամսագրի քարտուղար տ. Եզնիկ արդ. Պետրոսյանը:

Տ. Ծնորհք արքազան պատրիարքին ճանապարհում է նաև Հայկական ՍՍՀ Միհիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:





ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ
ԱՌԱՋԵՆՈՐԴ Տ. ՎԱԶԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԽՈՍՔԸ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԷ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ
ԾԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

(Մոսկվա, 21 հուլիս 1974 թ.)

Նորին Արքայություն Պիմեն, Պատրիարք համայն ոուս օրթոդոքս եկեղեցի-
վո,

Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց,
Ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյան, պատրիարք հա-
յոց Երուսաղեմի,

Պատվարժան տիար Կուրոյեդով, կրոնից գործերի նախարար Սովետա-
կան Միության, և

Սիրելի եղբայրներ ի Քրիստոս,

Այս բարեբաստիկ պահուն կփափագիմ հանուն մեր պատգամավորնե-
րուն նայտնել մեր երախտագիտությունն ու որդիական սերը Ն. Ս. Օ. Տ. Տ.
Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետին, մեզ իր շքախումբին անդամ ընե-
լուն համար: Վստահ եմ որ մեր պատգամավոր եղբայրները պիտի բաժնեն
իմ զգացումները եթե հայտնեմ թե անցնող քանի մը օրերու ընթացքին ինչ
որ տեսանք, վկայեցինք, փորձվեցանք ու ապրեցանք, որոնք պիտի մնան
անմոռանալի հիշատակներ:

Մեր ժամանան օրն իսկ ոուս օրթոդոքս եկեղեցականությունը, գլխա-
վորությամբ Նորին Արքայություն Պիմեն Պատրիարքին ու սովետական կառա-
վարության ներկայացուցիչներու, մեզ դիմավորեցին քացատիկ գուրգուրան-
քով ու սիրով: Ինչպե՞ս կարելի է մոռնալ պարթևահասակ Պիմեն Պատրիար-
քը, որ ամենայն ազնվությամբ երկու օրեր հաջորդաբար օղակայան եկավ և
յուրաքանչյուրս ողջագործեց մե՛ծ ժպիտով: Որպես ճշմարիտ հուզեր առաջ-
նորդ և հայր, անձնապես հետաքրքրվեցավ և ուզեց ապահով ըլլալ թե մենք
հանգիստ պայմաններով տեղավորված էինք մեր սենյակներուն մեջ: Ար-
ցարև, առաջին իսկ օրեն կզգայինք ու վստահ էինք թե բոլորս պիտի ունե-
նայինք շափազանդ հիշատակելի այցելություն մը բոլորիդ հետ:

Նախքան որ հայտնենք մեր զգացումները ու տպավորությունները մեր այցելության մասին, վստահ ենք որ պիտի փափագիք գիտնալ ընդհանուր ստամար թե ի՞նչ է հայության վիճակը Հյուսիսային և Հարավային Ամերիկացիներու մեջ:

Հյուսիսային Ամերիկայի մեջ ունինք մոտավորապես 400 հազար և Հարավային Ամերիկայի մեջ մոտ 150 հազար հայություն: Ալվելի քան 150 եկեղեցիներ, հայ դպրոցներ, ծերանոցներ կան: Հայ լեզուն, պատմությունն ու նշակույթը կուսուցվի հանրաժանութի համալսարաններու մեջ, ինչպիսին են, Գոլոմպիան, Հարվըրդը և Կալիֆորնիո զանազան համալսարանները:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը Իր երկու շնորհաբեր այցելությամբ (1960 և 1968) ստեղծեց անհախճաթ խանդավառություն և նոր կյանք տվավ հայ եկեղեցիներուն ու հայ զաղութներուն: Ծնորդի վ Նորին Ս. Օծության ուժեղ առաջնորդության ու Սովետական Հայաստանի հոյակապ մշակութային օժանդակության ու նաև մեր երկիրներու կառավարությանց որդեգրած անաչտ ու անխտրական կեցվածքին՝ մեր հանդեպ, այսօր արտասահմանի հայությունը կապրի վերազարթնումի շրջանը:

Այսօր քաղմահազար թիվով հայեր զանազան երկիրներեն, տարբեր հարանվանությանց պատկանող ու տարբեր քաղաքական հայեցակետ ունեցող հայ հոգիներ կայելեն մայր հայրենիք ու հատկապես ս. Էջմիածին: Բոլորն ալ անխտիր կհյուրընկալվին հայկական ավանդական ասպնջախան ոգիով հայ պետության կողմն ու հատկապես Ն. Ս. Օծություն Ամենայն Հայոց կաթողիկոսեն: Բոլոր այցելուներն ալ կվերադառնան իրենց տունները ուրախ ու խանդավառ տրամադրությամբ: Այսօր ամեն ոք կրնա այցելել և իր աչքերով վայելել թե ինչպե՛ս հայ ժողովուրդը թրքական բարբարոսական չարդերու մոխիրներեն հարություն առնելով ու հայրենական պատերազմի հաղթանակի պսակեն ետք, անցնող 50 տարիներու ընթացքին մեր ժողովուրդը ինչ կերտեց, և թե ինչ ըրավ Ն. Ս. Օծությունը Իր գահակալության անցնող 18 տարիներու ընթացքին: Մենք զԻ՛նք արտասահմանի մեջ կկոչենք հրաշագործ կաթողիկոս: Ս. Էջմիածինը, Ն. Ս. Օծություն Ամենայն Հայոց Երկաթուղիկոսը և մեր հայրենիքը միացյալ երրորդություն մըն է մեզի համար: Արդարև, անոնք կհանդիսանան ձգողության կեդրոնը բոլոր հայերուն համար:

Այժմ վերադառնանք մեր այցելության: Ինձ և մեր պատգամավորության համար այս այցելությունը իր գագաթնակետին հասավ երբ այցելեցինք պատմական Զագորսկը: Արդարև, մենք իսկապես տեսանք կենդանի եկեղեցին, ռուս օրթոդոքս եկեղեցին իր փառքին ու ույծին մեջ: Կակնարկենք այն քաղմահազար հավատացյալ ուխտավորներուն, որունք երկյուղածությամբ գԱստված կպաշտեին: Իսկապես մենք մասնակից եղանք ս. Սերգեյի հիշատակության հոգևոր տոնախմբության: Եկեղեցականաց դասը, հավատացյալներն ու սուրբերու օրհնությունն ու հոգիները միացած էին այդ պատմական վանքի տաճարին մեջ: Հիսուս Քրիստոսի մարմինը եղող կենդանի ու վկա հավատացյալները հոն տաճարին մեջն էին:

Հոգեկան մեծ խանդավառությամբ ու զոհունակությամբ հայացքս ևս ևնետեիմ անգամ մը ևս տեսնելու համար ծովածախլ ուխտավորները, որոնցմե ոմանք հարյուրավոր ու հազարավոր մղոններով ճամփորդած էին, իրենց հետ բերելով նաև իրենց մանուկները: Թերևս ձեզմե շատերուդ համար այս բնթացիկ ու սովորական իրողություն է, քայց մեզ համար, որ եկած ենք Ամերիկաներեն, ուր եկեղեցական պաշտամունքը տակավ առ տակավ կկոր-

սընցնե իր կրոնական խորհրդակաճությունը, հատկապես աշխարհային շարժման ազդեցությանց ներքև: Մեզ համար վերանորոգիչ պահ էր աղոթել ու զԱստված պաշտել անձերու հետ, որոնց երկյուղածությունը թերևս պարզ կթվի արտաքինապես, սակայն, ներքնապես ունին խորունկ հավատք: Մինչ այդ բազմահազար հավատացյալները միաբերան կերգեին «Հավատամք»-ն ու «Հայր մեր»-ը, մեր հոգիները լեցվեցան ուրախության արցունքներով: Կենդանի հավատացյալները միացյալ ոգիով կխոստովանեին իրենց կենդանի Աստվածը: Ձեզ կվստահեցնենք թե երբ մենք կվերադառնանք մեր տուները, պիտի պատմենք մեր այս փորձությունը մեր ժողովուրդին:

Նորին Արքայություն Պիմեն Պատրիարք, անցնող քանի մը օրերու ընթացքին մենք առիթը ունեցանք Ձեզ ճանչնալու ու նաև մի քանի Ձեր միտրոպոլիտներեն և եպիսկոպոսներեն, հատկապես միտրոպոլիտ Յուվենալը, կարող ու ազնիվ առաջնորդը, Օդեսայի Աերգեյ միտրոպոլիտը, որը ամեն օր մեզ հետ եղավ ու ջանաց մեզի օգտակար ըլլալ, թեև, լեզվական դժվարությանց պատճառով կարելի չէր իր հետ ավելի մտտեն խոսիլ: Նույնպես, հայր Ագաթանգեղոսը ու նաև չափազանց կարող Ձեր պատվական թարգմանը:

Նորին Արքայություն Պատրիարք Պիմեն, Դուք ռուս մեծ ժողովուրդի մեծ առաջնորդն եք: Արտասահմանի ընդհանուր օրթոդոքս եկեղեցին կնայի Ձեզի՝ սպասելով առաջնորդություն: Ընդհանուր քրիստոնյա աշխարհը կհետևի Ձերդ Արքայության քայլերուն: Ներկայի երիտասարդությունը կրոնական առաջնորդություն կակնկալե ու կպահանջե իսկապես հոգևոր ու իմացական առաջնորդություն: Կան քազմաթիվ ընկերային ու կրոնական հարցեր, որոնք իսկապես կտառապեցնեն մարդկությունը, ինչպես են, աղքատությունը, պատերազմը, ցեղասպանությունը, ցեղային խտրականությունը, աշխարհի բրնակչության աճման ու անոր արգիլման մասին առնված միջոցներու նկատմամբ կրոնական կեցվածքը քրիստոնյա եկեղեցիներուն, էկումենիկ շարժումը և այլն:

Մենք վստահ ենք որ Ձերդ Արքայության ու Ամենայն Հայոց կաթողիկոսի միջև տիրող եղբայրական ու համագործակցական ոգին իսկապես պիտի նպաստե մեր եկեղեցիներու պայծառության ու կենդանության:

Ուստի, այս պաշտոնական պահուն հանուն մեր պատգամավորության մեր շնորհակալությունը կհայտնենք Ձերդ Արքայության ու ռուս օրթոդոքս եկեղեցվո այս գեղեցիկ առիթը մեզի ընծալելուդ համար: Ու դարձյալ հանուն մեր պատգամավորության Ձեր և Ամենայն Հայոց կաթողիկոսի սուրբ Աջերը և համբորեն, մաղթելով Ձեզ քաջառողջություն ու երկար կյանք:





**ԱՄՆ-Ի ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
(Օգոստոս 28—սեպտեմբեր 18)**

Օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 18-ը ողորկ արավոսլավ եկեղեցու հրավերով Սովետական Միությունն այցելեց ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի պատվիրակությունը:

Սովետական Միության եկեղեցիների պատվիրակության կազմում էր Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ գերաշնորհ տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը:

Այս այցելության ղեկավարական նպատակներն էին.

ա. Ամրապնդել երկու երկրների եկեղեցիների հարաբերությունները.

բ. Անցկացնել աստվածաբանական խորհրդակցություններ.

գ. Ավելի մոտիկից ծանոթանալ երկու երկրների եկեղեցիների ավանդությունների բազմազանությանը:

Այցելության ընթացքում պատվիրակության անդամները Մոսկվայում հերկա եղան ողորկ արավոսլավ եկեղեցու կրոնական արարողություններին, ինչպես նաև Մոսկվայի Մկրտչական համայնքի պաշտամունքներին:

Պատվիրակության անդամները, բաժանվելով մի քանի խմբերի, այցելեցին Լենինգրադ, Կիև, Մինսկ, Երևան և Էջմիածին, Թբիլիսի, Ռիգա, Տալին, Վլադիմիր և Սուգդալ, Իրկուտսկ, Լվով և Բոլան, Նոպոսիբրսկ, Օդեսա, Պսկով, Սմոլենսկ, Տուլա, Խարկով: Նրանք շեղմ ընդունելություն գտան Սովետական Միությունում գործող տարբեր քրիստոնեական եկեղեցիների կողմից՝ առավել սերտացնելով իրենց Էկումենիկ փոխադարձ հարաբերությունները:

Պատվիրակության անդամները ծանոթացան նաև Սովետական Միության հասարակական-մշակութային կյանքին, այցելեցին մի շարք թանգարաններ, հանդիպումներ ունեցան Մոսկվայի համալսարանի և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի մի խումբ գիտնականների հետ:

Սեպտեմբերի 4—7-ին և 16—17-ին ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի պատվիրակության և Սովետական Միության եկեղեցիների ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ խորհրդակցական մի ժողով: Ժողովի գլխավոր թեման էր Ե. Հ. Խ.-ի առաջիկա 5-րդ համագումարի թեման՝ «Հիսուս Քրիստոս ազատագրում է և միացնում»: Խորհրդակցության նպատակն էր՝ փոխադարձ հասկացողությամբ ուսումնասիրել այդ նյութը Եկուվենիկ արդիական ոգով:

Խորհրդակցությունը սկսվեց Մոսկվայի և համայն Ռուսիո Ն. Ս. Պիմեն Պատրիարքի բացման խոսքով: Խորհրդակցության ընթացքում կարդացվեցին վերոհիշյալ նյութի շուրջ զեկուցումներ:



Մի պահ ժողովից

Հայաստանյայց եկեղեցու կողմից զեկուցումով հանդես եկավ տ. Արսեն եպս. Բերբերյանը: Նրա զեկուցման նյութն էր՝ «Հիսուս Քրիստոս ազատագրում և միացնում է, որի շնորհիվ կարող է լինել խաղաղություն ամբողջ աշխարհում»:

«Մեղքերից ազատագրվելու համար,—ասաց զեկուցողը,—քրիստոնյայի համար կա մի այլ ճանապարհ. դա ծառայության կամ զոհաբերության ուկրոնքն է. Պողոս առաքյալի պատգամը միանգամայն դիպուկ է. «Այլ սիրով ծառայեցեք միմեանց» (Գաղ. Ե 13):

Հայտնի իրողությունն է, որ Քրիստոսի փառքը հոչակվել է ամբողջ աշխարհով մեկ՝ մարդկությանը նրա անձնագրի ծառայությամբ: Քրիստոսի անձի մեծության չափանիշը նրա խոնարհության, զոհաբերման, նվիրաբերելու և ծառայելու սկզբունքի մեջ է: Այդպես ներկայացավ նա մարդկությանը. «Բայց ես եմ ի միջի ձերում իբրև սպասաուր» (Ղուկ. ԻԲ 27): Քրիստոնյայի համար չկա այլ ճանապարհ ազատագրման, եթե նա պատրաստ չէ զոհաբերման և իր շրջապատին սիրով ծառայելու միջոցով իմաստավորելու իր կյանքը: Արդ, մենք՝ այսօրվա քրիստոնյաներս, ինչպե՞ս կարող ենք վերաբերվել այս խնդիրներին, դրական արդյունքների հասնելու համար: Բախարար չէ տեսականորեն, խուսրով ու մտածումով միայն հոչակել Քրիստոսի

Ալվեսարանի այժմեությունը և նրա քարոյական պատվիրանների կենտրոնացումը անհրաժեշտությունը, այլ էականը այդ բոլորը գործնականապես կյանքի կոչելն է մեր անհատական և ընկերային կյանքի մեջ»:

Վերջում եզրակացնելով, առաջ սրբազան հայրը. «Ուրախ ենք հատուտեղի, որ այսօր Քրիստոսի եկեղեցին ամբողջ իր հեղինակությամբ և ուժով մասնակցում է Խաղաղության պաշտպանության համաշխարհային խորհրդի և այլ միջազգային խաղաղության արսուղապանության կազմակերպությունների աշխատանքներին և ներդրում իր ջանքերը, որպեսզի խաղաղությունը իրականացվի ամբողջ աշխարհում:

Մենք հավատում ենք ազգությունների և պետությունների բարեկամության և գործակցության: Դրա ապացույցն է մեր հանդիպումը այսօր այստեղ, այս սուրբ վայրում:

Գալով Հայաստան աշխարհից, ուր առաջին անգամ Արարատ լեռան վրա կանգնած Նոյան տապանից խաղաղության աղավնին արձակվեց և հույսն ու հավաստիացումը բերեց վտանգի վերացման, այսօր խաղաղության այդ սիմվոլը մաղթանք դարձած իմ շրթներին, ես միացնում եմ իմ ձայնը բոլոր խաղաղասեր մարդկանց ձայնին և աղոթում, որ Քրիստոսի միության և եղբայրության պատգամը, իրեն նշանաբան մեր եկեղեցիների առաքելության, քայլ առ քայլ ազատագրի աշխարհի բոլոր ժողովուրդներին իրենց մեղքերից և չարիքի կապանքներից, որպեսզի նրանք, սրբված և ազնվացած, յնդհանուր գետին գտնեն միության, խաղաղության և երջանկության պայմաններում»:

Քննարկումները տեղի ունեցան գործարար, համերաշխ մթնոլորտով: Իրանք կենտրոնացված էին «Հիսուս Քրիստոս իրեն աղբյուրը ազատության և ջատագովն ու ներշնչողը միության» քրիստոսաբանական թեմայի միջև:

«Հիսուս Քրիստոս ազատագրում է» թեմայի քննարկման ընթացքում սրտշ ուշադրությունն նվիրվեց մարդկային իրավունքների հարցին: Ընդհանուր համաձայնություն գոյացավ այն բանի շուրջ, որ քրիստոնեական հեռանակարով մարդկային հիմնական իրավունքները աստվածային պարզե են: Դրանք պետք է նվիրագործվեն քրիստոնյա համայնքներում և ընկերության մեջ:

Քննարկումների ժամանակ զգացվում էր, որ դեռ կարիք կա հետազոտելու ուղղափառ վարդապետության և բողոքական հասկացողության աստվածաբանության տարբերությունները և նմանությունները:

Ազգերի միջև խաղաղության համար քրիստոնեական ծառայության հարցի շուրջ տեղի ունեցած քննարկումների ընթացքում մասնակիցները գոհություն հայտնեցին ամենակարող Աստծուն՝ սովետա-ամերիկյան հարաբերությունների այժմյան առաջադիմության համար, և հույս հայտնեցին, որ դա կծառայի ամբողջ աշխարհի խաղաղության գործին:

ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի և Սովետական Միության եկեղեցիների միջև ապագա հարաբերությունների մասին քննարկման ժամանակ եղան մի քանի գործնական առաջարկներ:

ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի հրավերով Սովետական Միության եկեղեցիների ներկայացուցիչների մի պատվիրակություն պիտի այցելի ԱՄՆ, 1975 թ. փետրվար-մարտ ամիսներին:



ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ
Ժ Ա Մ Ա Ն Ո Ւ Մ


Սույն թվականի սեպտեմբերի 18-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Մոսկվայից պաշտոնական այցով Մայր Աթոռ ժամանեց Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի ներկայացուցիչներից քաղկացած մի պատվիրակություն, որին գլխավորում էր հայր դոկտ. Դեվիդ Հանթըրը:

Պատվիրակության կազմում էին՝ Վաշինգտոնի մեթոդական եկեղեցու առաջնորդ տ. Ջեյմս Եպիսկոպոս Մաթիուսը, աֆրիկյան մեթոդական եկեղեցու առաջնորդ տ. Քլիմթըն Եպիսկոպոս Հոգարդը, հույն օրթոդոքս եկեղեցուց հայր Ռոբերտ Ստեֆանոպոլոսը և ամերիկահայ էկումենիկ գործերի վարիչ տ. Մամբրե քահանա Գուգույանը:

Ռուս պրավոսլավ եկեղեցու կողմից պատվիրակությանը ուղեկցում էր արտաքին հարաբերությունների բաժնի աշխատակից ա. Վիտալի քահանայապետը:

Հարգարժան հյուրերը մաս էին կազմում Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի շուրջ 20 հոգուց քաղկացած այն մեծ պատվիրակությանը, որը ռուսաց եկեղեցու հրավերով գտնվում էր Մոսկվայում՝ մասնակցելու Սովետական Միության եկեղեցիների և Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի ներկայացուցիչների միջև սեպտեմբեր ամսվա սկզբին կայացած աստվածաբանական այն համատեղ խորհրդակցությանը, որի գլխավոր թեման էր «Հիսուս Քրիստոս ազատագրում է և միացնում», և որը հատկապես կազմակերպվել էր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի առաջիկա հինգերորդ համաժողովին նախապատրաստվելու նպատակով:

Սեպտեմբերի 18-ին, ժամը 15-ին, Երևանի օդանավակայանում քարձրաստիճան հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Հայց. եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն Եպս. Բերբերյանը, վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ Եպս. Սերայդարյանը, տ. Հմայրակ ծ. վրդ. Ինդրյանը, տ. Արիս ծ. վրդ. Ծիրվանյանը և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Ծաֆրազյանը:



Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Կ. Պոլսի ամենապատիվ պատրիարք տ. Շմորոք արքեպ. Գալատրամբ, հայր որկա, Դեպիո Համբրը՝ շրջապատված Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի մերկայացուցիչներով և Մայր Աթոռի սրբաբաններով

[Handwritten notes in blue ink, partially illegible]

Նույն օրը, երեկոյան, պատվիրակությունը ժամանեց ս. Էջմիածին և առաջնորդվեց Մայր տաճար՝ աղոթելու Փրկչի Իջման ս. սեղանի առաջ:

Այնուհետև Մայր Աթոռի մեծարգո հյուրերն առաջնորդվեցին Վեհարան, ուր Ամենայն Հայոց Հայրապետն Իր ընդունարանում ջերմորեն ընդունեց և բարի գալուստ մաղթեց նրանց:

Ընդունելությանը ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կ. Պոլսի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Շնորհք արքեպ. Գալստյանը, Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը, Ինչպես նաև Հայաստանյայց եկեղեցու ներքին թեմերի թեմակալ առաջնորդներ և Մայր Աթոռի բարձրաստիճան հոգևորականներ: Հայոց Հայրապետի և պատվիրակության հարգարժան անդամների միջև տեղի ունեցավ սիրալիորդույց՝ եղբայրական ջերմ մթնոլորտում:

Ավելի ուշ Ամերիկայի քույր եկեղեցիների ներկայացուցիչները այցելեցին Մայր տաճարի եկեղեցական արվեստների թանգարան, Հին Վեհարանի հայրապետական թանգարան, հոգևոր ճեմարան, ուր հանդիպում ունեցան ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանի, ճեմարանավարտ սարկավագների և ուսանողության հետ:

Ապա Մայր Աթոռի նոր վերակառուցված «Ղազարապատ» շենքի սեղանատանը, ի պատիվ հյուրերի, տրվեց միաբանական ընթրիք՝ տ. Շնորհք պատրիարքի գլխավորությամբ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Սեպտեմբերի 14-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, մեծարգո հյուրերը, տ. Արսեն, տ. Գևորգ եպիսկոպոսների և Մայր Աթոռի մի շարք դեկավար աշխատողների ուղեկցությամբ, այցելեցին Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, ուր նրանց հարգալիոր մեծարանքով ընդունեց Մատենադարանի տնօրենի տեղակալ Բարգեճ Զուգաւորյանը:

Ժամը 11-ին հարգարժան հյուրերն ուղևորվեցին ս. Գեղարդ վանք: Ծանապարհին նրանք այցելեցին Գառնիի վերականգնվող Ռեթանոսական տաճար, ուր ընդունվեցին տաճարի վերականգնման աշխատանքները դեկավարող պրոֆ. Ալ. Սահինյանի կողմից, որը Ռեյլենիստական շրջանից մնացած պատմական սույն մեծարժեք հուշարձանի մասին տվեց մանրամասն ծանոթություններ:

Այնուհետև բարձրաստիճան հյուրերն այցելեցին ս. Գեղարդ վանքը: Վանական միաբանության անդամներից տ. Բագրատ արք. Գալստյանը սեծարգո հյուրերին մանրամասն տեղեկություններ հաղորդեց ս. Գեղարդ վանքի մասին, որպես Հայաստանում 13-րդ դարի պատմական հայտնի մեցաստանի և հին հայ հոգևոր մշակույթի ծաղկուն կենտրոններից մեկի:

Վերադառնալով Երևան, պատվիրակության անդամները, մի փոքր հանգստանալուց հետո, այցելեցին Երևանի Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան և իրենց լուտ աղոթքով մի պահ ոգեկոչեցին հիշատակը Մեծ եղեռնի թյուրավոր հայ նահատակների, որոնք զոհարբեցին իրենց կյանքը՝ հանուն իրենց քրիստոնեական հավատքի և հայրենիքի:

Այնուհետև Մայր Աթոռի հյուրերը եղան Երևանի ս. Զորավոր եկեղեցում, ապա այցելեցին վերակառուցվող ս. Սարգիս եկեղեցին:



ԿԻՐԱԿԱՄՏԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ, ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ ՄԱՅՐ ՏԱՄԱՐՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, պատվիրակության անդամները Մայր տաճարում ներկա եղան կիրակամտի ժամերգությանը: Ժամերգությանը ներկա էին ազգիս հայոց Վեհափառ Հայրապետը և Կ. Պոլսի հայոց ամենապատիվ պատրիարք տ. Ծնորհք արքեպ. Գալստյանը:

Այնուհետև տեղի ունեցավ Էկումենիկ պաշտամունք, որին երգերով, աղոթքներով և ս. Գոռոց ընթերցումներով իրենց մասնակցությունը քերեցին Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի քարծրատիճան ներկայացուցիչները:



Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և հայր դոկտ. Դեվիդ Համթըրը Վեհարանում

Մայր տաճարում կատարված Էկումենիկ սույն արարողությամբ մի անգամ ևս արտաբայությեց քրիստոնեական եկեղեցիների միջև հաստատված և օրավուր անող ու ամրապնդվող եղբայրական սիրո և համագործակցության այն քարի ոգին, որով հատկանշվում են մեր ժամանակները:

Կիրակամտի ժամերգությանը և Էկումենիկ աղոթքին հաջորդեց հյուրերի պատվին կազմակերպված հոգևոր համերգ:

Մայր տաճարի երկսեռ երգչախումբը, երգեհոնահար Աևոն Աքրահամյանի ղեկավարությամբ, կատարեց հատվածներ հայկական, ռուսական և արևմտաեվրոպական դասական հոգևոր երաժշտությունից:

Հոգևոր համերգի ընթացքում մեներգներով հանդես եկավ նաև սիրված և տաղանդավոր երգչուհի Գոհար Գասպարյանը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին, կիրակի օրը, Մայր տաճարում, ս. Խաչի տոնի առթիվ, մատուցվեց հայրապետական ս. պատարագ:

Առաքյալու ժամը 10-ին Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ Կ. Պոլսի հայոց ամենապատիվ տ. Շնորհք պատրիարքի, Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի բարձրաստիճան հոգևոր ներկայացուցիչների և Մայր Աթոռի միաբանության, առաջնորդվեց Մայր տաճար՝ օրվա տոնի առթիվ մատուցելու ս. պատարագ:

Վեհարանից դեպի Մայր տաճար երկարող շքերթի երկու կողմերում հավատացյալների խումբերամ բազմությունը տոնական պայծառ հայացքներով և խանդավառ արտահայտություններով դիմավորում էր Հայոց Հայրապետին, Մայր Աթոռի թանկագին հյուրերին և հոգևորականաց դասին:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը «Քրիստոս Աստուած մեր, տուր մեզ նշան յաղթող սուրբ զխաչ քո» քնարանով՝ ողջունելով նաև Մայր Աթոռում ներկայությունը Կ. Պոլսի հայոց տ. Շնորհք սրբազան պատրիարքի, ինչպես նաև Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի հարգարժան պատվիրակության:

Ի պատասխան Նորին Սրբության ողջունի և բարիգալստյան սիրալիր խոսքերի, դպտ. Դևիդ Հանթըրը մախ իր և պատվիրակության անդամների անունից սրտագին շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին եղբայրական ջերմ ընդունելության և բարի մաղթանքների համար ու ապա ասաց.

«Մենք մեծ հաճությամբ եկանք Սովետական Միություն: Խորապես նրախտապարտ ենք ռուս եկեղեցուն, որ հրավիրեց մեզ, և այս առթիվ բախտավորություն ունեցանք այցելելու նաև ս. Էջմիածին:

Մենք՝ Ամերիկայի 18 տարբեր եկեղեցիների հոգևոր ներկայացուցիչներս, եկել ենք Սովետական Միություն՝ մոտիկից հաղորդակից դառնալու ձեր երկրի եկեղեցիների կրոնական կյանքին և աշխատանքին: Մեր և ձեր եկեղեցիների միջև կան մի շարք տարբերություններ, սակայն, հմնաստակ այս բոլորին, երբ նայում ենք ձեր աչքերին, Սովետական Միության ժողովուրդների և մասնավորապես ձեր՝ հայերի աչքերին ս. Էջմիածնում, զգում ենք ինչ-որ ներքին, հոգեկան միություն, այն միությունը, որ գալիս է Հիսուս Քրիստոսի կողմից Աստուծո շնորհքով:

Մենք՝ ամերիկացիներս, շատ առիթներ ենք ունեցել Ամերիկայում հայերի հետ շփվելու և ճանաչելու նրանց: Այսօր եկել ենք Մայր Աթոռ՝ առավել յավ ճանաչելու և սիրելու ձեզ և մեր աղոթքները միացնելու հայ եկեղեցու պաշտամունքներին:

Թող Աստված օրհնի ձեզ»:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՂԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Ս. պատարագի ավարտին Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվեց Վեհարանի գահասրահ, ուր տեղի ունեցավ ընդունելություն:

Գահասրահում ներկա էին տ. Շնորհք սրբազան պատրիարքը, քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականները, Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնեությունը, սփյուռքահայ բազմաթիվ ուխտավորներ և հավատացյալ ժողովրդի մի բազմություն:

Դաճապարհում էր նաև Հայկական ՍՍՀ Միջհատրների սովետին ևտրն-
թեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Այս հանդիսավոր առիթով, առաջինը խոսք առնելով, տ. Ծնորհք սրբա-
զան պատրիարքն իր հակիրճ ուղերձի մեջ իր խոր գոհունակությունն ու ե-
րախտագիտությունը հաստնեց այն երջանիկ պատեհության համար, որ շնորհ-
վում էր իրեն վերստին ուխտի գալու և Էջմիածին և իր հոգևոր եղբայրների
հետ միասին աղոթելու Մայր տաճարում, Փրկչի Իջման ս. սեղանի առաջ:
Ապա Ա. Պոլսի ամենապատիվ պատրիարքն իր անխառն հիացումն արտա-



Մայր Աթոռի հյուրերը վեհարանում

հայտեց ի տես այն քարզաված կյանքի, որով առավել զորանում և կազմա-
կերպվում է այսօր Հայաստանյայց եկեղեցին մայր հայրենիքից ներս, իր
վերածնված ժողովրդի ծոցում՝ իմաստուն դեկավարության ներքև Ամենայն
Հայոց շնորհազարդ Հայրապետի, որի եկեղեցաշեն բազում նախածեղնու-
յուններն արժանի են համընդհանուր գնահատանքի: Իր խոսքի վերջում տ.
Ծնորհք պատրիարքը արտագին բարեմաղթություններ արեց հայ եկեղեցու
անասանության ու պայծառության և նրա ազգընտիր գահակալի կենաց ա-
րեվշատության համար:

Այնուհետև ելույթ ունեցավ պատվիրակության անդամներից հույն օրթո-
դոքս եկեղեցու ներկայացուցիչ տ. Ռոբերտ Ստեֆանոպոլսոսը՝ բնութագրե-
լով հայ եկեղեցին որպես քրիստոնեական մշակույթով և ավանդություննե-
րով հարուստ արևելյան հնագույն եկեղեցիներից մեկը, որն իր պատմության
ընթացքում բազում ծանր հարվածների և փորձությունների ենթարկվելուց
հետո կարողացել է պահել իր հավատքի ամրությունն ու կենսունակությունը՝

անճկուն կամքի և ոգու արհուրյան սքանչելի օրինակ հանդիսանալով քրիստոնյա աշխարհի առաջ: Իր ելույթի մեջ հույն ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչը, իր ջերմ գնահատանքն արտահայտելով Հայոց Հայրապետի անձի և գործի նկատմամբ, նշեց, որ հայ եկեղեցին այսօր բախտավոր պետք է զգա իրեն՝ իբրև դեկավար ունենալով համաքրիստոնեական չափանիշով ճանաչում և հեղինակություն վայելող այնպիսի հոգևոր մի գործչի, ինչպիսին է Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Ընդունելության ավարտին օրհնության ջերմ խոսքով հանդես եկավ Հայոց Հայրապետը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԺԱՇԿԵՐՈՒՅԹ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, ի պատիվ պատվիրակության անդամների, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Սեղանը վերածվեց ճշմարտապես քրիստոնեական սիրո սեղանի: Սըրտագին ու ջերմ մթնոլորտում փոխանակվեցին ողջույնի ու բարիգալստյան բաժակաճառեր:

Տ. Շնորհք սրբազան պատրիարքն առաջին բաժակն առաջարկեց խմել Մայր Աթոռ ս. Էջմիածնի անասանության և Հայոց Հայրապետի կյանքի արևշատության կենցաղը:

Այնուհետև Հայոց Հայրապետը բաժակ առաջարկեց օրվա պատվավոր հյուրերի՝ Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի պատվիրակության անդամների կենցաղ՝ մաղթելով նրանց փայլուն հաջողություններ իրենց հույսովոր առաքելության ճանապարհին՝ համրապնդումն քրիստոնեական եկեղեցիների եղբայրական համագործակցության ու բարեկամության և ի փառս Քրիստոսի ընդհանրական սուրբ եկեղեցու:

Ի պատասխան Հայոց Հայրապետի բարեմաղթությունների, պատվիրակության անդամներն առանձին-առանձին ելույթ ունեցան և շնորհակալություն հայտնեցին իրենց նկատմամբ ցուցաբերված սրտաբաց ընդունելության համար՝ նշելով, որ Մայր Աթոռի հյուրընկալ հարկի տակ կարճ ժամանակի ընթացքում ստեղծված հոգևկան ջերմ հաղորդակցությունը լավագույն սկիզբ պիտի ծառայի հայ եկեղեցու և իրենց եկեղեցիների միջև եղբայրական սիրայի բարաբերությունների հաստատման և հետագա լայն գործակցության:

Հայոց Հայրապետը ջերմ սրտով բաժակ առաջարկեց նաև ընդունելությանը ներկա պրն. Ս. Գասպարյանի և, ի դեմս նրա, հայրենի բարեխնամ և առավարության կենցաղ՝ վեր հանելով այն թանկագին օժանդակությունն ու աջակցությունը, որ ցույց է տվել հայրենի կառավարության ներկայացուցիչը Մայր Աթոռում կատարվող եկեղեցական, մշակութային, շինարարական աշխատանքներում:

ՀՐԱԺԵՇՏ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՏ ԵՎ ՄՆԿՆՈՒՄ

Ժամը 18-ին Վեհարանում Հայոց Հայրապետի և պատվիրակության հարգելի անդամների միջև տեղի ունեցավ եղբայրական սիրայի տեսակցություն, ուր շոշափվեցին Հայաստանյայց եկեղեցու և ամերիկյան քույր եկեղեցիների միջև հետագա եկուսենիկ գործակցության մի շարք հարցեր:

Ապա Հայոց Հայրապետը ջերմ մթնոլորտում ողջագուրվեց Մայր Աթոռի պատվարձան հյուրերի հետ՝ բարի ճանապարհ մաղթելով նրանց։

Ժամը 19-ին պատվիրակության անդամները, հրաժեշտ առնելով Մայր Աթոռից, մեկնեցին Երևան։

Ոչ երեկոյան Երևանի օդանավակայանում քարձրաստիճան հյուրերին բարի ճանապարհ մաղթեցին տ. Արսեն, տ. Գևորգ եպիսկոպոսները և Պ. Շահբազյանը։

Պատվիրակության անդամները վերադարձան Մոսկվա՝ մասնակցելու Սովետական Միության եկեղեցիների և Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի ներկայացուցիչների միջև գումարված առուվաճառանական խորհրդակցության եզրափակիչ նիստերին։



ՄԱՍԿՎԱ ԼՆԱՐՎԱՅԻՆ ԵՎ ԻՍԿՐԱՎԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հայտնի է դարձրել Վերականգնողական կոմիտեի անդամների միջև անցած հարյուրամյակի օրոպեի առաջին օրը։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հայտնի է դարձրել Վերականգնողական կոմիտեի անդամների միջև անցած հարյուրամյակի օրոպեի առաջին օրը։



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Սեպտեմբերի 1-ին, կիրակի.—4 կիրակի զկնի Վերափոխման. Տօն գիտի սրբուհոյ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Սիփան վրդ. Մխչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ըզրատատան պահեցի» (Բ Տիմ. Դ 8) բնարանով: (Սույն քարոզը տես ստորև):

Ա. պատարագից ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ա. պատարագից հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Վիեննայի հայ եկեղեցու վարչության անդամներին և նրանց տալ իր օրհնությունը:

Սեպտեմբերի 8-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում Անթիլիասի Աթոռի միաբաններ տ. Սուրեն ծ. վրդ. Քաթարոյանը և տ. Սեպուհ վրդ. Սարգիսյանը:

Սեպտեմբերի 7-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում Փարիզի Առևտրի վիճակագրության և խաչ եկեղեցու հոգևոր հովիվ տ. Մաքրոպ բն. ժամկոչյանը:

Սեպտեմբերի 8-ին, կիրակի.—4 կիրակի

զկնի սրբուհոյ Աստուածածնի. Տօն ծերնդեան սրբուհոյ Կուսին Մարիամու յԱՆՆայէ.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս արդ. Գալստյանը:

«Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (շարական) բնարանով:

Ա. պատարագից հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Ամերիկայից և Եվրոպայից եկած հայ ուխտավորների և նրանց տալ իր օրհնությունը:

Սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին Իսպանիայի հասարակական-քաղաքական հայտնի գործիչներ դոն Անտոնիո Գառիգեսը և իր որդին՝ արդյունաբերող դոն Խուան Գառիգեսը:

Հարգարժան հյուրերի և Վեհափառ Հայրապետի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Սույն օրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել կիբանանի, Սիրիայի, ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Կանադայի, Եգիպտոսի Արարական Հանրապետության, Հորդանանի, Եթովպիայի հայկական դպրոցների ուսուցիչներին, որոնք որակավորման բարձրացման դաս-

ընթացներ էին անցնում մայր հայրենի-
քում:

Ջերմ գրույցի ընթացքում Հայոց Հայ-
րապետը օրհնեց և տվեց Իր պատգամը՝
նվիրումով և սրբությամբ շարունակելու
իրենց գովելի աշխատանքները հանուն
հայ մշակույթի և հայապահպանման:

Սեպտեմբերի 10-ին, երեքշաբթի.—Այսօր
Մայր Աթոռ և Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետին այցելեց Սովետական Միու-
թյունում Ռումինիայի Սոցիալիստական
Հանրապետության արտակարգ և լիազոր
դեսպան Գեորգե Քադրուսին և դեսպանու-
թյան առաջին քարտուղար Գեորգե Մի-
կուն:

Հարգարժան հյուրերի և Վեհափառ Հայ-
րապետի միջև տեղի ունեցավ ջերմ գրույց՝
սրտագին մթնոլորտում:

Սեպտեմբերի 16-ին, երկուշաբթի.—Յի-
շատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է
մատուցում տ. Գրիգոր քահ. Ստեփաննոս-
յանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է
հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ցնջեցե-
լոց»:

Սեպտեմբերի 17-ին, երեքշաբթի.—Այսօր
Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին
այցելեցին մի խումբ ամերիկահայեր՝ գլխ-
խավորությամբ Վահն Փաթեյանի:

Սեպտեմբերի 18-ին, չորեքշաբթի.—Այս-
օր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին
այցելեցին Բելրուսի Հ. Բ. Ը. Մ. կազմա-
կերպության 28 անդամներ՝ տկն. Ժակլին
Օգնայանի ղեկավարությամբ:

Նույն օրը Մայր Աթոռ և Վեհափառ Հայ-
րապետին այցելեցին մի խումբ ամերիկա-
հայեր Օճիկ համալսարանի ղեկավարությամբ,
և մի խումբ լիբանանահայեր՝ Անդրանիկ
Մերենյանի ղեկավարությամբ:

Նույն օրը Մայր Աթոռ և Վեհափառ Հայ-
րապետին այցելեցին Ֆրանսիայի Նիցցա

քաղաքից շուրջ 20 ուխտավորներ՝ ղեկա-
վարությամբ Նիցցայի հայոց հոգևոր հովիվ
տ. Տարոն վրդ. Մերենյանի:

Սեպտեմբերի 19-ին, հինգշաբթի.—Այս-
օր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին
այցելեցին խաղաղության պաշտպանու-
թյան մի խումբ ամերիկացիներ՝ Կիլ Գրիմի
ղեկավարությամբ:

Սեպտեմբերի 21-ին, շաբաթ.—Այսօր
Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին
այցելեցին մի խումբ լիբանանահայեր՝ Բիեր
Աթարյանի ղեկավարությամբ:

Սեպտեմբերի 22-ին, կիրակի.—Բ կիրա-
կի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է
մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարո-
զում ուխտավորաբար Մայր Աթոռում գլու-
նըվող տ. Տարոն վրդ. Մերենյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհա-
փառ Հայրապետը:

Սեպտեմբերի 25-ին, չորեքշաբթի.—Այս-
օր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին
այցելեց տաղանդավոր երգեհոնահար
Պերն Ժամկոչյանը (ԱՄՆ), որը համերգ-
ներով գտնվում է մայր հայրենիքում:

Սեպտեմբերի 26-ին, հինգշաբթի.—Այսօր
ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց
Արևմտյան Եվրոպայի հայրապետական
պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ տ.
Սերովքե արքեպ. Մանուկյանը, որը Մայր
տաճարում իր աղոթքն ու ուխտը կատա-
րելուց հետո ընդունվեց Ամենայն Հայոց
Վեհափառ Հայրապետի կողմից:

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ.—Այսօր
ուխտավորաբար Մայր Աթոռ և Վեհափառ
Հայրապետին այցելեց Դեսարոյտի հայոց ս.
Հովհաննես Կարապետ եկեղեցու հոգևոր
հովիվ տ. Փստեմ Ծ. վրդ. Ավետիքյանը:

**Տ. ՄԻՓԱՆ ՎԱՐՈՂԱՊԵՏ ՄԽՍԵԱՆԻ ՔԱՐՈՋԸ
ՄԱՅՐ ՏԱԾԱԿՈՒՄ**
(1 սեպտեմբեր 1874 թ.)

«Զհաստան պահեցի»
(Բ Տիմ. 7 8)

Պողոս առաքյալ իր կյանքի վերջավորության կզրնամիտարության և ինքնագոծության կերպ մը ունի: Երանադատներ կպարծենան իրենց վայելած հաճույքներով, գրագետներ իրենց գրական վաստակներով, բժիշկներ իրենց կատարած հաջող գործողություններով, արվեստագետներ և գիտնականներ իրենց ատելծագործություններով և գյուտներով, որոնց շնորհիվ կրցած են մարդկության բերել կտոր մը լույս, ափ մը բարիք, հագեցնելու համար կյանքի ծարավը:

Ամեն մարդ իր կյանքի վերջավորության ինքնամիտարության և ինքնագոծության կերպ մը ունի: Երանադատներ կպարծենան իրենց վայելած հաճույքներով, գրագետներ իրենց գրական վաստակներով, բժիշկներ իրենց կատարած հաջող գործողություններով, արվեստագետներ և գիտնականներ իրենց ատելծագործություններով և գյուտներով, որոնց շնորհիվ կրցած են մարդկության բերել կտոր մը լույս, ափ մը բարիք, հագեցնելու համար կյանքի ծարավը:

Պողոս առաքյալ հառաջացած տարիքին երբ կնայի իր անցյալի կյանքին, որ իրապես մեծ տաճնապներով և ոգորումներով լեցուն էր, մեկ պարծանք ունի միայն թե կրցած է պահել իր հավատքը: Կյանքը առած էր իրմե իր ճառագայթուն մանկությունը, իր երիտասարդության կրակները, սակայն իրեն թողած էր իր հավատքը՝ ամենին թանկագին քանը իր կյանքին:

Հավատքը իրեն համար շարունը չէ միայն անցյալին ապագային երկարող ճշմարտություններու, այլ հայտնություն մը, ապրող իրականություն մը: Հավատքը իրեն համար վարդապետություն մը չէ միայն, այլ ալմանդ մը, պատգամ մը անցյալին ապագային գացող: Իրական հավատքը շարքը չէ մտածումներու, որոնք ամեն եղանակներուն կրնան փոխվիլ մարդոց հագած զգեստներուն նման: Ետներու համար իրենց հավատքը կնմանի թշուրհի բույնի՝ ամեն եղանակի շինվելու և քանդվելու համար:

Առանց ճշմարիտ հավատքի չկա իդեալ, չկա մեծագործություն: Բոլոր մեծ գործերու և մեծ իրագործումներու հեղինակները հավատքի մարդեր են եղած: Առանց այդ ներքին կայծին, առանց այդ ներշնչումին, մարդիկ ինչ աուպարեզի ալ պատկանին, կնւնցին ջուրից երեսը ձիացող տաշեղներու՝ որոնք գուրկ են հպատակելու և հետևաբար ուղղութենն մը:

Սուրբ Գիրքը լեցուն է քրիստոնական

վարդապետություններու ճշմարտություններով: Անոր մեջ մասնավոր կերպով շեշտը ված է հավատքի գորությունը, ինչպես տեսալես կնոջ, (Մատթ. Թ 22), երկու կույրերու (Մատթ. Թ 29) բժշկություններու պարագային: Որեմն առանց կատարյալ հավատքի չկա բժշկություն ոչ մարմնի և ոչ ալ հոգիի: Առանց հավատքի, հույսի և սիրտ կյանքը դատարկություն է, հուսահատություն և մահ: Քրիստոնեա մը ամեն բանն առաջ պետք է հավատք ունենա ձուտելու համար կատարելության: որովհետև հավատքն է որ անհատը պիտի առաջնորդե դեպի հավիտենականության և անմահության: Ով որ չի հավատար հավիտենականության, արդեն իսկ մեռած է հոգեպես և քարոյապես:

Հին Կտակարանն կիմանաց թե Աբրահամ գնահատվեցավ և օրհնվեցավ Աստուծո կողմէ, շնորհիվ իր ունեցած մեծ հավատքին: Ան իր ունեցած կատարյալ և վեհ հավատքը պահելով փոխանցեց իր զավակներուն և իր սերունդը աճելով քաղմացավ: Աբրահամ հավատքի սիրույն հանձն առավ իր միակ զավակը զահել Աստուծո:

Հայ ժողովուրդն ալ ունեցավ իր մեծ հավատացյալն ու սուրբը՝ Գրիգոր Լուսավորիչ: Ան հավատքի մարմնացումն էր: Կրկգար թե առանց ճշմարիտ Աստուծո հավատքին կարելի չէր ժողովուրդը առաջնորդել դեպի հոգիի փրկության ուղին: Լուսավորիչ իր հավատքին գորությամբ կրեց քաղմաթիվ անտանելի չարչարանքներ և ի վերջո հաղթական դուրս ելավ և լուսավորեց Հայաստան աշխարհը և մեռք այդ օրեն սկսյալ հոգեպես փարեցանք քրիստոնեության և ազգ և եկեղեցի իրար միացան:

Ավետարանի հասկացողությունը առաջին օրեն հայ ժողովուրդին մեջ այնքան իրական և ուշագրավ եղավ որ ուղղակի սքանչացում միայն կրնա առթել: Հայը սկսավ հառաջդիմել հավատքով և ուղղափառ վարդապետությամբ: Եկեղեցին ունեցավ մեծ սուրբեր, որոնք իրենց հավատքը պահելու համար նահատակվեցան: Մինչև է դար ունեցանք մեծ թիվով օտար սուրբեր, ինչ որ ցույց կու տա թե հայ եկեղեցին կրղ-

զիացած եկեղեցի մը եղած չէ, այլ մաս կազմած է և կկազմե ընդհանրական և մեկ եկեղեցին:

Եկեղեցակազմեր մեծ ներդրումն կունենային ս. Գիրքը ժողովուրդին քացատրելու և քարոզելու համար, որովհետև սեփական գիր գոյություն չուներ տակալին: Սուրբ Մեսրոպ Մաշտոց մեծապես տառապեցավ մինչև որ կրցավ հորինել հայերեն նշանագրերը: Ան հավատքի մարդ էր. կհավատար որ Աստուծո օգնությամբ պիտի կարենար գտնել հայերեն գիրերը: Ուստի հարատևելով իր աշխատանքին մեջ՝ լուսավորեց հայ ժողովուրդին միտքը և զայն փրկեց ձուլումե:

Շուտով դարոցներ քաղվեցան և մայրենի լեզուն սկսավ ուսուցվիլ հայ մանուկներուն: Հայոց մշակույթը մեծ թափ ստացավ ս. Գրքի հայերեն թարգմանությամբ: Պատաստվեցան ծիսական և այլ գիրքեր: Ունեցանք ազգային ավանդույթներ և ընտանեկան սրբություններ որոնք սերունդն սերունդ փոխանցվելով հասան մինչև մեր օրերը: Եկեղեցի և ազգություն միասին՝ հառաջացան և մեկը մյուսին պաշտպան կանգնեցավ: Այն անհատը որ քաժնվեցավ իր եկեղեցվո ուղղափառ հավատքեն, շուտով կորսվեցավ հոգեպես և բարոյապես՝ ձուլվելով օտար ժողովուրդներու մեջ:

Հայց. եկեղեցվո նվիրապետական դրությունը գորացած է ազգային մտատիպարի, քարքերու, սովորություններու, լեզվի և գրականության, կյանքի իմացական և բարոյական ներգործություններու, մտքի և արվեստի ազդակներուն շնորհիվ: Կրոնի զգացումն ու ազգության գաղափարը փոխադարձաբար զիրար ամրապնդող և իրարու հետ շաղախյուսված քարոյական զույգ ուժերն են եղած մեր դարավոր կյանքի իրականության մեջ: Հայ եկեղեցին քրիստոնեական առաջին դարեն իսկ եղած է իմացական և բարոյական կյանքի միակ կեդրոնը իր ժողովուրդին: Հավատքի և ազգության իդեալը կանուխեն ճանչցած են զիրար և մեկը մյուսով ոգևորված և ամբողջացած է: Մեր եկեղեցին եղած է զուտ ազգային եկեղեցի և չկա այն խիստ տարորոշումը ե-

կեղեցվո և ազգին միջև ինչպես ուրիշներ ընդհանուր կերպով կընեն:

Հայ եկեղեցին այն կազմակերպությունն է որ հայ հոգին շնորհիվ իր ուղղափառ հավատքին կրնա ինքզինք ապահով պահել արտաքին ազդեցություններ և փտանգներե: Առանց Հայց. եկեղեցվո հավատքին և ջերմ զգայնության մե՞ք չենք կրնար պահել մեր ազգությունը:

Հայ եկեղեցվո գաղափարը այն ոգին է, որ դարեր շարունակ ապրեցավ ազգին մեջ և օգնական եղավ անոր իր ամենն աղետալի և ճգնաժամային վայրկյաններուն: Հայրապետներ մեծապես պայծառացուցին մեր եկեղեցին, ստեղծելով սեփական գիր, ազգային գրականություն և մշակույթ: Գրվեցան եկեղեցական երգեր, շարականներ և աղոթքներ, որոնք մեր եկեղեցվո անգին գանձերը կկազմեն մինչև այսօր: Հայը կըրցավ իր սրբությունները պահել, քանի որ գիտցավ գոհվիլ իր հավատքին համար:

Հայոց պատմության մեջ հայրենիքը չէ ունեցած այն վերելքը որ այսօր ունի, շնորհիվ սովետ մեծ պետության և հայ ժողովուրդի պայծառ մտքին: Առանց հայրենիքի գոյության սփյուռքի հայությունը շուտով կկորսվի:

Այսօր դարձյալ յուրաքանչյուր գիտակից հայ հպարտ է Լուսավորչի գահին վրա տեսնելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսը Ամենայն Հայոց, որ իր քարձր կարողությամբ և իմաստությամբ մեզ կառաջնորդե դեպի լույսի և ճշմարտության ճամփան:

Միտե՛ք մեր նվիրական մայր հայրենիքը և Մայր Աթոռ ս. Էջմիածինը և անոր արժանընտիր Գահակալը և մեր քարոյական և նյութական օժանդակությունը բերենք որպեսզի օրոքսօրե ավելի և ավելի պայծառանան հայրենիքն ու ս. Էջմիածինը:

Այսպիսով կտեսնենք թե մեզի շատ քաներ պանդված են մեր երանելի նախնիքներեն: Ուստի մեզի այ պարտք կիյնա զանոնք պահել և սրտի գոհունակությամբ ու պարծանքով փոխանցել մեր հաջորդներուն Պողոս առաքյալին նման ըսելով թե՛ «Զհաւատսն պահեցի»։ Ամեն:





ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ
ԶԱԳՈՐՍԿԻ ՍՈՒՐԲ ՍԵՐԳԵՑԻ ՎԱՆՔՈՒՄ

1974 թվականի հուլիսի 23—26-ը Ջազդուսի սուրբ Սերգեյի պատմական վանքում տեղի ունեցավ սոցիալիստական երկրների եկեղեցիների և կրոնական համայնքների ներկայացուցիչների միջև խորհրդակցական հանդիպում՝ նվիրված էկումենիզմի և խաղաղարարական գործունեության հարցերին:

Խորհրդակցությանը մասնակցում էին Սովետական Միության, Բուլղարիայի, Հունգարիայի, ԳՂՀ-ի, Կուրայի, Լեհաստանի եկեղեցիների և կրոնական համայնքների ներկայացուցիչները: Որպես դիտորդներ ներկա էին քուրդիզմի ներկայացուցիչներ Սովետական Միությունից և Մոնղոլիայից: Բացակայում էին Ռումինիայի ուղղափառ և Լեհաստանի կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչները:

Մայր Աթոռի կողմից խորհրդակցությանը մասնակցում էին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ տ. Պարզև եպս. Գևորգյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը և Հայց. եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարզև Ծաբազյանը:

Խորհրդակցության օրակարգում առաջարկվեց նախ քննարկել էկումենիզմի շարժման հետ կապված պրոբլեմներ՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի առաջիկա համաժողովի աշխատանքներին նախապատրաստվելու նպատակով:

Քանի որ համաժողովի գլխավոր թեման է՝ «Հիսուս Քրիստոսն ազատում է և միացնում», հետևաբար՝ խորհրդակցության մասնակիցների ուշադրությանը էին ներկայացվում այդ թեմայի շուրջ առաջացած հետևյալ հարցերը: 1) Ինչպե՞ս պետք է ժամանակակից քրիստոնյաները համադրեն դավանաբանական դոգմաները և իրենց գործնական փորձը ծառայեցնեն մարդու բարօրությանը: 2) Ինչպե՞ս ենք հասկանում մենք լիակատար փրկությունը Հիսուս Քրիստոսի միջոցով իրական աշխարհի մեջ, ուր գոյություն

ունեն չարիքն ու մեղքը: 3) Ի՞նչ ձևով կարելի է աշխարհի ու մարդկության բարօրության համար սիացնել եկեղեցիների և քրիստոնյաների անջատ-անջատ ուժերը: 4) Ինչպե՞ս հասկանալ համաժողովի գլխավոր թեման եկեղեցիների և քրիստոնյաների՝ աշխարհին ծառայելու ու ժողովուրդների համագործակցությանը նպաստելու տեսակետից:

Երակարգում ըննարկվող հաջորդ հարցը սոցիալիստական երկրների եկեղեցիների և կրոնական համայնքների նշմարիտ համագործակցության հարցն էր՝ միջազգային լարվածությունը թուլացնելու գործում:

«Հիտուս Քրիստոսն ազատում է և միացնում» թեմայի շուրջ ելույթ ունեցավ ռուսաց եկեղեցու ավագերեց Վիտալի Բորովոյը: Նա իր ելույթի հենց ուկրեց ասաց, որ «եկեղեցիների համաշխարհային խորհրդի հերթական համաժողովում ըննարկվելիք գլխավոր հարցն իր շատ կողմերով անհասկանալի է, պարզ չէ, թե ի՞նչն է Քրիստոսն ազատում և ի՞նչն է միացնում: Ե. Հ. Խ.-ն մինչև հիմա որևէ կողմնորոշող բացատրություն չի տվել իր տեղեկագրերում, հետևաբար մնում է ենթադրաբար խոսել այդ թեմայի շուրջ»: Եվ իրոք, տ. Բորովոյը խոսեց ենթադրաբար, ծանրաթեոնելով իր ելույթը բազմաթիվ աստվածաբանական դարձվածքներով: Նրա ելույթի հիմնական միտքն այն էր, թե աշխարհում հսկայական փոփոխություններ են առաջանում: Երրորդ աշխարհը կամաց-կամաց ազատագրվում և բռնում է իր զարգացման ուղին: Սոցիալիստական երկրներում զարգանում է սոցիալիստական հասարակարգը, որ իր առաջադիմությամբ հակադրվում է կապիտալիստական աշխարհին: Չնայած դրան, պատմական իրադարձությունը ստիպում է կապիտալիստական երկրներին ելք փնտրելու և զանազան միջազգային հարցերում համագործակցելու սոցիալիստական երկրների հետ: Աշխարհում առաջացած փոփոխությունները չեն կարող չափել եկեղեցիների համաշխարհային խորհրդի վրա: Երրորդ աշխարհի եկեղեցիներն աստիճանաբար գրավում են իրենց արժանավոր տեղերը եկեղեցիների համաշխարհային խորհրդում:

Քրիստոնեական եկեղեցիներն իրարից բաժանված են դաւանական, ծիսական, կանոնական և այլ տարբերություններով: Փրկիչը բոլորի համար է. նա հանում մարդկության փրկության ինքնազոհողության դիմեց՝ մարդկությունը քրիստոնեական ոգով միացնելու համար. ամա թե ինչու է Քրիստոսը բոլորին միացնում:

Քրիստոսը բոլորին ազատում է. այդ բանը պետք է փնտրել Նրա իսկ անձի մեջ. նա փրկեց մարդկանց հավիտենական մեղքից. այդ ազատությունը Փրկիչը ձեռք բերեց իր արյամբ. հետևաբար՝ բոլոր քրիստոնյաներն ազատ են և պետք չէ ենթարկվեն այլ և այլ ճնշումների:

Ե. Հ. Խ.-ի առաջիկա համաժողովին պատրաստվելու համար պետք է օգտագործել Քրիստոնեական խաղաղության կոնֆերենցիայի նյութերը, ինչպես և մյուս եկեղեցիների աստվածաբանների, կրոնական ներկայացուցիչների առանձին աշխատություններն ու փորձերը՝ առանձնապես «Հիտուս Քրիստոսն ազատում է և միացնում» նյութի շուրջ:

Տ. Բորովոյի ելույթով էլ ավարտվեց «Հիտուս Քրիստոսն ազատում է և միացնում» նյութի ըննարկումը:

Այսպիսով, փաստորեն խորհրդակցության ըննարկման հիմնական թեման մնաց միջազգային լարվածությունը թուլացնելու գործում սոցիալիստական երկրների եկեղեցիների և կրոնական համայնքների կատարելիք դերը:

Կառախոսություններ կարդացվեցին մի շարք թեմաների շուրջ, այդ թվում՝ «Ծրջապատող միջավայր», «Արևելք-Արևմուտք հարաբերություններ»

և «Խաղաղ գոյակցության սրբություններ», «Խորհրդածություն մարդու իրավունքների մասին», «Եվրոպական անվտանգություն», «Զինաթափում և սպառնազենությունների մրցավազքի կրճատում», «Մերձավոր Արևելքի ժամանակակից դրությունը և, այսպես կոչված, «Երրորդ աշխարհի» պրոբլեմները»:

Վերոհիշյալ յուրաքանչյուր դասախոսությունից հետո ժողովի մասնակից հոգևորականներից մեկը նույն հարցի շուրջ ելույթ էր ունենում գրավոր հարակից դասախոսությամբ:

Ակադեմիկոս Ֆյոդորովի դասախոսությունը «Շրջապատող միջավայր» թեմայով որոշակի հետաքրքրություն առաջացրեց խորհրդակցությանը մասնակից հոգևորականության մեջ:

Ակադեմիկոս Ֆյոդորովը, խոսելով բնության վրա մարդու ազդեցության մասին, ասաց. «Վերջերս այն կարծիքն է ստեղծվել, թե բնության պաշարներն անսահմանափակ չեն, նույնիսկ հաշվի է առնվել, թե այդ պաշարները որքան ժամանակ կարող են բավարարել: Ամերիկացի գիտնականներից մեկը սույն խնդիրը մանրամասն ուսումնասիրելով եկել է այն եզրակացության, որ 2030 թվականից երկրի բնակչությունը կավելանա վեց անգամ, իսկ մինչ այդ երկրի պաշարները կվերջանան, որի հետևանքով երկրի բնակչության մեծ մասը կոչնչանա, և միայն մեկ ու կես միլիարդը մի կերպ կապրի: Բնականաբար հարց է առաջանում, անհրաժեշտ է բնակչության անը դադարեցնել, թե ոչ: Գիտնականները եկել են այն կարծիքին (և մենք էլ այդ կարծիքին ենք), որ պետք է ծնունդն ու մահացությունը հավասարեցնել. մի խոսքով միջոցներ ձեռնարկել՝ դադարեցնելու բնակչության գերանը»:

Խորհրդակցության վերջին նիստում հրասլարակվեց հաղորդագրություն:


Խորհրդակցության բոլոր նիստերին ներկա էր Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը, որ, ինչպես խորհրդակցության սկզբում, այնպես էլ վերջում նաև զետե եկավ գրավոր խոսքով:


Խորհրդակցության ավարտից հետո տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն և ճաշկերույթ:

Ճաշկերույթից հետո հայոց եկեղեցու ներկայացուցիչները մոտեցան Արքայան Պատրիարքին, շնորհակալություն հայտնեցին հրավերի համար, ստան Նրա Աջը ու մեկնեցին մայրավանքից:

ՊԱՐԳԵՎ ԼՊՈՍԿՈՊՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Առաջնորդ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի բուժի





**ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՂԻՐ
ԿՈՄԻՏԵԻ 28-ՐԴ ԿՍՏԱՇՐՋԱՆԸ**

Սույն թվականի հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 8-ը Ժնևի Էկումենիկ կենտրոնում կայացավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջազգային գործերի հանձնաժողովի գործադիր կոմիտեի 28-րդ տարեկան նստաշրջանը, որի աշխատանքներին կրնան մասնակցությունը բերեցին Ե. Հ. Խ.-ի անդամ տարրեր եկեղեցիների ավելի քան 80 ներկայացուցիչներ, այդ թվում և Ե. Հ. Խ.-ի անձնակազմի մի շարք ղեկավար անդամներ՝ Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրի գլխավորությամբ:

Հուլիսի 28-ին, առավոտյան ժամը 8-ին, Էկումենիկ կենտրոնի մատուցած մեք, բոլոր ժողովականների մասնակցությամբ, տեղի ունեցավ հանդիսավոր կրոնական պաշտամունք, որից հետո միտերի մեծ դահլիճում ողջույնի հակիրճ խոսքով նստաշրջանի բացումը կատարեց դոկտ. Ֆիլիպ Փոթըրը՝ իր ելույթի մեջ մասնավորապես ընդգծելով այն հատուկ և պատասխանատու դերը, որ վերապահված է Եկեղեցիների միջազգային գործերի հանձնաժողովին, որպես Ե. Հ. Խ.-ի կարևոր օրգաններից մեկի, և միանգամայն գնահատանքի արժանի համարելով խաղաղասիրական և մարդասիրական այն ազնիվ ու օգուտակար աշխատանքը, որ նա կատարել և շարունակում է կատարել միջազգային հրատապ հարցերի լուծման ու կարգավորման ի խընդիր, աշխատանք, որ առավել կարևոր նշանակություն ունի Ե. Հ. Խ.-ի ընդհանուր գործունեության մեջ:

Առաջին լիազուրքեր միտում ժողովականները միաձայնությամբ հաստատեցին Ուստոյի 28-րդ նստաշրջանի վերաբերյալ

կազմված արձանագրությունը, ինչպես նաև ներկա նստաշրջանի օրակարգում դրված հետևյալ հարցերը.

- ա. Տնտեսական սպառնալիք խաղաղությանը.
- բ. Պորտուգալական տիրույթները և Եվրոպայի ու ԱՄՆ-ի պատասխանատվությունը.
- գ. Խորհրդածություններ և մեկնաբանություններ զինաթափման հարցի շուրջ.
- դ. Կիպրոսի ճգնաժամը.
- ե. Դրությունը հյուսիսային Իռլանդիայում.
- զ. Դրությունը Չիլիում.

Է. Հարավային Կորեայում և Ֆիլիպիններում տեղի ունեցող իրադարձությունները: Ժողովում ընդարձակ զեկուցումով հանդես եկավ հանձնաժողովի տնօրեն դոկտ. Լեոպոլդո Նիլիուսը, որը ժողովականներին ներկայացրեց հանձնաժողովի տարեկան գործունեության համակողմանի պատկերը: Այս հանձնաժողովի նախագահ դոկտ. Օլլե Դահլենը զեկուցեց անցած մեկ տարվա ժամանակաշրջանում միջազգային քաղաքական ասպարեզում մարդկությանը հուզող մի շարք նշանակալից իրադարձությունների շուրջ: Ջեկուցողը, հանգամանորեն վերլուծելուց հետո միջազգային քաղաքական արդի իրավիճակը, նշեց հանձնաժողովի առաջ դրված այն կարևոր խնդիրները, որոնք հանձնաժողովի մտահոգությունների առանցքը պետք է կազմեն նրա առաջիկա գործունեության ընթացքում: Այնուհետև հանձնաժողովի աշխատակիցներից դոկտ. Դուին Էպսթեյնը համառոտակի խոսեց հանձնաժողովին առընթեր մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեի 8 տարվա

գործունեության մասին՝ միաժամանակ նշելով այն ծրագրերը, որ կոմիտեն նախատեսում է իրականացնել առաջիկայում:

Լայն զեկուցումների շուրջ տեղի ունեցան կարծիքների փոխանակում և ելույթներ, որից հետո ժողովը, միաձայնությամբ, կատարված աշխատանքների վերաբերյալ ուրեց իր դրական գնահատականը:

Նստաշրջանի օրակարգում դրված հիմնական հարցն էր՝ «Տնտեսական սպառնալիք խաղաղությանը»: Այս թեմայի շուրջ հանձնաժողովի կողմից զեկուցելու էր հրավիրվել Միացյալ ազգերի կազմակերպության ժնկի կենտրոնի աշխատակիցներին և մեկը, որը մասնագիտական լայն հիմնությամբ ժողովականներին ներկայացրեց արդի աշխարհի համակողմանի բնութագիրը: Այս հետագա օրերի ընթացքում ժողովի մասնակիցները աշխատանքային երեք խմբերում մանրամասնորեն քննարկեցին վերոհիշյալ հարցը, որի շուրջ խմբակների կողմից մշակվեց հայտարարության համատեղ մի նախագիծ:

Օրակարգում դրված հարակից մյուս հարցերի կապակցությամբ նույնպես տրվեցին զեկուցումներ ու հաղորդումներ տվյալ հարցերին քաջատեղյակ առանձին ժողովականների կողմից, և որոնց շուրջ ընդունվեցին համապատասխան որոշումներ, մշակվեցին հատուկ քանաձևեր ու հայտարարություններ:

«Տնտեսական սպառնալիք խաղաղությանը» թեմայի վերաբերյալ խմբագրված հայտարարության մեջ, ի միջի այլոց, նշվում է, որ աշխարհն այսօր գտնվում է ճշմարիտ մի ճգնաժամի առաջ, որն սպառնում է միջազգային հասարակության բուն իսկ ապագային: Այդ ճգնաժամի առաջացման պատճառ են հանդիսացել շրջապատող միջավայրի աղտոտումը, սննդի համաշխարհային պակասը, աշխարհի բնակչության արագ աճի հետևանքները, բնական շատ հարստությունների հնարավոր սպառումը կամ անբավարարությունը և ավելի ու ավելի մահացու զենքերի կուտակման առաջ բերած սպառնալիքը: Այս բոլորը առկա են քաղաքական այն հարաճուն լարվածության մթնոլորտում, որը հետևանքն է ունենոր ազգերի հարստության և չքավոր ազգերի աղքատության միջև հետզհետե լայնացող անդհդի:

Այնուհետև հայտարարության մեջ ձևակերպված է այս ճգնաժամի հասկացողության աստվածաբանական և աշխարհիկ մեկնությունը: Ըստ աստվածաբանական մեկնության՝ «կրոնական մտածողությամբ մարդիկ սպասավորներն են Աստուծո

ստեղծած աշխարհի, ուր ներդաշնակությունն ու խաղաղությունը հնարավոր են միայն այն դեպքում, երբ կատարվում է Աստուծո կամքը անհատների, խմբավորումների, ազգերի, ինչպես նաև մարդկության ու բնության միջև գոյություն ունեցող փոխհարաբերություններն այսօր տեղի չեն փոխհարաբերություններն այսօր տեղի չեն ունենում համաձայն Աստուծո կամքի: Այլ խոսքով և ըստ աշխարհիկ մեկնության՝ «մարդիկ անտարբերության, ազահության, նախանձի, վախի, իշխանամոլության և կարճատես անմտության հետևանքով ստեղծել են կամ թույլ են տվել, որ զարգանա ակնբախորեն անարդար մի տնտեսակարգ, որի հետևանքն է շատ-շատերի համար՝ ցավ, թշվառություն, շահագործում և ճնշում: Գիտական և տեխնիկական մեծ զարգացում ապրած աշխարհում միլիոնավոր մարդիկ թերաօգտված են, իրավազրկված, զրկված մարդկային արժանապատվությունից, միևնույն գիտության ու տեխնիկայի հնարավորությունները մսխվում են կործանման զենքերի կուտակման համար»:

Հայտարարության մեջ եկեղեցիների միջազգային գործերի հանձնաժողովի գործադիր կոմիտեն, եկեղեցիների հատուկ ուշադրությունը հրավիրելով այս հարցի վրա, եզրակացնում է. «Մենք գիտակցում ենք, որ շատերի կրած ծանր տառապանքների պատճառը ազգերի ներսում եղած անարդարությունն է, ճնշումը, խտրականությունն ու անհավասարությունը, և որ տնտեսական ու սոցիալական արդարության խնդիրների լուծումը ազգերի միջև և ազգերի ներսում սերտորեն կապված են միմյանց»:

Հայտարարության վերջում կոչ է արվում Ե. Հ. Խ. -ի անդամ բոլոր եկեղեցիներին և քարի կամքի տեղ մարդկանց լայնորեն ժողովրդականացնել այս խնդիրները և իրենց պետություններին մղել, որպեսզի պաշտպան կանգնեն գոյություն ունեցող միջազգային տնտեսակարգը փոխելու նախաձեռնություններին՝ ամենից առաջ հաշվի առնելով առավել զրկված ժողովուրդների պահանջները և նախապատվությունը տալով նրանց:

«Եթե աղքատների և ճնշվածների բարօրության մասին մտահոգությունը քաղաքար չլինի, — եզրակացվում է հայտարարության մեջ, — գուցե ճգնաժամի մեր դարի ահագանգումը, թե աշխարհը կանգնած է լուրջ աղետի ճանապարհի վրա, գործի կը մղի պետական գործիչներին և ժողովուրդներին»:

Զինաթափման հարցի կապակցությամբ խմբագրված հայտարարության մեջ նշվում

է, որ վերջին մեկ տարվա ընթացքում գինաթափման ասպարեզում ոչ միայն զգալի առաջընթաց չի նկատվում, այլև նույնիսկ կան մտահոգիչ երևույթներ (զեմքերի առուծախը Մերձավոր Արևելքի երկրներում, ատոմական պայթեցում Հնդկաստանում), և որ մարդկության ապագայի համար լուրջ վտանգ է ներկայացնում սպառազինությունների շարունակվող մրցավազը: Հայտարարության մեջ այնուհետև քերվում են սպառազինությունների վերաբերյալ մի շարք թվական տվյալներ: Ըստ այդ տվյալների, միայն անցյալ տարի ազգերը 200 միլիարդ դոլլար են ծախսել ռազմական նպատակներով, հսկայական մի գումար, որ անընկալ է 10 անգամ ավելի է, քան այն միջազգային օգնությունը, որ ցույց է տրվում թույլ վարձացած երկրներին:

Հայտարարության մեջ կոչ է արվում բոլոր եկեղեցիներին վճռական ընդդիմություն ցույց տալ սպառազինությունների մրցավազքի նկատմամբ, որ փաստորեն մարդկության ինքնասպանությունն է, և պայքարել միջազգային ու հասարակական արդարության, լարվածության մեղմացման համար, որոնք խաղաղության և զինաթափման էական հիմքերն են: Այս իմաստով էլ եկեղեցիներին հրահանգվում է կազմակերպված ջանք գործադրել լարվածության թուլացումը քաջակերելու այնտեղ, ուր թյուրիմացությունները և անծանոթի հանդեպ վախը անվստահության և անհավատարմության գլխավոր գործոններն են հանդիսանում:

Ձինաթափման հարցի վերաբերյալ մշակված հայտարարության տեքստի մեջ Սովետական Միության եկեղեցիների ներկայացուցիչների կողմից առաջարկվեց մտցնել նաև հետևյալ պարբերությունը, որը և միաձայնությամբ ընդունվեց ժողովի մասնակիցների կողմից. «Ձինաթափման հարցի բարվոք լուծման համար մեծագույն կարեւորություն ունեն Սովետական Միության և ԱՄՆ-ի միջև բանակցությունները: Եկեղեցիները հույս են հայտնում, որ վերոհիշյալ երկու մեծ տերությունները մշտապես կըզիտակցեն իրենց վիթխարի պատասխանատվությունը զինաթափման հարցում, քանի որ նրանց փոխհարաբերությունները ամբողջ աշխարհի խաղաղության համար ունեն մեծ նշանակություն»:

Կիպրոսի հարցի վերաբերյալ հանձնաժողովը խմբագրեց մի այլ հայտարարություն, որի մեջ ցավ է հայտնվում, որ Կիպրոսի սահմանադրական կարգը վերացված է օտարերկրյա ակնհայտ զավթախուժումների հետևանքով, և դա մարդկային արյունահեղության և անխոր տառապանքների

պատճառ է հանդիսացել կղզիում: Հանձնաժողովը հայտարարության մեջ շեշտում է անհրաժեշտությունը՝

ա. վերականգնելու Կիպրոսի Հանրապետությունը որպես սուվերեն պետություն և ստեղծելու մի իրավիճակ, որտեղ կղզու երկու հիմնական համայնքները ի վիճակի լինեն խաղաղ գոյակցելու միմյանց հետ առանց օտարերկրյա զավթախուժումների սպառնալիքի:

բ. Ապահովելու, որ Անվտանգության խորհրդի 1974 թվականի հուլիսի 20-ի և 1974 թվականի օգոստոսի 1-ի որոշումները լիովին իրագործվեն հնարավորին չափ շուտ:

Չիլիի հարցի կապակցությամբ ընդունված քանաձևում նշվում է, որ Չիլիի ներքին գործերին օտարերկրյա միջամտությունը նշանակալիորեն նպաստեց դեմոկրատական կարգով ընտրված օրինական կառավարության տապալմանը, և օտարերկրյա միջամտությունը ազդեցությունը ներկայումս մեծապես օգնում է ճնշումների ներկա վիճակի պահպանմանը: Փաստաթղթում այնուհետև քերվում են մի շարք փաստական տվյալներ Չիլիի ներկա կացության վերաբերյալ:

Փաստաթղթի վերջում հանձնաժողովը կոչ է ուղղում Ե. Հ. Խ.-ի անդամ բոլոր եկեղեցիներին՝ օգնության հասնելու Չիլիում տառապող իրենց եղբայրներին և թուրքերին՝ հանձնարարելով նրանց դիմել իրենց համար մատչելի ամեն տեսակ գործողությունների, ներառյալ իրենց սեփական կառավարություններին դիմելը, որպեսզի Չիլիում ներկայումս տեղի ունեցածը առավել ծանր հետևանքների չհանգեցնի, և անհապաղ վերականգնվի օրենքի իշխանությունը այդ երկրում:

Եկեղեցիների միջազգային գործերի հանձնաժողովը պատշաճ ուշադրություն նվիրեց նաև ժողովի օրակարգում դրված Երուսաղեմի հարցին՝ այդ մասին ևս ընդունելով համապատասխան մի քանաձև և հանձնարարելով Ե. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեին իր առաջիկա ժողովում հաստատել այն: Համաձայն այդ բանաձևի՝

ա. Երուսաղեմը համարվում է սուրբ քաղաք երեք միաստվածյան կրոնների (հրեական, քրիստոնեական, մահմեդական) համար, և հետևաբար այս երեք կրոններն էլ պետք է իրենց օրինական քաժիճն ունենան այնտեղ: Բացի այդ, պետք է խուսափել այս երեք կրոններից որևէ մեկի համար Երուսաղեմի կարևորությունը նվազեցնելու ձգտումից: Երուսաղեմ քաղաքի ապագայի նկատմամբ մտահոգությունը հավասարապես վերաբերում է բոլորին:

բ. Երուսաղեմի հարցը սուկ սրբավայրերի պաշտպանության հարց չէ, այլև օրգանապես կապված է սուրբ քաղաքում այսօր գոյություն ունեցող կենդանի դավանությունների և համայնքների կյանքի հետ: Ուստի Երուսաղեմի հարցի վերաբերյալ որևէ կարգավորում կամ լուծում պետք է հաշվի առնի քաղաքի կրոնական առաջնորդների և համայնքների ցանկությունները:

գ. Երուսաղեմի իրավական վիճակի հետ կապված հարցերը պետք է իրենց տևական լուծումը գտնեն արաբ (պաղեստինյան) — իսրայելյան ամբողջ կոնֆլիկտի կարգավորման շրջանակներում:

Այսպիսով, վեցօրյա լարված աշխատանքից հետո, օգոստոսի 8-ին, փակվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջազգային գործերի հանձնաժողովի գործադիր կոմիտեի 28-րդ նստաշրջանը:

Ինչպես նկատելի է, ժողովում քննարկված հարցերը մեծ մասամբ շոշափում էին հասարակական և քաղաքական բնույթի այժմեական խնդիրներ: Այդ հարցերի նը-

կատմամբ հանձնաժողովի ընդհանուր մտնեցումը պետք է գնահատել դրական: Ժողովում ընդունված վիստաթողթերն ու առանձին հայտարարությունների տեքստերը իրենց ոգով և բովանդակությամբ հիմնականում համապատասխանում էին աշխարհի խաղաղության ամրապնդման գործին և ժողովուրդների շահերին՝ թելադրված լինելով քրիստոնեական ճշմարիտ եղբայրասիրության ազնիվ սկզբունքներից և մարդկային ներդաշնակ հասարակության ստեղծման իդեալի ծառայելու վեհ նպատակներից:

Նստաշրջանի աշխատանքներն անցան գործարար, հաշտ ու ներդաշնակ մթնոլորտում: Որոշումներն ընդունվում էին գրեթե միշտ միաձայնությամբ կամ ձայների քաջարձակ մեծամասնությամբ:


ՊԱՐԳԵՎ ՇԱՀԱՍՋՅԱՆ

Ընդհանուր քարտուղար Հայց. եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների քաժՈՒ



... քաղաքի կրոնական առաջնորդների և համայնքների ցանկությունները: Երուսաղեմի իրավական վիճակի հետ կապված հարցերը պետք է իրենց տևական լուծումը գտնեն արաբ (պաղեստինյան) — իսրայելյան ամբողջ կոնֆլիկտի կարգավորման շրջանակներում: Այսպիսով, վեցօրյա լարված աշխատանքից հետո, օգոստոսի 8-ին, փակվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջազգային գործերի հանձնաժողովի գործադիր կոմիտեի 28-րդ նստաշրջանը: Ինչպես նկատելի է, ժողովում քննարկված հարցերը մեծ մասամբ շոշափում էին հասարակական և քաղաքական բնույթի այժմեական խնդիրներ: Այդ հարցերի նը-

կատմամբ հանձնաժողովի ընդհանուր մտնեցումը պետք է գնահատել դրական: Ժողովում ընդունված վիստաթողթերն ու առանձին հայտարարությունների տեքստերը իրենց ոգով և բովանդակությամբ հիմնականում համապատասխանում էին աշխարհի խաղաղության ամրապնդման գործին և ժողովուրդների շահերին՝ թելադրված լինելով քրիստոնեական ճշմարիտ եղբայրասիրության ազնիվ սկզբունքներից և մարդկային ներդաշնակ հասարակության ստեղծման իդեալի ծառայելու վեհ նպատակներից: Նստաշրջանի աշխատանքներն անցան գործարար, հաշտ ու ներդաշնակ մթնոլորտում: Որոշումներն ընդունվում էին գրեթե միշտ միաձայնությամբ կամ ձայների քաջարձակ մեծամասնությամբ:



ԵԶՆԻԿ ԱՔԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ
«ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱԿՍ ԶՐՈՅՆ ԽԱՌՆՄԱՆ Ի ՍՈՒՐԲ
ԽՈՐՀՈՒՐԴՆ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ .2ԾԸ.»
ԴԱՎԱՆՍԲԱՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ
Ա. ՄԱՍ—ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՐՎԱԳԻԾ ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ
ԿՑԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Մովսես Երզնկացին եղել է իր ժամանակի ամենազարգացած, հեղինակավոր և պատկառազոր հոգևորականներից մեկը: Մեզ հասել է Մովսես Երզնկացու մասին մի վարք, ըստ Հ. Քյուրտյանի, գրված իր աշակերտ Գրիգորիս Երզնկացու (կամ Նարբերդցու) կողմից¹: Այն տպված է Ալիշանի «Հայապատում» գործի մեջ, Վենետիկ, 1801, էջ 507—508: Սույն վարքը ավելի ճառային բնույթ ունի:

Վարքից հայտնի է, որ նա ազնվատոհմ ընտանիքի գավակ է, ծնվել է 1250-ական թվականներին, Երզնկայի մոտ գտնվող Կամախ-Անի բնակավայրում, Ներսես անունով մի քահանայի ընտանիքում: Մանուկ հասակից ուսանել է Երզնկայի Ավագ վանքում, ուր և ընդունել է կոտակրոն քահանայության կարգ:

1288 թվականին Երզնկացին «յորդորեալ առանել յիմաստուն րարունապետեն Յովհաննու» (տես մեր հոդվածը Մովսես Երզնկացու Պատարագի մեկնության մասին, «Էջմիածին», 1979 թ., № 10, էջ 17), Երզնկայում գրում է մի հետաքրքիր և կարեվոր աշխատություն՝ «Հուաքումն համառոտ մեկնութեան սրբոյ պատարագին, գոր յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն»:

Այնուհետև Երզնկացին ճանապարհորդել է Արևելյան Հայաստանում և Կիլիկիայում:

Կիլիկիայում նա աշակերտել է ժամանակ-

¹ Հ. Քյուրտյան, Երիզա և Եկեղյաց գավառ, Վենետիկ, 1858, էջ 280, 282—286:

կի նշանավոր վարդապետ Գևորգ Ակևոցուն (+1301 թ.), որը որոշ ձեռագրերում կոչվում է նաև Լամբրոնացի: Պահպանվել է Մովսես Երզնկացու ճառը² իր ուսուցիչ Գևորգ Ակևոցու մահվան առթիվ, 1301 թ. հունվարի 11-ին, որը վկայում է, որ այդ թվականին Մովսես Երզնկացին Կիլիկիայում է եղել:

Այս հաստատում է նաև Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի Մատենադարանի № 202 ձեռագրի հիշատակարաններից մեկը (էջ 328բ).

...Ազքանազեանքս գրրոհի
Թուաքերութեանս համարի
Եւթնհարիւր ընդ յիսնեկի (1301)
Զըրաւ եղև այսմ տառի,
Ի գաւառս Կիլիկիէի,
Հուպ առ դղեկիս հոշակելի,
Որ և անուամբ հարձր կոչի:

Մովսես մեղաք մեռեալս ոգի,
Որ սպասաւոր գլոյժ Բանի,
Ստացաւդ եղէ այսմ մատենի
Յարդեանց այլոց ձրից պարգևի...³

Կիլիկիայում եղած տարիներին նա արտագրել է մի Աստվածաշունչ⁴, որը մեծ արժեք է ներկայացնում Աստվածաշունչի բնագրային ուսումնասիրության և հայ ձեռագրագիտության համար:

Թե՛ և՛ որք է Մովսես Երզնկացին վերա-

² Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1801, էջ 504—507:

³ Լ. Ս. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 8:

⁴ Տես Երևանի Մ. Մ. անվան Մատենադարանի (այսուհետև՝ Մատենադարանի) № 177 ձեռագիրը:

դարձել կիլիկիայից, ճշգրիտ տվյալների բացակայությունը պատճառով դժվար է ճշտել: Մակայն կան վկայություններ, որոնք վերադարձի թվականը մոտավորապես դրնում են մինչև 1807 թվականը:

Այսպես. մեզ է հասել հետևյալ հիշատակարանը.

«Յեկանելոյն Ադամայ ի դրախտէն մինչ ի յաարտումն գրոցս էր թիւ ժամանակիս .807. (8504), զի յեկանելոյն Ադամայ մինչ ի Քրիստոս էր .ՌԸՂԸ. (5188), և ի ծնընդեհէն Քրիստոսի .Ռ3ԺԶ. (1818) ամ, իսկ թվ. Մեծ Հայոց էր .24Գ. (1814):

Եւ Գրիգորիս (Խարբերոցի) մայրական գրկօք եկեալ ի գաւառն Եկեղեաց և անդ սնեալ ի մեծահռչակ վանքն Տիրաշէն, և անդ ունեալ, որպէս առացի, և կրօնատրեալ, իսկ յետոյ ի գալ վարդապետից Մովսիսի ի Կիլիկիոյ բազում գրեցօք, յորորեալ և առեալ զմեզ, բնակեցաք ի Դարանդեաց գաւառն՝ ի յետն սուրբ և մեծ Լուսաորչին ամս վեց...» (Ընդգծումը մերն է—Յ. Ա. Պ.):

Այս Գրիգորիս Խարբերոցից ձեռագրի ստացողն է: Կա նաև գրիչի՝ Մխիթար Երզրնկացու հիշատակարանը, ուր պարզվում է, որ ձեռագիրը գրվել է 1814 թվականին, Գլաձորում, «առ ոտս մեծ վարդապետիս Եսայեայ»⁶:

1814 թվականից վեց տարի առաջ 1808 թվականն է: Առնվազն մեկ տարի էլ պետք էր, որպեսզի Գրիգոր Խարբերոցին քաժանվեր իր ուսուցչից, գնար-հասներ Գլաձոր, այնտեղ երևելի դեմք դառնար, որպեսզի ձեռագիր պատվիրեր և ստանար: Այսպիսով, Մովսես Երզնկացին Կիլիկիայից Դարանադյաց գավառ է եկել մինչև 1807 թվականը «բազում գրեցօք» և սուրբ Լուսավորչի վանքում զբաղվել ուսուցչությամբ:

Սույն՝ Գրիգոր Լուսավորչի անապատում Մովսես Երզնկացին կառուցում է սուրբ Աստվածածին եկեղեցին, 1811 թվականին: Այս է հաստատում Երևանի Մատենադարանի № 5077 ձեռագրի հիշատակարանը (էջ 288թ.).

«...Արդ եղև աարտ գրչութեան սորա ի թվ(ականին) հայոց .24. (1811), յանապատեր սրբոյն Գրիգորի, ընդ հովանեաւ արքոյ Կարապետին և սրբոյն Մինասա և նորաշէն սուրբ Աստուածածնի՞՞՞ որ յայսմ ամի բազում քանի և աշխատութեամբ շինեալ եղև ի գերահռչակ րարունապետէն

Մովսիսէ...» (Ընդգծումը մերն է—Յ. Ա. Պ.):

1807 թվականի մարտի 18-ին Հեթում թագավորահոր ձեռնարկով և Անյազուսությունք Սսի ս. Սուփիա տաճարում գումարվում է մի ժողով, ընդունելու համար Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսի (արդեն վախճանված) նորամուծությունները հայ եկեղեցու մեջ:

Ժողովին մասնակցում են հիմնականում կիլիկյան եպիսկոպոսներն ու վարդապետները և լատինասեր իշխանները:

Ժողովը տևում է մեկ օր և ընդունում Անավարզեցու նորամուծությունները, Հեթումի զինվորական ճնշման տակ:

Ահա այս ժողովի որոշումների դեմ գրով ու խոսքով պայքարի մի ճակատ է բացում Մովսես Երզնկացին, իրեն զույս արևելյան վարդապետների սրբախոյան հատվածի:

Այս մասին հանգամանորեն մենք կանդրադառնանք հաջորդ էջերում:

Երզնկացու կյանքի և գործունեության մասին ուրիշ ոչինչ հայտնի չէ մեզ:

Հիշվում է միայն նրա մահվան թվականը՝ 1828 թ., որը ընդունված է բանասիրության կողմից:

ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ

Բազմարդյուն և բազմաժանր է Մովսես Երզնկացու մտտեճագրական վաստակը:

Այն բաղկացած է մեկնողական, դավանաքանական, խրատական-կանոնական, չափածո և այլ բնույթի գործերից:

• •

Ա. Մ ե կ ն ող ա կ ա ն գ ո ռ ծ ե ր

ա.— «Մեկնութիւն ժամակարգութեան»: Տպված է երկու անգամ, Կոստանդնուպոլսում՝ 1837 և 1840 թվականներին:

1840 թվականի տպագրությունը ունի հետևյալ խորագիրը. «Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելոյն Խորովո Աճնւացեաց եպիսկոպոսի և կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի»:

Իրապես էլ, Մովսես Երզնկացու ժամակարգության մեկնությունը Խորով Աճնվացու մեկնության խմբագրությունն է, որոշ հավելումներով Հովհան Օձնեցու, Ստեփանոս Այունեցու (Ը դար) և Մովսես Քերթոզահոր գործերից:

Նույն տպագրության մեջ կա մի փոքրիկ հատված՝ «Յառաջաբանութիւն Մովսէսի երջանիկ վարդապետի՝ սուրբ գրքոյս հա-

⁶ Հ. Գ. Ալիշան, Հայաստանում, էջ 825, և Սիսական, Վեհտիկ, 1898, էջ 135:

⁷ Առդ:

⁷ Լ. Ս. Խաչիկյան, Ույնը, էջ 78:

աքրողի» (էջ դ—ե), որտեղ Մովսես Երզրնկացիին հետևյալ խոսքերով բացատրում է իր աշխատանքի նպատակը և դրդապատճառը.

«...Եւ յայսմ ամենայնէ թափուր իմ գոլով ... քայց քանզի խնդրեցեր սիրելի՛ ըզվերլուծութիւնց աղօթից, զորս թողեալ է մեզ երանելոյն Խոսրովու, ոչ քառական համարելով զարարեալն, կապեցեր զմեզ ընդ հարկաւ՝ գրաւելով ի ծառայութիւն....

Բայց սկսցուք ի սկիզբն գրոցս զոր սկզբնատրեալ է մեծին Խոսրովու, հաւաքելով յանձն իւր տեղիս ըստ պատշաճ պիտոյից և զհորաքանչիւր սրբոցն խօսեցեալ բանս:

Այլ ահա հնազանդեալ հրամանաց քոց բարեւեր և պատուելի եղբայր Թէոդորէ.... սկիզբն արացուք Աստուծով ի գործս»¹:

բ.—«Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն»:

Մովսես Երզնկացիին սույն աշխատությունը գրել է Երզնկայում, 1299 թվականին, իր ուսուցիչ Հովհաննես Երզնկացու հրահանգով:

Աշխատությունը առայժմ անտիպ է:

Մենք պատրաստել ենք աշխատության բնագիրը ըստ մեզ հասած ամենահին ձեռագրի՝ Մատենադարանի № 9292-ի, և ներկայացրել ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչությունը, իբրև դիպլոմային աշխատանք:

Մովսես Երզնկացու Պատարագի մեկնության հեղինակի վավերականության, գրության թվականի, վայրի, դրդապատճառների, բովանդակության, աղբյուրների և արժեքի մասին տես մեր երկու հոդվածները՝ «Էջմիածին», 1973 թ., № Թ. 14—20 և № ԺԱ. 43—48:

Այստեղ կարելի է հիշատակել և այն, որ Հ. Քյուրտյանը փաստերի աղավաղումով շփոթել է Մովսես Երզնկացու ժամակարգության և Պատարագի մեկնությունները՝ մի գործ համարելով դրանք, և ընկել անելանելի առեղծվածի մեջ²:

•
•
•

Բ.—**Պ ա վ ա ն ք ա ն ա կ ա ն գ ո Ր Ծ Ե Ղ**
Մովսես Երզնկացու մատենագրական վաստակի ամենակարևոր մասը նրա դավանաբանական գործերն են, ուր նա հանդես է գալիս իբրև ջերմ պաշտպան հայ ե-

կեղեցու դավանության, ծիսակարգի, սովորությունների, սրբությունների, որի համար էլ արժանիորեն կոչվել է «Հայոց վարդապետ», «գերափոշակ րաբունապետ»:

ա.—**Ոսկեփորիկ**

Դավանաբանական նյութերի շատ հարուստ մի ժողովածու է:

Ըստ մատենագրական տվյալների, Երզրնկացիին սույն ժողովածուն կազմել է 1310-ական թվականներին:

Երևանի Մ. Մ. անվան Մատենադարանի № 578 ձեռագրում, որը Մովսես Երզնկացու Ոսկեփորիկն է, պահպանվել է Երզնկացու հիշատակարանը, որի վերջում ստված է. «Եւ արդ ես վերջին մովսէս, ճնունդ յետին ժամանակի և սպասաւոր պիտակ քանին, ժողովեալ հաւաքեցի սակաւ ինչ ի բանից սրբոց և եղի ի տառս այս վասն բերման ժամանակի և շփոթման ճշմարտութեան ի քազմաց խումբապելոյ: Եւ եղև զրաւ գոչութեան այս մատենի ի մէջ մայրաքաղաքին Ե(ր)զնկու, առ աթոռակալութիւնս տեսոն Սարգսի արքեպիսկոպոսի ընդ հովանեաւ սուրբ կաթողիկէիս և սուրբ կարապետիս և նշխարհաց սուրբ Ներսէսիս»¹⁰:

բ.—«Մովսէսի Հայոց վարդապետի գրեալ պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց»

Սույն գործը մեզ է հասել տասնյակ օրինակներով¹¹: Թղթի գրության նախադրյալների, դրդապատճառների և արդյունքների մասին շատ քիչ բան է հայտնի մեզ:

Վերնագրից պարզվում է միայն, որ Մովսես Երզնկացիին սույն թուղթը գրել է Տրապիզոնցի հունադասկան Գրիգոր քահանայի՝ Հայ եկեղեցու մասին արված ամբաստանագիր-թղթին ի պատասխան:

Մովսես Երզնկացու սույն գործը արժեքավոր է իր շոշափած թեմաների քազմազանությամբ և դրանց խոր վերլուծությամբ: Թուղթը գրվել է 1308 թվականից առաջ:

գ.—**Վասն պատկերացն**

Մովսես Երզնկացու «Պատասխանիք թղթոյն Տրապիզոնի» գործի մեջ կա հետևյալ վկայությունը. «Այլ և վասն պատկերացն դարձեալ զոր յիշեալ էք, գրեալ ենք և զայս ընդ երկար քանի յայլում տեղոց»:

Այս վկայությունը մեզ է հուշում, որ Երզրնկացիին մի գործ է գրել պատկերաբարգության մասին, որը սակայն մեզ չի հասել:

դ.—**Ընդդիմադրութիւն Սակս ջրոյն յառնման ի սուրբ խորհուրդն ի թուին հայոց .2ԵԸ.**

¹⁰ Տես ձեռ. № 578, էջ 164բ:

¹¹ Տես Մատենադարանի №№ 2174, 2678 և այլ ձեռագրերը:

¹ Մեկնություն ժամակարգութեան Արարեալ Երանելոյն Խոսրովու ԱՅՄԱՅԵԱՅ Եպիսկոպոսի և կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի, ՅՕրբագիւղ (Կ. Պոլիս), 1840, էջ և:

² Հ. Քյուրտյան, Երևան, էջ 280—281:

Գ.—**Խ ր ա տ ա կ ա Ո - կ ա ճ ո ճ ա կ ա Ճ ա.**—Մովսեսի վարդապետի ասացեալ ի խնդրո Յակոբա:

Այս գործը մեզ է հասել միայն մեկ ձեռագրով, որը Երևանի № 108 ձեռագիրն է (էջ 258բ—28), գրված 1922 թվականին Երուսաղեմում, Մովսես Երզնկացու գործերի գրիչ Թորոս Տարոնացու ձեռքով: Ձեռագրի ստացողը նույն Հակոբոս Արևելցին է, որի խնդրանքով գրել է Երզնկացին այս գործը:

Սույն գործը մեզ ծանոթ է նաև «Մովսեսի Երզնկացոյ Դաւանութիւն հաւատոյ»¹² անունով: Սակայն հավատքի դավանության մասին միայն մեկ տող կա՝ առաջին տողը. «Հաւատոյ Դաւանութիւնն ծանաթութիւնն է առ Աստուած»¹³: Այնուհետև ողջ գործում խոսվում է կրօնավորի վարքի, գործունեության մասին, իրատեսակ ընդունելով: Եվ այս անցումը կատարվում է հետևյալ նախադասությամբ. «Քայց հաւատոյն՝ գործ պիտոյ է, զի հաւատ առանց գործոց ունայն է»¹⁴:

բ.—**Խրատ կանոնականք ի Մովսես վարդապետէ Երզրնկացոյ ասացեալ և գրեալ և առաքեալ չեկեղեցեացս Հայաստանեայց:**

Սույն գործը մեզ հասել է տասնյակ օրինակներով¹⁵, հիմնականում այն դրված է Մովսես Երզնկացու հանրահայտ «Ոսկեփորիկ» ժողովածուում, իբրև առաջարան:

Գործը սկսվում է հետևյալ բառերով. «Ի դասնարանէ սրբոյ լուսաորչիս և ի վարդապետէս Մովսեսէ—որ և զմիօք եմ վարդապետք և եղբայրք...»¹⁶, որը և վկայում է, որ Երզնկացին այս խրատականը գրել է Կիլիկիայից վերադառնալուց հետո:

Խրատականում հիմնականում խոսվում է աշխարհիկ մարդկանց վարք ու քարքի, եկեղեցու և ծիսակատարությունների նկատմամբ նրանց պարտականությունների մասին:

Գ.—Ո Ղ Ք

«Դրուատ քանի սուղ ինչ պատմագրաբար յերջանիկ րարունապետն և ի քաղցրաբարբառ վարդապետն Գեորգ Լամբրոնացի,

¹² Տե՛ս Յուցակ ձեռագրաց Մ. Մ. Ա. Մատենադարանի, Երևան, 1886, Ա հատոր, էջ 261:

¹³ Տես ձե՛ր. № 108, էջ 268բ:

¹⁴ Ան՛դ:

¹⁵ Մատենադարանի ձեռ. №№ 5949 (էջ 1ա—6բ), 10286 (նույնը):

¹⁶ Ձեռ. № 5849, էջ 1ա:

ասացեալ Մովսեսի վարդապետի՝ աշակերտի նորին»:

Ողք, գրված իր ուսուցիչ Գեորգ Ավետացու մահվան առթիվ, 1901 թվականի հունվարի 11-ին:

Երզնկացին նախ ուղքում է իր ուսուցչի մահը, ապա տալիս Գեորգ Ավետացու վարքը, այնուհետև գովքն է անում իր ուսուցչի և վերջում նորից ողքում նրա մահը:

Սույն ողքը տպված է Ալիշանի «Հայսպատում»-ում, էջ 504—507:

Ե.—Ջ ա ճ ա զ ա ճ ք

ա.—«Վա՛սն թագաւորացն Հայոց, զոր կարգեաց Մովսես Խորենացիին»:

Հայ և պարսիկ թագավորների ցանկն է, ըստ Մովսես Խորենացու:

Վերջում կա մի փոքրիկ հավելված՝ հայ բագրատունի և կիլիկյան թագավորների անուններով:

Գործը անտիպ է և մեզ է հասել քաղմաթիվ ձեռագրերով, ինչպես օրինակ. Մատենադարանի №№ 6898 (էջ 129ա—130բ), 2678 (էջ 197ա—198ա), 1868 (էջ 210բ—215բ) և այլն:

բ.—Տաղ՝ «Մարգարեից սա սերմանումն»:

Բազմաթիվ ձեռագրերում Մովսես Երզնկացու գործերին կցված է մի տաղ՝ Մարգարեից սա սերմանումն, որի տների առաջին տաները հոդում են՝ Մովսեսի է սա նախադասությունը:

Սույն տաղը տպված է Նորայր եպս. Պողարյանի Երուսաղեմի ձեռագրացուցակի Գ հատորում, էջ 227—228:

«ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱԿՍ ԶՐՈՅՆ ԽԱՌՆՄԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ .20Ը.» ԹՈՒՂԹԸ

Մովսես Երզնկացու սույն թուղթը բացառիկ արժեք է ներկայացնում հայ դավանաբանական գրականության մեջ իր շոշափած թեմայով:

Դավանաբանական վիճաբանությունների ամենակարևոր հարցի՝ Քրիստոսի երկու բնությունների մասին հարուստ գրականություն է հասել մեզ:

Ամեն անգամ, երբ խոսք էր լինում եկեղեցիների միության մասին, Քրիստոսի տարբեր եկեղեցիների կողմից հայ եկեղեցու առջև միշտ դրվում էր Քրիստոսի երկու բնությունների ընդունման հարցը, իբրև ամենահիմնական կետ:

ԺԳ դարի կեսերից սկսած, հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունների ժամանակ, բնությունների հարցը իր տեղը գիջում է մեկ այլ կարևոր հարցի՝ սրատարագի բաժակի մեջ գինու հետ ջուր խառնելուն:

Սա մի խորամանկ քայլ էր արևմտյան եկեղեցու կողմից մտածված:

Հոռուք արդեն զգացել էր, որ հայ եկեղեցու հետ միության մասին խոսել, նրան առաջարկելով ընդունել երկու բնության դավանանքը, անհնար էր: Եվ Հոռուք փոխում է դավանաբանության ամենաէական հարցի ուղղությունը՝ բնությունների հարցից անցնելով բաժակի մեջ ջուր խառնելուն:

Սակայն այս արտաքին կողմն էր միայն:

Բաժակի մեջ ջուր խառնելու հարցը Հոռուք այնպես էր ներկայացնում հայ եկեղեցուն, որի ընդունումը միանգամայն և ընդունումն էր երկու բնության վարդապետության:

Արժե այստեղ հիշել Հոռուքի փաստարկներից մեկը՝ բաժակի մեջ ջուր խառնելու կապակցությամբ.

«...Սուրբն Երիմու՝ աշակերտ առաքելոց, գրեալ է... զի ոմն մարդ լոկ և ոմն Աստուած սոսկ անուանենն զՔրիստոս: Երիմուսնքն մարդ սրբացեալ ասեն զՔրիստոս և ոչ Աստուած և մարդ և յայն սակս ջրով միայն սրատարագէին: Եւ մարկիոնեանքն Աստուած միայն ասէին և ոչ մարդ և Աստուած և յերկուց միացեալ և վասն այր գինով միայն սրատարագէին»¹⁷:

Վերախառնար, քաղաքական նկատառումներով, Հոռուք այս և նման դավանաբանական վարդապետությունների նկատմամբ հարգալիք և ստրկաբար ընդունելու ձգտումներ են ցույց տալիս կիլիկյան հայկական պետության դեկավար, ֆրանսիական միաբանության անդամ Հեթում կրոնավորը, հայոց կաթողիկոս Գրիգոր է Անավարզեցին (1293—1307), կիլիկյան լատինասեր կուսակցությունը:

Նրանց ազգավնաս և անհայեցողական գործողությունները հասնում են այնտեղ, որ որոշում են 1305—1306 թվականներին ժողով գումարել Սսում և պաշտոնապես ընդունել Հոռուքի առաջարկները:

Բարեբախտաբար քաղաքական խառնակ վիճակի պատճառով հետաձգվում է ժողովի գումարումը, և 1307 թվականին (հալանաբար նույնվարի վերջերին) մահանում է Գրիգոր է Անավարզեցի կաթողիկոսը:

Սակայն Անավարզեցու մահը չի խանգարում ժողովի գումարումը, որը տեղի է ունենում նույն ստորին, մարտի 19-ին, Հեթում

թագավորաձոր նախագահությամբ և կիլիկյան եպիսկոպոսներից ու վարդապետներից ոմանց մասնակցությամբ: Ժողովին ներկա են լինում նաև բազմաթիվ լատինասեր հայ իշխաններ:

Ժողովը տևում է մեկ օր և ընդունում Հոռուքի առաջարկները և Անավարզեցու նորամտությունները, անշուշտ Հեթումի կողմից գործադրված քաղաքական ճնշման ներքո: Այլապես ինչպե՞ս կարելի է դավանաբանական և ծիսական կարևոր ճշանակություն ունեցող տասնյակ հարցեր թցնել մեկ օրում:

Այս ժողովի մասին պատմիչ կղեմես Գալանոսը վկայում է հետևյալը. «Առաջի եղեալ է արքայն զհամակ կաթողիկոսի, որպէսզի թցնեսցի ճշմարտութեամբ»¹⁸:

Անշուշտ այսպիսի մի ժողովի որոշումները երբեք չեն կարող անդրադարձնալ հայ եկեղեցու դավանաբանական սկզբունքների փոփոխման վրա, ժողով, առանց հայոց կաթողիկոսի, առանց ամենակարևոր դավանաբան եպիսկոպոսների և վարդապետների մասնակցության ու քաղաքական-գիտական ճնշման տակ:

Ահա այս ժողովի որոշումների դեմ է, որ ընդդիմացել է Մովսես Երզնկացիին, արեւելյան վարդապետների անունից, գրելով «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնմանի սուրբ խորհուրդն ի թուին հայոց .ՉԻԸ.» նակաճառությունը:

Եվ բանի որ ժողովի որոշումները նույն Գրիգոր Անավարզեցու դավանաբանական համակն է՝ ուղված Հեթումին, որտեղ հայտնում է հայ եկեղեցուն իր կատարելիք նորամտությունների մասին¹⁹, ուստի Մովսես Երզնկացիին իր հակաճառության մեջ խոսելով Սսի անօրինական ժողովի դեմ, հակաճառում է նաև Գրիգոր Անավարզեցուն, նրա համակին:



Մովսես Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման...» թուղթը քաղկացած է չորս մասից.

ա.—Գրիգոր կաթողիկոսի հայոց ջրողի, երկաթնակի, ուրացողի, ոմ որոց թողեալ զուսումն մանկութեան և մոռացեալ զուխտն աստուածեղէն. (Տես Մատենադարանի ձեռ. № 2268, էջ 74բ—77բ):

ԲԳ.—Վասն ջրոյն թէ պարտ է խառնել ի սուրբ խորհուրդն, որպէս և այլ քրիստոն-

¹⁷ Տես Մատենադարանի ձեռ. № 2268, էջ 7հա:

¹⁸ Կղեմես Գալանոս, Միարանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հոռովմայ, հտ. Ա, Հոռու, 1660—1661, էջ 461:

¹⁹ Աճ, էջ 439—450:

եայքն... Եւ որ գրեացն զայստիկ ի ժամ վախճանին, զդացեալ ասէր. «Հայ եմ, հայ եմ և հայ մտանիս»: Այս մինչև ցայս վայր:

բ.—Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թիւն հաւոյն .2ԾԸ. պատշաճաբար շարադրութեամբ յարմարեալ մեծի ռաբունապետին Մովսէսի. (Անդ. էջ 77բ—78ա):

բն.—«Որդիք մարդկան, մինչև յե՛րբ էք խառնասիրտք, ընդէ՛ր սրբէ՛ր զանհրոթին և խնդրէք զատութիւն» ասէ ուրումն յիւրում բանին երանելին Դաւիթ և եւ զնորայն առ բերելով վերաձայնեցից յիմումս ժամանակի... Արդարև հովիք մոլորեցան և ի սպանութիւն հօտին Քրիստոսի միաբանեցան և սպանութիւն ոչ ըստ մարմնո՛յ այլ ըստ հոգոյ:

Եւ արդ երից յայս վայրի լասսիրաց սեղան՝ լի հոգևոր խոհիւք զհրալից բանս սրբոյ շիրապետին Գրիգորի Վկայասիրի:

գ.—Գրիգորիոս Վկայասիրի Հայոց վերադիտողի վասն Ջատկի. (Անդ. էջ 78ա—80ա):

բն.—Ի թուականութեանն հայոց .ԾԱ. ի սուրբ Ջատկէն մոլորեցան ժա. ազգս հաստացելոց և հայք և ասորիք միայն մնացին հաստատուն... Յայսմ հետէ ըթթաւցուք ի բանիցն ընկութիւն և տեսցուք որչափ է կարողութիւն ընդդիմադրելով զպատասխանին, ոչ հալառականութեամբ և յանդրգնութեամբ, այլ սրբոցն խօսեցեալ բանիւք հաստատելով զերիս այսորիկ զճշմարտութիւն վասն պարզամտացն անսայթաք մնալով:

դ.—«Բնութիւն բանիցն Գրիգորի կաթողիկոսի» (վերնագրումը մերն է—Ե. Ա. Պ). (Անդ. էջ 80ա—84բ):

բն.—Գրիգորն ասէ կաթողիկոսը.—Ի գրելոցս թեթևութիւն գրոյս վեր երևի ոչ սրբոյ, զի չէր ոչ Տեառն, զի ամօթ համարէին ոչ վերադիտողի, զի եպեքանաց ունէին կարծիս և մի ոք զբանս անզգամութեան համարեացի ... ի սրբոց բանից յանդիմանի, զի սուտ է և չէ ճշմարիտ և արիւն և ջուրն ի կողէն գոր ասէ ի սուրբ խորհուրդն դնեմք աստ բանք, որով յայտնի ճշմարտութիւն և յանդիմանի ստութիւնն:

Իր այս կատուցվածքով սույն գործը մեզ հայտնի է միայն երկու ձեռագրերից. առաջինը երևանի Մատենադարանի № 2268-ն է (էջ 74բ—84բ), երկրորդը՝ Չմմատի վանքի Մատենադարանի Անտոնյան հավաքածուի № 588-ը²⁰ (էջ 172բ—183ա):

²⁰ Տե՛ս Յուզակ հայերն ձեռագրաց Չմմատի վանքի Մատենադարանին: Հատոր Բ: «Անտոնեան հաւաքածոյ»: Կազմեցին Հ. Ն. Ալիբեյան և Հ. Հ. Ռուկան: Վիեննա, 1871, էջ 168—178:

հաւմաթիւ ձեռագրերում հանդիպում ենք նաև թղթի Բ մասին միայն (որից որոշ մասեր տպված են «Միոն»-ում, 1866-ին), և միշտ «Յաղագս միաւորութեան և բնութեան և դիմի և անճանարութեան» անհայտ մի փոքրիկ դավանաբանական գործի նկատմամբ և մեկ ամբողջությամբ²¹:

Միայն մեկ ձեռագրում²² «Սակս ջրոյն խառնման...»-ի Բ մասը չունի «Յաղագս միաւորութեան...»-ի կցումը:

Իսկ որոշ ձեռագրերում հանդիպում ենք միայն «Յաղագս միաւորութեան...» գործին²³:

Նորայր արք. Պողարյանն այս երկու հատվածները վերագրում է Եսայի Նչեցուն²⁴:

«Յաղագս միաւորութեան...»-ի մասին մենք ոչինչ չենք կարող ասել, սակայն ինչ վերաբերում է առաջին հատվածին, ապա ակնհայտորեն դա Մովսէս Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման...» թղթի Բ մասն է:



Թղթի առաջին մասում Երզնկացին նախ մեջ է քերում Սսի ժողովի որոշումների թողութիւնը:

Ըստ այդ գրության, Սսի ժողովականները որոշում են կայացրել հայ եկեղեցում ընդունելու ս. Հաղորդության բաժակի մեջ ջուր խառնելու սովորությունը, հետևյալ վերկայություններով, ապացուցումներով և դատողություններով հաստատելով այն.

ա.—Հովհաննէս Ավետարանիչն իր կաթողիկէ Ա թղթի մեջ գրել է.

«Երեք են որ վկայեն յերկինս՝ Հայր և Բանն և Հոգին, և երեք են որ վկայեն յերկրի՝ Հոգին և ջուրն և արիւնն և երեքեանն մի են»²⁵:

Ըստ հոռմեադավան վարդապետության, այստեղ հիշատակված ջուրը ս. հաղորդության բաժակի համար է դրվել:

բ.—Պողոս առաքյալը կորնթացվոց ուղղած Ա թողութի մեջ գրել է.

«Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս

²¹ Տես Մատենադարանի №№ 2878 (120ա—122ա), 602 (110ա—115բ), 8302 (58բ—59բ) և այլ ձեռագրերը:

²² Տես Մատենադարանի № 681 (524ա—528բ) ձեռագրերը:

²³ Տես Մատենադարանի № 1080 (884բ—885ա) ձեռագրերը:

²⁴ Ն. Ե. Պողարյան, Հայ գլուխներ, Արուսայեմ, 1871, էջ 386:

²⁵ Ա. Յովն. Ե 8: Տես ձեռ. № 2268, էջ 74բ:

գայս և գրածակս ընկիցէք, գմահ Տեսուն պատմեցէք»²⁶:

Ըստ հոռմեադավան վարդապետության, Քրիստոսի մահվան հիշատակը արյունն ու ջուրն է, որ ելավ նրա կողից, մահվան ժամին:

Քրիստոս պատարագվեց խաչի վրա մարմնով և նրա կողից արյուն և ջուր հոսեց:

Հետևաբար պետք է ս. հաղորդության քաժակի մեջ ջուր խառնել:

գ.—Քրիստոս վերցրեց քաժակը սեղանից, գոհացավ և ասեց. «Ջայս արարէք առ իմոյ յիշատակի»²⁷:

Ըստ հոռմեադավան վարդապետության, քաժակը ոչ թե անապական գինու անունն է, այլ ամանի, որի մեջ խառնվում է ջուրը և գինին:

Որի համար էլ աստվածային Սողոմոնը մարգարեություն է Քրիստոսի հաստատած հաղորդության խորհրդի վրա և ասել.

«Եստուեաց ի խառնելիս զգինի իւր և պատրաստեաց զսեղան իւր»²⁸:

Սողոմոնի այս մարգարեությունը հայտնելում է խաչի վրա, երբ Քրիստոսի կողից արյուն և ջուր է հոսում: Եվ այս ցույց է տալիս, որ չսխեռք է միայն ջրով կամ միայն գինով պատարագել, այլ գինով և ջրով միասին:

Եվ հենց Քարոսյ Կեսարացու և Հակովբոս Տյառնեղոթ պատարագամատուցների մեջ զրված է, թե Քրիստոս. «առեալ քաժակ, օրհնեաց, խառնեաց...»²⁹:

դ.—Գինու և ջրի խառնումը Քրիստոսի աստվածության և մարդկության խառնումն է խորհրդանշում:

Երիցնյանը միայն ջրով էին պատարագում, որովհետև մերժում էին Քրիստոսի աստվածությունը և նրան «մարդ սրբացեալ» էին անվանում:

Իսկ մարկիոնյանը միայն գինով էին պատարագում, որովհետև մերժում էին Քրիստոսի մարդկայնությունը և նրան միայն Աստված էին անվանում:

Քանի որ նրանք աղանդավորներ էին, այսպե նրանց դավանանքները և ծեսերը մերժելի են:

Եվ այս պատճառով 6-րդ տիեզերական ժողովում և Ոճորիոս կայսրի ժամանակ գումարված Կարթագենի ժողովում որոշվեց, որ պետք է պատարագել գինով և ջրով միասին, այսպես որևէ պատարագ ընդունելի չի կարող լինել:

ե.—Գրիգոր Նյուացին ասում է, թե գինին ջուր է, թե «գինին ոչ այլ ինչ է քան եթե ջուր որակացեալ ի փայտի՝ այսինքն գոյն առեալ յորթոյ»³⁰:

Այս թեորիսով թղթում փորձվում է անգոր դարձնել Հովհան Ոսկեբերանի այն հայտնի խոսքը, թե «ոչ արքից ի բերոյ որթոյ մինչև արքից գոս նոր ըստ յարքայութեան Հօր իմոյ»³¹:

Վերոհիշյալ հետևությամբ թղթում ասվում է, թե Հովհան Ոսկեբերանը ընդդիմացել է ոչ թե նրանց դեմ, ովքեր ջուր են խառնել գինուն, այլ նրանց, ովքեր միայն ջրով են պատարագել:

զ.—Միլանի Ամբրոսիոս եպիսկոպոսը ասել է, որ պետք է հնազանդվել Հռոմի սուրբ և առաքելական եկեղեցուն, որովհետեւ այն հաստատված է Պետրոս առաքյալի ուղղափառ հավատքի հիման վրա:

Եվ ինչպես որ մարմինը հնազանդվում է գլխին, նույնպես և ընդհանուր եկեղեցին, որ Քրիստոսի մարմինն է, պարտավոր է հնազանդվել Հռոմին, որովհետև այն Քրիստոսի կողմից հաստատվել է իբրև գլուխ իր եկեղեցու:

Եվ քանի որ Հռոմի Աթոռը անհրաժեշտ է գտնում քաժակի մեջ ջուր խառնելը, այսպես պետք է որ մյուս բոլոր եկեղեցիները նույնը անեն:

Այնուհետև գալիս է Սսի ժողովականների խոսքը. «...Վասն որոյ և աստ ժողովեալ բազմութիւն եպիսկոպոսաց և վարդապետաց, հարց և քահանայից, հանդերձ Քրիստոսաւեր թագաւորաւ մերով Լեոնի և պարան Հեթմի և եղբարքք իւրովք Աշդնի և Ալիխանի և այլ ևս իշխանօք, ազատօք և զօրօք և սրբազան ժողովրդականաւք յոյժ հաւանութեամբ և պատուով ընկալալք զհրաման սրբոյ Հօրս և իբրև զճշմարիտ և զառաքելական կանոն և զօրհնադրութիւն հաստատեցաք յեկեղեցիս Հայոց... եմք համաձայն յամենայն բարեկարգութիւնս և տօնս եկեղեցւոյն Հռովմայ»³²:

Թե ինչ այլ բարեկարգություններ են ընդունել, թղթում հստակ տրված չեն, բացի երկու ակնարկությունից.

ա.—Տերունական տոները արևմտյան եկեղեցու հետ միասին տոնել, մի սովորությունն, որը «ի կանոնս ժամանակաց սկսեալ ի սրբոյ լուսաւորչէն գոյր յեկեղեցիս Հայոց և պահիր սոյն սովորութիւն բազում և երկար ամօք և ի պատճառէ ի Մերէ իսախանեալ և բարձեալ եղև»³³:

²⁶ Ա Կորնթ. ԺԱ 26: Աճդ:

²⁷ Հովհաս 14: 19: Աճդ:

²⁸ Առակ. Ա 1—2: Աճդ, էջ 75ր:

²⁹ Աճդ, էջ 75ա:

³⁰ Աճդ, էջ 75ա:

³¹ Աճդ:

³² Աճդ, էջ 76ր—77ա:

³³ Աճդ, էջ 76բ:

բ.—Հաղորդության խորհրդի համար ցո-
րենի հացի փոխարեն երբեք չօգտագործել
գարեղեն հաց³⁶։

Թղթի վերջում դրված է հետևյալ եզրա-
փակիչ խոսքը. «Եղև կանոնադրություն և
սահման արդյ ժողովոյս ի մեծ թուականո-
թեանն Հայոց ԶՄԶ. և փոքր թվից Ե. յամ-
սեանն մարտի Ժթ. ի յօրօգոմեան տօնին,
ի սուրբն մեծ կաթողիկէն մայրաքաղաքին
Ափսոյ»³⁷։

Սսի ժողովի որոշումների թղթին կցված է
մի փոքրիկ հատված Հուսի Իննովկենտիոս
Բ Պատի Առնակից՝ ուղված Ներսես Ծնոր-
հալոյ եղբայր հայոց Գրիգոր կաթողիկոսին։

Այդ հատվածում ասվում է, որ պետք է
քոլորին ուսուցանել, թե ինչպես Քրիստոս
պատարագվեց խաչի վրա մարմնով և նրա
կողմից արյուն և ջուր հոսեց, և այս հիշա-
տակը պետք է պահել և միշտ գործադրել։

Այնուհետև ասվում է, որ Քրիստոսի
ծնունդը պետք է տոնել դեկտեմբերի 25-ին,
իսկ Հովհաննես Մկրտչի ծնունդը՝ հունիսի
24-ին։

Մովսես Երզնկացիին իր գրության մեջ հի-
շատակելով այս ամենը, ավելացնում է.

«Այսոքիկ հակառակասիրացն բանք»³⁸։

Այնուհետև Երզնկացիին ակնարկում է լա-
տինասեր կուսակցության կողմից արված
հետևյալ բարեփոխություններին.

ա.—Ընդունել .բ. բնութիւն և .բ. կամք և
.բ. ցեղործութիւն։

բ.—Ապականացու կիրք ասել ի Քրիս-
տոս։

գ.—Ընդունել գՔաղկեղովնի ժողովն։

դ.—Տոները կատարել ըստ Անավարզե-
ցու խմբագրած Յայսմատորք-ի, որ է հայ
եկեղեցուն հատուկ յոթնական դրության
խախտումը։

ե.—Նզովել քոլոր այն արքերին, որոնք
չեն ճանաչված որպես սուրբ Հոռմի կողմից։
Երզնկացիին այս փոքրիկ հատվածում մի
քանի հետաքրքիր տեղեկություններ է տա-
լիս մեզ, ըստ որի Գրիգոր Անավարզեցի
կաթողիկոսը իր այս քոլոր Անամոծու-
թյունները կատարել է Հեթումի պարտա-
դրանքով.

«Ձի իմ շահելով զկամս թագաւորին,
զայս արարի և փոխանակ կրեմ յաքսորումն
յաթողոյս»³⁷։

Երզնկացիին վկայում է նաև, որ Գրիգոր
Անավարզեցի կաթողիկոսը իր մահվան
ժամին ասել է.

«Հայ եմ, հայ եմ և հայ մեռանիս»³⁸։

Թղթի երկրորդ մասում Երզնկացիին ընդ-
հանուր խոսքերով անդրադառնում է Սսի
ժողովի որոշումների անմտության և անօգ-
տակարության հարցերին։

Երզնկացիին պաշտպանում է այն տեսա-
կետը, թե եթե ճշմարտության հաղթանակի
համար են արվել այդ որոշումները, ապա
անմտություն է այդպես մտածել, որովհետև
«ամենայն ումեք յայտ է, զի որ ի ձայն մերձ
լիցի, նմա յայտ է ճշմարիտ» քան որ ի քա-
լիցի, նմա կայ և թե այսպես է, որպէս և է իրա-
ցեայ կայ և թե այսպես է, որպէս և է իրա-
ցեայ, ապա որք ի նախակարգեալ օրինա-
սացի, ապա որք ի նախակարգեալ օրինա-
դիր հայրսն հուպ էից և յաւանդիչսն հաս-
դի տատութեան հաւատոյ ճոցա յաւետ պարտ է
հաւատաւ, քան թե սուտակասպասաց յետ
նոց...»³⁹։ Եվ նա առաջարկում է, որ Սսի
ժողովակները իրենց այդ որոշումները
առաջարկեն Նիկիական Հավատամքի և
առաջին սուրբ հայրերի սահմանադրու-
թյունների հիման վրա։

Սակայն Երզնկացիին հասկացել է այդ
անցած-դարձած դեպքերի պատճառները.

«Եւ արդ լսեմ որպէս ասեմ ստայօղ ու-
նայնաբանութիւն, զի սեր և միաբանութիւն
ստեն հաստատեցի և գայցեն մակեդոնա-
ցիք և օգնեցեն մեզ»⁴⁰։

Երզնկացիին կարողացել է ճշգրտությամբ
հասկանալ իր ժամանակի քաղաքական
կացությունը և հաստատել, որ «մակեդո-
նացիք», այսինքն խաչակիրները, նպատակ
ունեն միայն Երուսաղեմը ազատագրել ա-
նօրեմների ձեռքից, և որպեսզի այս անգն,
նրանք պետք ունեն կիլիկյան հայկական
թագավորության բարեկամությանն ու օգ-
նությանը։

Եվ հենց այս պատճառով ավելորդ են
հայերի գիշողությունները կրոնական-դա-
վանաբանական գետնի վրա։

Իսկ եթե ոմանք կարծում են, թե սերը
հայերի և խաչակիրների, կամ ավելի ճիշտ
կլիցի ասել՝ Հոռմի միջև, ավելի ջերմ և
հաստատուն կլիցի, եթե քոլորն էլ նույն
դավանանքն ունենան, շարունակում է Եր-
զնկացիին, սխալվում են, որովհետև «մա-
կեդոնացիք» և «յույնք» նույն դավանանքը
ունեն, սակայն նույնիսկ միմյանց քրիստոն-
յա չեն համարում, ատելությունից դրոյված։

Գ մասում Երզնկացիին խոսում է Կրիգոր

³⁶ Աճղ, էջ 77ա

³⁷ Աճղ։

³⁸ Աճղ, էջ 77բ։

³⁹ Աճղ։

³⁸ Աճղ։

³⁹ Աճղ, էջ 78բ։

⁴⁰ Աճղ, էջ 78ա։

Վկայասեր կաթողիկոսի Զատիկի ճառի գրությանը պատճառի մասին և ապա մեջբերում այդ ճառից մի հատված, հիմնականում ցանկանալով ապացուցել, որ չպետք է հավատալ Արևմուտքի եկեղեցիների կեղծ ուսմունքներին և խոստումներին և չպետք է մոռանալ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու առաքելահաստատ դավանանքն ու ավանդությունները:

• •

Մեզ համար ամենակարևորը թղթի Գ մասն է, այն է՝ Ա մասի հակաճառությունը: Երզնկացիին նախադասություն առ նախադասություն մեջ է բերում Ա հատվածը և հակաճառում յուրաքանչյուր հատվածին առանձին-առանձին:

Հակաճառվելիք հատվածների առջև դրված են լինում. «Գրիգորն ասէ կաթողիկոսի», «հրցու», «հրց. Գրիգոր կաթողիկոսէ», «Գրիր.» և այլն նման արտահայտություններ, իսկ Երզնկացու հատվածների առջև՝ «պիսի», «պիսի. Մովսիսի վրդտ.» «Մովս», «Մովսէսի» և այլն:

Ինչպես արդեն հանգամանորեն անդրադարձանք, Սսի ժողովականները ս. հաղորդության բաժակի մեջ ջուր խառնելու որոշումը ընդունել են՝ հիմնականում վեց թեզիսների հիման վրա:

Այստեղ Երզնկացիին նախ վերլուծում է այդ թեզիսները և պատասխանում հայ եկեղեցու վարդապետության ճշմարիտ հիմունքներով.

ա.—«Երեք են որ վկայեն յերկինս՝ Հայր և Բանն և Հոգին, և երեք են որ վկայ յերկրէ՝ Հոգին և ջուրն և արիւնն»:

Այս վկայությունը ոչ թե արվել է սուրբ խորհրդի ջրի մասին, այլ հայտնելու, թե Հիսուսը Աստուծո Որդին է:

Խաչի վրայի ջուրը մեր եկեղեցին ընդունում է որպես մկրտության խորհուրդ, իսկ արյունը՝ հաղորդության խորհուրդ:

բ.—ՂԱՆ և զՊօղոսին թէ յուտել հացին զմահն Տեան պատմել⁴¹:

Պողոս առաքյալը այնտեղ ջուր չի հիշում, այլ միայն բաժակի համար է ասում և կողից արյուն և ջուր ելնելը կենդանի Աստվածության և մահացած մարմնով խաչի վրա Տիրոջն է քարոզում և ոչ սուրբ խորհրդի մեջ ջուր արկանելը:

գ.—Բերէ և զբան Փրկչին, թէ ասեալ զբաժակն ասէ ոչ անապական զինույն է անուն, այլ ամանույն⁴².

Բաժակը նաև հոմանուն է չարչարանքի հետ. «կարէ՞ք ըմպել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ»⁴³:

Եվ Սողոմոնի խոսքերը ոչ թե ջրի և գինու խառնման համար է ասված, այլ Հին և Նոր Կտակարանների «միաբանության»:

դ.—Այլ ասէ գտաք ի գիրս Երիցոսի զանուանս նոցա, զի Երիցեանքն ասէ յոկմարդ ասեն զՔրիստոս վասն որոյ ջրով միայն պատարագէին և Մարկիոնեանքն Աստուած միայն ասէին և սակս այնր զհնով միայն պատարագէին⁴⁴.

Սա արդեն հայտնի ստություն է:

Նախ ոչ մի տեղ չի հիշված և ոչ մի սուրբ հայր չի ավանդել, որ Երիցյանք միայն ջրով էին պատարագում: Իսկ Երիցոսի անունով նրանք բերած վկայությունը Երզնկացիին չի ընդունում, այն պարզ պատճառով, որ Երզնկացու նման հմուտ մեկը, ընկնելով Երիցոսի գործերը, չի գտնում այդ վկայությունը:

Եվ Երզնկացիին իրավունք ունի մերժելու, քանի որ նա մեզ է հաղորդում չափազանց ուշագրավ մի պատմություն. «...Ես ինքնին եղէ ականատէս երթեմն, զի գրեալ էին սուսյադ բանք և մակագրեալք զանունն Յովաննու և մատուցին առաջի իմ զի այնու պատրեւցեն, որ և ի նոյն տեղաջն էպէրեցաւ, ոչ եղև ընդունելի, զի սուտ էր»⁴⁵:

Սեփական փորձառությունից ելնելով Երզնկացիին զարմանալի չի համարում որ Երիցոսի գործերում իրեն չի հաջողվում զանել վերոհիշյալ վկայությունը և ավելացնում է. «...Թէ յայլ Երիցոս ունին բաց յաշակերտէ առաքելոցն, իրեանց աղանդովն, մեզ չէ ընդունելի»⁴⁶:

Այնուհետև Երզնկացիին մեջ է բերում մի վկայություն Եպիփանից, Երիցնացիների մասին, ըստ որի նրանք պաշտում են ջուրը որպես Աստված և մկրտվում «հանապազ», իսկ ս. խորհրդի մասին ոչինչ չի գրված:

Գալով Մարկիոնի աղանդին, Երզնկացիին ասում է.

Եթե միայն զինով պատարագելը հերձված էր, առաջին սուրբ հայրերը միայն զինով չէին պատարագի և մեզ այդպես չէին ուսուցանի:

Իսկ եթե միայն զինով պատարագելը Մարկիոնի աղանդի հերձված է, ապա ինչո՞ւ նրանք, որոնք մեզ ուսուցանեցին, որ մինչև այժմ նգովենք Մարկիոնին, չսասցին, թե զինով պատարագելը Մարկիոնի աղանդին է հուսով և պետք չէ անել:

⁴¹ Անդ: 42
⁴² Ձեռ. էջ 81բ:
⁴³ Ձեռ. էջ 82ա:
⁴⁴ Անդ:

⁴¹ Անդ. և 8, ձեռ. էջ 80բ:
⁴² Ձեռ. էջ 80բ:
⁴³ Անդ:

Այլ Մարկիտը հինգ հերձված ունի և պատարագի խորհրդի գինու կամ ջրի մասին ոչ մի հերձված չի ընդունվել:

Իսկ ինչ վերաբերվում է Կարթագենի ժողովի որոշմանը, Ոնորիս կայսեր ժամանակ, Երզնկացին նախ պարզում է, որ Ոնորիսը եղել է Մեծն Թեոդոսի որդին, և նրանից հետո ապրող շատ սրբեր, որոնց թվում ս. Հովհան Ոսկեբերանը, չեն ընդունել այդ որոշումը: Նշանակում է այդ ճշմարիտ չէ և մերժելի է:

ե.— Առնու և միս բան գնիւացայն, զի գինին ջուր ասէ որակացեալ ի փայտի⁴⁵.

Եթե այդպես է, որպես և է նշխարիտ, ապա ջուրը ինչպե՛ս պետք է ջրի մեջ խառնել:

գ.— Հոռմի գերագահության գաղափարը արժանի չի համարվել Երզնկացու կողմից հավանառուելու:

Բացի այս հիմնական կետերի հակաճատությունից, Երզնկացին քննադատության է ենթարկում նաև բազմաթիվ այլ երկրորդական հարցեր և վկայություններ, որոնք տեղ են գտել Սսի ժողովականների թղթում և որան կցված հավելվածում:

Այնուհետև Երզնկացին սրսի ցալով բացակաճում է.

«Եւ արդ այս տմեհայն արկածք սատանայի են, զի սրատառեաց զեկեղեցի և տուկաին ևս պատուտէ, զի մի միաբանելովն գիտյ նորին գեր ի վերոյ գային, վասն որոյ ատելութեամբ գմեզ առ իրեայս գոգո՛ւ և բաժանէ, զի դիրաւ յաղթեսցէ»⁴⁶:


Վերջում Երզնկացին քննության է առնում և ճշմարիտ մտեցումով Սսի ժողովը համարում է հակակաճողական, անհեղինակավոր, անհիմաստ մի հավաքույթ, որին «սուտ ժողովոյս պարտ է ասել և ոչ սուրբ»:


Ահա այս է, ընդհանուր գծերի մեջ, Մովսես Երզնկացու «Հնդդիմադրութիւն Սակս ջրոյն խառնման...» դավաճաբանական թուղթը:

Վերջացնելով, պետք է կարևորությամբ շեշտել, որ այն իր տրամաբանական շարադրանքով, գիտականությամբ և թարմությամբ կարևոր արժեք կարող է ներկայացնել նաև այսօր՝ միջեկեղեցական հարաբերությունների ժամանակ քննվող դավաճաբանական հարցերի ուսումնասիրության կապակցությամբ:

⁴⁵ Ձև. էջ 81ր:

⁴⁶ Ձև. էջ 88ր:





Հ. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

**ՀԵՐՂԵՐԻ Ա. ՍԻՈՆ ԵՎ Ա. ԳԵՎՈՐԳ ԱՆԱՊԱՏՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հերեր գյուղը, որը գտնվում է այժմյան Ազիզբեկովի շրջանում, Հին Հայաստանի Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառի երերն գյուղն է: Գյուղի սահմաններում և նրա շրջակայքում պահպանված նյութական մշակույթի բազմաթիվ ու բազմապիսի հուշարձանները, մանավանդ նրա՝ Տաթևի հոգեվոր թեմին վճարելիք հարկի քանակը, որի մասին հիշատակում է պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, վկայում են, որ Հերերը Սյունիքի խոշոր և նշանավոր քնակավայրերից մեկն է եղել:

Ա. Սիոն անապատը գտնվում է գյուղից մեկ կիլոմետրաչափի դեպի հյուսիս-արևելք, երկու ձորերով եզերվող քրաձև փոքրիկ բարձրավանդակ-սարահարթի վրա: Այդ բարձրավանդակ-սարահարթը պաշտպանված է ձորերի բարձր ու անմատչելի քարափներով, որոնց խոցելի-թույլ տեղերն ամրացված են պարսպապատերով, վերածելով այն ամուր պաշտպանական մի վայրի:

Մենաստան-անապատը տեղադրված է արևելյան կողմի ձորաեզրին՝ անմիջապես քարափի ծայրին (ՈՒ. 1): Բաղկացած է երկու եկեղեցուց, մեկ մատուռից, կից փոքրիկ գերեզմանատնից և քնակելի այլ շենքերի մնացորդներից:

Պատմական աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում այս մենաստանի մասին, նրա վրա փորագրված բազում արձանագրություններն էլ վերա-

բերում են այնպիսի ուշ ժամանակի, ուստի որոշակի պարզ չէ, թե երբ է հիմնադրվել այն և ովքեր են եղել նրա կառուցողները: Մենաստանի աշխարհագրական բնորոշ դիրքը, նրա՝ քնակավայրերից նեղու գրունդվելու հանգամանքը հավանական են դարձնում, որ նա Սյունյաց երկրի խառակրոն, անապատական կենցաղավարություն ունեցող մենաստաններից մեկը պետք է եղած լինի:

Հերերի ա. Սիոն մենաստանն առավել հետաքրքիր ու նշանակալից է իր ճարտարապետական-կառուցողական ձևերով և հարուստ վիժագրություններով, որոնք կարող են կարևոր նյութ ծառայել հայ պատմագրության համար:

Մենաստանի հյուսիսային կողմի եկեղեցին կոչվում է ա. Սիոն և որոշակի կերպով նկատվում է, որ դա ամենահին-սկզբնական կառուցվածքը պետք է լինի (ՈՒ. 2): Ծեցքի կառուցման, ճարտարապետական ձևերի մշակումը՝ կենտրոնագմբեթ, խաչաձև հատակագիծ ունեցող և քաղիլիատիպ ձևերի որոշակի միացումն է, որսիսի հանգամանքը եզակի երևույթ է հայկական ճարտարապետության պատմության մեջ և միաժամանակ վկայություն է այն բանի, որ եկեղեցին պետք է կառուցված լինի է—Ը դարերում:

Եկեղեցու հատակագիծն արտաբնու էրկարածիգ ուղիղ-քառանկյունի տեսք առնի, իսկ ներսից՝ արևելյան և արևմտյան ծայրե-

րը մշակված են կիսակլոր արսիդի ձևով, արևելյան ծայրի արսիդում տեղադրված է ջածրիկ բեմը: Ծածկը թաղակապ է՝ երկթեք տանիքով, որը պատած է սալքարերով: Ծածկի թաղը գոտկող միակ կամարի ծայրերը հենվում են շենքի կողերի պատերի վերի մասերում ագուցված կալուսանների վրա:



Նկ. 1. Հերհերի ս. Սիոն անապատը Ոսթալ-արևելքից

Երկու մուտքերից մեկը քացվում է արևմուտյան, իսկ մյուսը՝ հարավային կողմերից, վերջինս հավանաբար քացված լինի՝ կից երկրորդ եկեղեցին կառուցելու ժամանակ: Մեկական փոքր, կամարակապ գագաթով լուսամուտներ քացվում են արևելյան և արևմտյան պատերի ճակատային մասերից:

Ամբողջ շենքը շարված է գլխավորապես ավազաքարի տարբեր մեծության կիսատաշ քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Նրկատվում է վերահողորդումների հետքեր:

Մատուր գտնվում է ս. Սիոն եկեղեցու նյութիսային կողմում՝ սրան կից և որոշակի կերպով նկատվում է, որ կառուցվել է վերջինիս հետ միասամանակ: Մոլորական ձևով կառուցված փոքրիկ մատուռ է, հատակագիծն ուղիղ-քառանկյունի է, ծածկը՝ թաղակապ, տանիքը պատած է ելել սալքարերով, որոնք ամբողջապես թափված

են: Արևելյան ծայրում ունի կիսակլոր փոքրիկ արսիդ՝ քանդված բեմով:

Միակ մուտքը հարավային կողմից է, որը քացվում է ս. Սիոն եկեղեցու մեջ: Այդ հանգամանքը հավանական է դարձնում, որ մատուրը ծառայելիս է եղել եկեղեցու համար որպես ավանդատուն: Ամբողջ շենքը շարված է անտաշ քարերով՝ կրաշաղախով միամուղված:

Երկրորդ եկեղեցին, որն արձանագրությունների մեջ կոչվում է Աստվածածին գտնվում է ս. Սիոն եկեղեցու հարավային կողմում՝ ճրան կից (Ոկ. 2): Ներսում, հարավային պատի վրա փորագրված ընդարձակ արձանագրության համաձայն (արձանագրություն Ա), եկեղեցին կառուցել է Մագիստրոսի թոռ, Վասակի որդի Պարոն Վահրամը 1282—1283 թվականներին:

Այս եկեղեցին համեմատաբար ավելի փոքր է, հատակագիծը դարձյալ ուլիղ քառանկյունի տեսք ունի, ծածկը թաղակապ է՝ երկթեք տանիքով, որը պատած է սալքարերով: Արևելյան ծայրում մշակված է գույգ, կիսակլոր փոքր արսիդներ՝ բարձր բեմով:

Երկու մուտքերից մեկը քացվում է արևմուտյան, իսկ մյուսը՝ նյութիսային կողմերից, այդ վերջինը տանում է դեպի կից կառուցված ս. Սիոն եկեղեցին և որոշակի կերպով նկատվում է, որ այն քացված է հետագայում՝ այդ վերջին եկեղեցին կառուցելու միջոցին:

Ամբողջ շենքը կառուցված է կապտագույն ավազաքարի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Եկեղեցու արևմտյան պատի ճակատամասում քանդակված է Օրբելյանների տոհմանիշը, վրան՝ եկեղեցու կառուցման 1282 թվականը: Հարուստ է վիմական արձանագրություններով՝ ճլիրատվական բովանդակությամբ, որոնք մեծ մասամբ եղծված վիճակում են և որոնց վրա կան 1282, 1283, 1258, 1281, 1308, 1317, 1318, 1321, 1326, 1345 թվակաները:

Մեմսատանին կից տարածվում է փոքրիկ գերեզմանատունը, որի տապանաքարերը բոլորն էլ կապտագույն ավազաքարերից են և տարբեր ձևերով մշակված, ոմանք թաղված են գետնի մեջ և մասամբ ծածկրված են հողով, իսկ ոմանք էլ տեղաշարժ են արված: Գերեզմանատանը կան բազմաթիվ իւաչքար-մահարձաններ, որոնք բոլորն էլ ունեն պատվանդաններ և պատած են հուրք ձևով մշակված քազմապիսի գեղեցիկ զարդաքանդակներով, որ գերակշռում են բուսական և երկրաչափական ձևերը:

Այդ մահարձանների մեծ մասն ունեն տապանագրություններ՝ 1283, 1291, 1310,

1410, 1413, 1435, 1649 տարեթվերով և այլն: Մահարձանների պատվանդանները թաղված են գետնի մեջ, ոմանց խաչքարերը տեղահան են եղած և վայր ընկած գետնին:

Մենաստանին կից շենքերը, որոնք ամենայն հավանականությամբ միաբանության բնակելի շենքերը պետք է եղած լինեն, միմյուսին ավերակ վիճակում են, որոնց միայն հետքերն են նկատվում՝ խորը փոսերի ձևով:

Ս. Գևորգ անապատը, որն ամենայն հավանականությամբ կառված է եղել ս. Սիոն մենաստան-անապատի հետ՝ հանդիսանալով նրա անմիջական մի մասը՝ ֆիլիալը, գտնվում է Հերհերից մոտավորապես երկու կիլոմետր դեպի հարավ և, ինչպես վկայում է նրա վրա փորագրված արձանագրությունը (արձանագրություն ԻԹ), այն կառուցել են Շաշ միայնակյացը և իր եղբայր Մաթուխը 1287 թվականին: Անապատը բաղկացած է մի փոքրիկ եկեղեցուց, որը տեղադրված է բլրի քարձր, ժայռոտ գագաթի վրա, այնպես, որ դեպի եկեղեցու ներսը քարձրանում են ամբողջական մեծ քարերից շինված քառաստիճան սանդուղքով:

Եկեղեցու հատակագիծը երկարաձիգ ուղիղ-քառանկյունի տեսք ունի, ծածկը թաղակապ է, արևելյան ծայրում մշակված է կիսակլոր փոքրիկ արսիո՝ ցածրիկ թեմով: Միակ մուտքն արևմտյան կողմից է՝ շրջանակով և ճակատակալ քարով: Ամբողջ շենքը կառուցված է մաքուր տաշված ավազաքարերով՝ կրաշաղախի միացությամբ: Սալահատակված է, տանիքը նույնպես պատած է սալքարերով:

Եկեղեցին արևմտյան կողմից ունի քաջ սրահ, որի ծածկը իրագործված է երեք խաչուր սալքարերով, նման մի սալքար էլ ուղղված է սրահի արևմտյան ճակատին:

Այդ սրահի առջևում, ձորակերպից, մասամբ սրահի մեջ, իրար կողքի, մի շարքով կան հինգ գերեզմաններ՝ երեսները հարթ-տափակ ձևով մշակված շատ մեծ տապա-նաքարերով, որոնցից մեկի վրա փորագրված է 1383 թվականը:

Կապույտ քերդը Այունյաց երկրի քազմաթիվ ու հետաքրքիր ամրոցներից է: Նրա հետ են կապված նաև ս. Սիոն և ս. Գևորգ անապատները. վտանգի դեպքում այդ ամրոցում էին ապաստանում հիշյալ մենաստանների միաբանությունը, ինչպես և շրջակա գյուղերի բնակչությունը:

Քերդը գտնվում է Հերհեր գյուղից մեկ կիլոմետրաչափ դեպի հարավ-արևելք, փոքրիկ լեռան սրածայր գագաթին: Վերջինս բոլոր կողմերից եզերվում է անմատ-

չելի քարձր քարափներով, որոնց խոցելի-թույլ տեղերն ամրացված են արհեստական քերդապարիսպներով: Այդ քարափների մեջ կան բազմաթիվ բնական և արհեստական քարայրեր, որոնց մի մասի մուտքը ժայռերի փլման հետևանքով ծածկվել-փակվել են: Ամրոցի շրջապատում, լեռան ամբողջ լանջերին թափված են կավե ամանների բեկորներ՝ վառ կարմրագույն



Նկ. 2. Հիրհերի ս. Սիոն անապատը արևմուտքից

ներկով ներկված, որը բնորոշ է վաղ միջ-նադարին:

Հերհեր գյուղի հուշարձաններից խիստ ուշագորավ է նաև գյուղամիջի ս. Գևորգ գորավարի անվան եկեղեցին: Սա եռանկյ ձևով կառուցված մի ընդարձակ սրահաձև շենք է, որը վկայում է հին Երբերն գյուղի ընդարձակածախլ և քազմամարդ լինելու մասին:

Թե երբ է կառուցվել այդ հետաքրքիր հուշարձանը, ստույգ հայտնի չէ: Ժամանակի ընթացքում նա ավերվել է, որից հիմնապատերն են միայն պահպանվել: Հետագայում, հավանաբար ԺԷ—ԺԸ դարերում, վերակառուցում են այդ եկեղեցին՝ պահպանելով նրա սկզբնական հատակագիծը: Հենց այդ հանգամանքի շնորհիվ էլ, չնայած նրա ուշ ժամանակի վերակառուցմանը, նա, որպես ճարտարապետական կառուց-

վածք, պահպանել է իր երբեմնի ուշագրավ ու հետաքրքիր տեսքը:

Ներկայիս՝ վերակառուցված շենքը նույնպես եռամսկ բազիլիկ ձևով է. ներսում ունի չորս մույթեր և դրանց դիմաց պատերից կից ձգվող կիսամույթեր: Ծածկը թաղակապ է: Արևելյան ծայրում մշակված է կիսիկոթ մի արսիոջ՝ բարձր բեմով, որի երկու կողմերում կան մեկական խորաններ: Միակ մուտքն արևմտյան կողմից է: Ամբողջ շենքն ալարտված է տարբեր մեծությամբ անտաշ բարերով՝ կրաշաղախի միացությամբ: Պատերի մեջ օգտագործված են հին շենքին պատկանող բազմաթիվ քեկորներ, հին գերեզմանաքարեր ու խաչքարեր՝ կենցաղային և այլ ձևի հետաքրքիր զարդարանդակներով և արձանագրության մնացորդներով, որոնք ավելի են ընդգծում հուշարձանի պատմա-ճարտարապետական նշանակությունը: Եկեղեցու շուրջը տարածվում է մի ընդարձակ գերեզմանատուն, որ կան բազմաթիվ շատ հետաքրքիր խաչքար-մահարձաններ, ինչպես և կենցաղային բնույթի և այլ ձևերի զարդարանդակներով շատ տապանաքարեր, որոնց մեծ մասն ունեն տապանագրություններ:

Հերհերի սահմաններում պահպանված նյութական մշակույթի հուշարձաններից հիշատակության արժանի է նաև ս. Գրիգոր Լուսավորչի անվան մատուռը, որը գտնվում է գյուղի հարավային կողմում, այգիների մեջ, լեռնային հեղեղատի աջ ափին, բարձրադիր վայրում: Մատուռի վրա փորագրված արձանագրության համաձայն այն կառուցել է ոմն Գրիգոր 1286 թվականին:

Խիստ հետաքրքիր ու արժեքավոր է նաև գյուղի մեջ, երկու ձորակների միացման վայրում, գտնվող գեղաբանդակ խաչքար-մահարձանը, որը կանգնեցրել է Գորգը 1282 թվականին՝ պատերազմում սպանված իր հոր՝ Վահրամի հիշատակին, ինչպես այդ մասին վկայում է խաչքարի պատվանդանի վրա փորագրված արձանագրությունը (արձանագր. ԻԸ):

ՎԻՄՈՎԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՍԻՈՆ ԱՆԱՊԱՏ

Ա. Աստվածածին եկեղեցու հարավային պատի վրա, ձերսում

- 1. Կամա հզարիմ Աստուծոյ, այս գիր լիշատակի և արձան անջնջելի արքայապատրոզիմ Վարհամայ՝ որդոյ վա-
- 2. ակա, թում մեծին Մազեստրոսի և քարեպաշտ որդոյ Սանդղտոյ՝ ամուսնոյ իւրոյ և գեղեցիկ
- 3. պտղոյ Շոցայ Ուքամայ: Են քաջազարիմ և մեծիմ ... որիմ Վարատայ և քրիստոսասէր մարմ իւրոյ

4. Մամքամայ: Են բարևտոմմիկ արիորդ ամուսնոյն իւրոյ (Գոնցայիմ), որ մեծաջան աշխատութեմ

5. Ծիցեցին գեկեղեցիս և բազում սպասից զարդարեցին լաղազս արքայութեան իմոց (և երկ)արութեան կեմաց ամուսնոյ և զարմիցն իւրոց Ուքամա, Հասամա և Ուելր

6. (տուաք ի) սուրբ ոխտոս զհարաթաղիմ այգին վերին հատով... թվ. 21Բ (1283):

Բ. Նույն տեղ, մախորդից ներքև

- 1. Ես Մամախաթում, իմ որդիք Աարգիս, Ծահ-
- 2. Էրդ զմեր՝ սուրբ Միոմի տակի հողմ իմ՝
- 3. ոխտոս տվաք. վարդապետ միաբանք: Ան պատարագ սահմանեց-
- 4. իմ Յակոբա (և) վարդանաց տամիմ՝ ամխափամ:
- Ի թվ. 2ԷԵ (1820):

Գ. Նույն տեղ, մախորդի ներքևում

- 1. Ես Դավիթաք զիմ Ոոզոյ քածիմ ի սուրբ ոխտոս
- 2. տվի. վարդապետ միաբանք :Ան պատարագ բվիմ իմն սուրբ Հոի-
- 3. փսիմէիս տամիս:

Դ. Հարավային կողմի արսիոյի բեմի առաջամասում

- 1. Եամա հզարիմ Աստուծոյ ես վարդան վարդապետս զԱսարանոց-
- 2. իս չարեքմ ի հիւսնէմ գնեցի ի սուրբ ոխտոս տվի: Մի-
- 3. արանքս զսուրբ Աստուածաննի փոխմամն մև պատարա-
- 4. գ իմն պարգևեցիմ: Ով խափանէ՝ դատի լԱստուծոյ:
- 5. թվ. 2ԾԷ (1808):

Ե. Հյուսիսային կողմի արսիոյի բեմի առաջամասում

Յամում Աստուծոյ ես Կուկորս և ամուսիմ իմ խէրխան զԿաւարտիմ հողն տուաք ի սուրբ ոխտոս. վարդապետ և միաբանք զսուրբ Աարգիմ :Բն պատարագ սահմանեցիմ՝ :Ան խէրխանիմ, մև Հուցիմ: Ով խափանէ՝ դատի լԱստուծոյ: Թվ. 2Խ (1291):

Զ. Նույն եկեղեցու արևմտյան պատին, ներսից

Կամամ Աստուծոյ ես Բերդակս և ամուսիմ իմ Խաթում զսուրբ Յովհաննէսի ոխտոս տուաք զինչ այլէ հոգոյ քածիմ: վարդապետ և միաբանք :Բն պատարագ սահմանեցին Յովանո տամիմ՝ :Ան ինն՝ Բերդակիս, :Ան Խաթուցիմ: կատարիչք արթմիմ լԱստուծոյ: 2Կ (1821) թվին:

Է. Հյուսիսային պատին, ներսից

Կամամ Աստուծոյ ես Մամաք՝ դուտոր Հասամայ և իմ որդի Վաղթանկ... սուրբ Միոմի տակի հողմ... ի սուրբ ոխտոս տուաքս վարդապետ և միաբանք :Բն պատարագ սահմանեցին Ծառզարդարիմ՝ :Ան իմն, :Ան իմ որդոյմ՝ Սեւադից: Ով խափանէ՝ դատի լԱստուծոյ թվ. 2ԿԷ (1818):

Ը. Նոյն տեղ

Կամա Ռգարի՞մ Աստուծոյ եւ Ամբատ՝ որդի Լիպարտի, յազգէմ Արպելեա որ ի Մար գեթի կացի, կամաւքն Աստուծոյ ազատեցայ. զամուսին իմ Ոյսթոզ, որ յետ :Բ: ամի փոխեցաւ (առ Քրիստոս), եւ Ամբատ գԴրուցա քրին Ռողմ սուրբ Աստուածածինս տոյի աճգարութեամբ: վարդապետ և միաքանք ետում ամՆՈ ՀամբարձմանՈՍ (պատարագ) իճձ՝ Աղմբատիս: Ով՛ իմ ազգէս կամ յատարէմ զՌողմ ևկեղեցոյս հանէ կամ ժամՈ չառնէ՝ Աստուծոյ ամենակայ քերտնէն ճողված եղիցի և Յ. Ժ. Ը. հայրապետաց կապած: ի թվ. Հայոց 242 (1817):

Թ. Նոյն Աստվածածինն եկեղեցու արևմտյան պատին, մուտքի հարավային կողմում, արտաքրտտ

1. Թվ. 20 (1258). եւ տէր Ատեփանոս Սիւնեաց ար-
2. Քի եպիսկոպոս զմեր հայրենի
3. զեղմ Զակող ի վանս սուրբ ուխտս տվաք,
4. հայրենիքս ժողովորդ տվի յիշատակ
5. Ռոզոյ իմոյ. Ով որ հակառակ կա :Ե:Ժ:Ը:
6. սուրբ հայրապետաց նզ-
7. ոված: եւ Յակոբ մի-
8. արանցաց սուրբ ուխտիս
9. միաքանք :Ա: ժամ
10. տանձանցիմ սուրբ Յակոբին տանին:

Ժ. Նոյն տեղ, մուտքի ճակատին

Թ(վիմ) 21Ա (1282)

ԺԱ. Նոյն տեղ, մուտքի հյուսիսային կողմում

1. Փոխմամ Աստուածածնի
2. շաքաթ արն:

ԺԲ. Նոյն տեղ, նախորդի ներքևում

1. Կամա՞ն Աստուծոյ եւ Գրի-
2. զոր՝ Դավիթն որդի, ի-
3. Առինճ խաչի տափին
4. այգին ի սուրբ ուխտս տվի
5. վասն ամուսնին իմ Ատի-
6. իճ. վարդապետ միաքանք տամ-
7. մանցիմ :Բ: պատարագ
8. Ասփի: կատարիչք արիճիմ յԱստուծոյ.
9. Ով զայն այգին այս ու-
10. խտէ՞մ հանէ՛ յԱստուծոյ ձգո-
11. ված եղիցի. թվ. 242 (1817):

ԺԳ. Նոյն տեղ, նախորդից հյուսիս

Սուրբ Գրիգորի տանին:

ԺԴ. Նոյն տեղ, նախորդից ներքև

1. Կամա՞ն Աստուծոյ եւ Կարապետս և ամ-
2. ուսին իմ Տիկնաց-տիկինն զմեր Ռոզոյ
3. քամին ի սուրբ ուխտս տվաք: վարդապետ միաքանք :Բ: պատարագ
4. տվի՞մ՝ մին իճձ, :Ա: ամուսնին իմ: կատարիչք արիճիմ յԱստուծոյ:

ԺԵ. Նախորդի ներքևում՝ շարունակարար

1. Կամա՞ն Աստուծոյ եւ Կոկորս զԱղբերկա Ռողմ Յաղջրտափ

2. ոսկոյ զճնցի՝ սուրբ ուխտս տվի: Միաքանք :Ա: պատարագ տվին իմ
3. հարմ Աարգսի՝ սուրբ Գեորգի՞մ տանին: կատարիչք արիճիմ յԱստուծոյ:

ԺԶ. Նոյն Աստվածածինն եկեղեցու հարավային պատի արևելյան եզրին, արտաքրտտ

1. Կամա՞ն Աստուծոյ եւ Աէրոբ ար-
2. եղէս ստի Քաշարաթի
3. Ռողմ՝ Զաղացի դում
4. տվի վախմ սուրբ Աստվածածինս
5. (ով) հակառակի՝ աճինած:

ԺԷ. Նոյն տեղ, նախորդի արևմտյան կողմում

1. Կամա ամենակային Աստուծոյ և իշխանուքամք մեճ պարոմ Բուրթլինն և
2. որդոյ իրոյ Բեշքեմա և Նեխնամիկինն եւ Գոնցէ, ամուսին Վարհամայ՝ որդոյ Ծահուռնե-
3. ցո (կամ Ծահուռնեցո) դուստր Խոսրովկա, յազգէ Տարսահնեանց ետու հալայ արդեանց և Ռե-
4. բնեաց իմոց ի սուրբ ուխտս՝ վասն Ռոզիորդեաց իմոց Ուքանա, Ամատին, որ տղա արտաք ի
5. Քրիստոս կատարեցան դիտ ի սուրբ Գեորգմ իր հերեմաքն, իր խաչի՞մ արտաքն ի Համարա-
6. տեան, զԳագարափոսին եզին, :Բ:Բ: (2000) դեկամի գնուածք ու :Ե: (100) դեկամ գնուած:
7. քամբակ Ռողմն ի Համարատիսմ ու զոր Զաքարին Ռողմ ի Յաղջրտապ: Եւ միա-
8. քանքս հաստատեցին ի տարին :ԺԲ: պատարագ Սուրբ խաչին տանին՝ :Գ:
9. Ամատին, :Դ: Ուքանա, Քառասնից տանին :Դ: պատարագ՝ :Բ: Գոնցից, :Բ:
10. Քոխտենո: Կատարչքն արիճիմ յԱստուծոյ և խափանողքն դատին ի Տեառնէ:
11. Ով հակառակ կա՝ մերոց կամ յատարաց, մեր մեղացն տէր է առաջի Քրիստոսի: Թվ. 200 (1945):

ԺԸ. Նոյն տեղ, նախորդի արևելյան կողմում

Կամա՞ն Աստուծոյ եւ Սասանան (կամ Ամսանան)

Մեծաստանին կից գերեզմանատան տապանագործությունները

ԺԹ. Մի խաչքարի վրա

Կանա՞ն Ռգարի՞ն Աստուծոյ, յարհիական և քաչապետութեան տեառն Յովամիսի և ի պատրոմութեամբ տեղոյս՝ Ուքանա, Հատանա, Ամատին, եւ ճուտատ ոգի վարդան վարդապետ կանգնեցի զսուրբ Նշանս ի փրկութիւն իճձ և հարազատին իմոյ Միսիթարա և մերոցն, որ ի սմա Սկարեայ կան տիպ ճշանաց սուրբ Գրիգոր: Ի թվ. 200 (1910):

Ի. Մի այլ խաչքարի վրա

Թվ. 21 (1281): Եւ Աղբարոս կանգնեցի խաչս որդոյ իմոյ Ծահագի՞մ՝ յաղաթս յիշէք:

ԻԱ. Մի այլ խաչքարի վրա

Եւ Յակոբ արեղէս կամզնեցի զխաչս հոգայ փրկուածսն Սերովբէ եպիսկոպոսի. թվիս ՌԻԸ (1599):

ԻԲ. Մի այլ խաչքարի վրա

Եւ Ապաշխարողս կամզնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ իմոյ և եղբարց իմոց և քովանդակ ազգակցաց:

ԻԳ. Որսի տեսարամ պատկերող քանդակներ ունեցող մի տապանաքարի վրա

Այս է համզիստ Ղամպարիմ, որ կիտարէ հանգեալ ի Քրիստոս.

Թվ. ՌԸ (1559):

ԻԴ. Մի այլ տապանաքարի վրա

Եւ վարդան վարդապետ կազմեցի տապանամիս ամուսնոյ Աթերոյս. ոչ որդի ունէր ոչ աղբեր, ով կարդեք՝ յիշեցեք: Ի թվ. 21սԵ (1286):

ԻԵ. Վերջիմիս մոտ եղած մի խաչքարի վրա

Եւ Հայրապետ եպիսկոպոս կամզնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ Մարիմայից. յիշեցեք ի Քրիստոս: Թվ. ՌԴԸ (1848):

ԻԶ. Մի այլ խաչքարի վրա

Խաչս փրկութիւն հոգոյ Հայրապետ եպիսկոպոսից: Թվ. ՌԴԸ (1848):

ԻԸ. Գյուղամիջի ս. Գևորգ եկեղեցու հարազայից կողմուս եղած մի խաչքարի վրա

Կաման Աստուծոյ եւ Ռաստակ քահանայ կամզնեցի զխաչս իՅՑ և ամուսնոյ իմոյ. թվիմ 21Թ (1280):

ԻԸ. Գյուղի մեջ, երկու ձորակների միացման վայրում գտնվող խաչքարի վրա

Եւ Գրգ, որդի վարհամայ, հայր իմ, որ մնաց ի պատերազմի՝ կամզնեցի հայսմ խաչս. յիշեցեք ի Քրիստոս. Թվ. 21Ա (1282):

Ս. ԳԵՎՈՐԳ ԱՆԱՊԱՏ

ԻԹ. Եկեղեցու արևմտյան պատի արտաքին երեսի վրա՝ մուտքի շուրջը

Կամառ հզարիմ Աստուծոյ եւ Ծաշ միակեցս և հարա-

զատ եղբայր իմ Մաթուխն շիմեցաք զսուրբ եկեղեցին

խաղազս փառաւորելոյ սուրբ Աշանիս որ է յամուս սրբոյն Գեորգա զարույվարից, որ

յաղազս համդերձեալ արքայութեան յուսոյն քա-

զմաչարչար աշխատութեամբ

մեծաջանի ի յաւարտումն ամենայ կուտարեցաւ ի թվ. ՉԽԶ (1297), ի հայրապետութեան տէր Ստեփաննոսի Արմեաց աթոռակալի, ի պարոնութեան այսմ տեղոջ այպանն իշխանս վարդապետ և բարեպաշտուհոյ Մամքանիմ և ամուսնոյ իորն Գոնցաիմ և գեղեցկապտուղ շտաւեղացն Ուքամա և Հասամալ: Արդ՝ աղաչեմք ձեզ միովն Քրիստոսի յիշեցէք զԾաշ միակեցս եւ զՅոնոյսն իմ՝ ի մաքրափայլ յաղաթս ձեր. եւ որ ապաստար լինիք փառազարդ խորամիս պատարագն զԻ: ար Պարսամա Գ տամիմ զսուրբ Գրիգորիցն զՄառգարդարիմ և զաւագ հինգ շարաթիմ իՅՑ մատուցանեք՝ Ծաշա, վասն պիրոյն Քրիստոսի՝ անխափան, և որ անփոյթ առնէ՝ դատի յամենակալ քերամեն Աստուծոյ:

Լ. Կապույտ բերդի մոտ, սարալամջի մեծավոր մեծ ժայռի վրա

1. Ի թվականիս Հայոց :ՅԴԸ (1148). Եւ Գրիգոր անարժամ

2. կրամատր ի հայրապետի Տեառն Յովանիսի մեծահամ-

3. քա յուսարոչի, եկի ի տեղի յայս և քնակեցաւ ի տան մեծապատիվ

4. քահանայ՝ Գազիկ իրիցոյ՝ աթոռակալ եկեղեցոյ և իշխան ժողով-

5. րդեամ, եղե ես ընդ ժառանգորդս մորա՝ կայի ի միասիմ և էր պակաս-

6. եալ քահանա ի տանն մորա ի քազում ժամանակաց, սարկաւագն տղա

7. հասակաւ էառ զպատիվ քահանաութեան ի կիսարեա ժաման-

8. ակա փոխեցաւ առ Քրիստոս և էաճ խաչար յետամնաց իրոց և Ահնն քոյր յուրախ ար-

9. արեալ ի յաչաց տեսութենէ և մա էր յույս կենաց մորա, շիջաւ յոյսն իմ և

10. մվագեցաւ հոգի մի դառն արտատվաց, և ստացա իՅՑ միսիթար շիմ-

11. ել զեկեղեցիս ի բարեխաւսութիւն հոգոյ իմոյ, ի յազմութիւն

12. աշխատարարաց, ի հաստատութիւն մանկանս իմոյ Գրիգորոյ և Յակ-

13. որայ ումն Սարգսի վերակացվի ժողովոյս...

14. Աշխն՝ դուստր Գորգա իրիցոյ և քոյր Եփրեմի, ոյք կարդայք.....:



ԵՐՎԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

(Հոգևոր ճեմարանի դասախոս)

ԵՐՎԱՐԱՄՅԱ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր 18 հունվար 1873 թվակիր կոնդակով 1873 թվականը հայտարարեց Ներսես Ծնորհալի կաթողիկոսի մահվան ուրօհարյուրամյակին նվիրված հոբելյանական տարի: Հայաստանում և Ափյուռքի բոլոր հայաշատ վայրերում եկեղեցական արարողություններով, պաշտոնական և գիտական նիստերով վերակոչվեց հայկական ողջ միջնադարի այդ մեծագույն մտածողներից մեկի հիշատակը: Չանազան հրատարակություններով և զեկուցումներով վեր հանվեցին Ծնորհալու մեծ ավանդները հայ գրականության մեջ ընդհանրապես և հայ հոգեվոր մշակույթի ասպարեզում՝ առանձնապես: Անդրադարձան նրա եկեղեցական հասարակական գործունեությանը, ընդգրծեցին նրա ողջ մեծությունը որպես մեծ անհատականություն ԺԲ դարի հայ քաղաքական-մշակութային կյանքում:

«Էջմիածին» ամսագիրը հոբելյանին նվիրված հատուկ համար լույս ընծայեց, ուր հանդես եկան զանազան հեղինակներ, ուսումնասիրության նյութ դարձնելով Ծնորհալու կյանքը, գրական ժառանգությունը, միջեկեղեցական հարաբերությունների մեջ նրա դերը և այլն: Այս բոլորի մեջ նաև անդրադարձան Ծնորհալի երգեցողի տաղանդին և ստեղծագործությանը, բայց միայն որպես ընդհանուր հայտարարություններ, առանց խորը վերլուծության: Իսկ այդ ոլորտը մնում էր չուսումնասիրված, բայց

և շատ անհրաժեշտ՝ ամբողջացնելու համար մեծ կլայեցու դիմանկարը, որովհետև Ներսես Ծնորհալին նույնքան մեծ երաժիշտ է և երգահան, որքան մեծ քանաստեղծ է կամ եկեղեցական:

Ահա այդ կարիքը լրացնելու է կոչված, թեև ոչ վերջնական եզրակացության դերով, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակված «Ներսես Ծնորհալին երգահան և երաժիշտ» գիրքը¹: Հեղինակն այն նվիրել է Ներսես Ծնորհալու մահվան ուրօհարյուրամյակին: Նիկողոս Թահմիզյանը հայ երաժշտության պատմության մեջ զբաղվող մեր որոնող ու քազմարդուն քանասերներից է, որը հանրապետական, միությանական, նաև արտասահմանյան արևելագիտական մասնուում քազմաթիվ հոգվածներ է տպել հայ երաժշտության պատմության այս կամ այն հարցի կամ դեմքի մասին, շատ հաճախ ձեռագրական տվյալների վրա պատասխան է տվել այդ հարցերին: Թահմիզյանի այս գիրքը, ինչպես ցույց է տալիս մատենագիտության մեջ նշված ձեռագրական աղբյուրների քազմությունը, հեղինակի երկար տարիների որոնումների արդյունքն է, ուստի և այդ-

¹ Ն. Կ. Թահմիզյան, Ներսես Ծնորհալին երգահան և երաժիշտ, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, էջ 248:

քանով ենթակա լուրջ քննության և արժանի գնահատման:

«Գիրքը,—ինչպես գրված է ծանուցագրում,—նախատեսված է հայ երաժշտության պատմությանը զբաղվող մասնագետ-



ների, ինչպես նաև միջնադարյան մշակույթի հարցերով հետաքրքրվող արվեստագետների և պատմաբանների համար»: Այս առաջադրված լսարանով է պայմանավորված այլևայլ հատվածների խիստ մասնագիտական-երաժշտական քննությունը:

Գիրքը սկսվում է կենսագրական համառոտ տեղեկություններով, առանց խորանալու Շնորհալու կյանքի մանրամասների մեջ: Պատմաշրջանը քննվում է հիմնապես մշակութային նվաճումների տեսակետից, որոնք աճշուշտ հիմնավորվում են ժամանակի քաղաքական հանգամանքներով: Բայց Շնորհալու մեծությունը, ըստ հեղինակի, չի պարփակվում միայն կյիվկյան դպրոցի կամ համահայկականի շրջանակ-

ներում, այլ տարածվում է համաարևելյան մշակույթի պատմության մեջ: Այս տեսանկյունից էլ նա անդրադառնում է հայ-բյուզանդական, հայ-ասորական, հայ-պարսկական և հայ-լատինական երաժշտական փոխհարաբերություններին, չնայած բավական սեղմ: ԺԲ դարում հայ-բյուզանդական երաժշտական կապերը սերտ չէին: Ծնորհալին հիմնորեն էր օգտվում հույն եկեղեցու հին հայրերի ժառանգությունից, իսկ հույների վերաբերմունքը Շնորհալու նկատմամբ կա այն խոր վշտի մեջ, որ ապրեցին նրանք կաթողիկոսի մահով: Հայ-լատինական կապերի մասին նշվում է այնքանը միայն, որ յուրացվեց ծեսի ճոխությունը: Հեղինակը ափսոսանք է հայտնում, որ հայերս անհաղորդ մնացին ձայնագրության արվեստի կատարելագործման և բազմաձայնության նախապատրաստման շարժումներից: Հայ-ասորական կապերի հարցում ևս Շնորհալին տարբերակում է արժեքավորը և հինը ասորական երգարվեստում և դիմում է մեծ հայրերի ստեղծագործությանը²: Հայ-պարսկական կապերի համար բնորոշ է վաղեմի հաղորդակցությունը և այն, որ Շնորհալին զարգացնում է «խոսրովային» կոչված ոճը³: Այս առիթով ընդհանուր եզրակացությունը հետևյալն է. «Շնորհալին մեկն էր այն մշակներից, որոնք իրենց գործունեության մեջ այլամերձ-պահպանողական դիրքեր չգրավելով, միևնույն ժամանակ երբեք չհեռացան հայրենի տոհմիկ ավանդույթներից, այլ լոկ զարգացրին դրանք»: Աճշուշտ ցանկալի կլինեք, որ այս մասը ավելի ընդարձակ ընդգրկում ունենար:

Գրքի ուշագրավ մասը, ինչպես և պետք էր սպասել, նվիրված է Շնորհալու երաժշտական ստեղծագործության խմբավորմանն ու գնահատմանը: Հեղինակի առաջին գործը եղել է՝ ճշգրտել Շնորհալուն պատկանող գրական հենքը Ծարակնոցում և այլ պաշտամունքային գրքերում, որովհետև «Չկա հայկական միջնադարյան ծիսական-երաժշտական մի գիրք, որով զբաղված չլինի. Շնորհալին», ուստի և նոր երգեր է հորինել ծեսի այս կամ այն մասը ճոխացնելու համար: Իսկ այդքան ցրված երա-

² Հայ-արևելյան երաժշտական կապերի մասին տես հեղինակի «Ներսես Շնորհալին և արևելյան քրիստոնեական երգարվեստը» հոդվածը («Էջմիածին» ամսագիր, 1878, № ԺԲ), որտեղ նոր հիմնավորումներով աչելի ընդարձակ են քննվում այդ կապերը, հատկապես Շնորհալու արվեստի ճկատմամբ:

³ Այս ոճի էությունը մասին ընդարձակ տեղեկություններ կան գրքում (էջ 28—29):

ծըշտական հատվածների տարբերակումը, որոնց զգալի մասը հասել է առանց հեղինակի հիշատակման, և որոշակիորեն հեղինակին հատկացնելը պահանջում է քանասիրական մեծ հմտություն և լայն ծանոթություն մեր հոգևոր-պաշտամունքային, գրական-երաժշտական ժառանգությանը: Թահմիզյանը իր հիմնավորումները կատուցել է նաև երգերի երաժշտական բաղկացուցիչի հաշվառումով, գտնելով ընդհանուր բնորոշը Շնորհալու երգարվեստի համար: Հեղինակը նկատի է առնում նաև կամբրոնացու, Գանձակեցու և այլոց հիշատակություններն ու ավելի ուշ շրջանի քանասերների եզրակացությունները՝ կատարելով ճշգրտումներ, չնայած նրանց (հ. Գ. Ավետիքյան, հ. Ս. Ամատունի և այլք) աշխատանքի արդյունքը իր մեծագույն մասով համարում է ընդունելի և համոզիչ: Հետո քերում է «Զայնագրեալ Շարակնոցում» Շնորհալու երգերի ամբողջական ցուցակը. այս առթիվ բերված 58-րդ տողատակը շատ արժեքավոր հաստատումներ է պարունակում մեր շարականների հեղինակային պատկանելության մասին, սկսած Մեսրոպ Մաշտոցից մինչև Գրիգոր Վկայասեր: Հետո հեղինակը շեշտում է, որ բերված ցանկը ամբողջական չի համարում և եզրակացնում է. «Շնորհալու շարականները, անկախ դրանց թվաքանակից, հայ Շարակնոցում առջնակարգ տեղ են գրավում իրենց թեմատիկ բազմազանությամբ ու երաժշտա-քանաստեղծական քարձր արժանիքներով»: Վստահելի օրինակներ են բերվում նաև ցույց տալու համար, որ Շնորհալու շարականներից զգալի չափով եղանակներ են անցել ս. պատարագի երգերին և այլ ծեսերին: Շնորհալին անդրադարձել է նաև նախորդ դարերի մեր եկեղեցական երգարվեստի արժեքավոր գործերին, և այդ երգերը Շնորհալու շնչով նոր կյանք են ստացել, օրինակ «Նորահրաշք»: Շնորհալու երգարվեստը դառնում է կատարելատիպ, յուրացնելով նախորդ դարերի ողջ ավանդույթը, և հենք՝ հետագա դարերի զարգացման համար: Հեղինակը նկատում է սակայն, որ Շնորհալու երգերը յուրացրել են երբեմն ոչ թե ճոխացնելով, այլ խանգարելով Շնորհալու իսկ երգերի մեղեդիական ամբողջականությունն ու մաքրությունը: Այս իմաստով ավելի վստահելի է համարվում եկեղեցական պահպանողական միջավայրում կատարված քանավոր ավանդումը սերունդից սերունդ:

Թահմիզյանը Շնորհալու երգային ստեղծագործությունը ըստ ոճի բաժանում է գրչխավոր երեք խմբերի, որոնցից յուրաքանչյուրը ունի իր յուրահատուկ կողմը, որով

տարբերվում է մյուսից: Գծագրվում են Շնորհալու երգարվեստի ընդհանուր բնորոշ կողմերը. Շնորհալու ստեղծագործությանը, հատկապես «երգերին» հատուկ է գրական խոսքի և մեղեդու սերտ կապը, երբ քանաստեղծությունը իր կշռույթով թելադրում է եղանակը, օրինակ «Նորաստեղծեալը»: Շնորհալու արվեստը, քարձրանալով նախորդ դարերի նվաճումների վրա, չկրկնեց այն, այլ մեր հոգևոր արվեստը հարստացրեց մեղեդիական նյութի թարմությամբ, ստեղծելով տարբեր կշռույթի գործեր քայլերգայինից՝ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» մինչև լայնաշունչն ու մեղմալիքը՝ «Որ զխորհուրդ քո գալստեանդ»: Շնորհալու երգերը առանձնահատուկ են նաև ձևի ավարտվածությամբ, մեղեդիական ամբողջականությամբ: Իսկ խմբերը ներկայացվում են այսպես:

Առաջին խումբը շարականներն են, արձակ քանաստեղծությամբ և վիպական շնչով՝ սաղմոսատիպ, ծորերգային և ավելի ազատ զարդոյրոմներով ծանր ստեղծագործություններ: Այստեղ ավելի մեծ դեր է խաղում հայ շարականագրության ամենակենսունակ ավանդույթների յուրացումը, զարգացնելով ու ծաղկեցնելով եղանակները:

Երկրորդ խումբը կազմում են գանձերը, տաղերն ու հորդորակները, որոնք բնորոշ են մեղեդիական ազատ ռոմով, երբեմն քաղզարդոյրոմներով և ընդարձակ ձայնածավալով: Այս ոճը նույնպես իր արմատները ունի վաղ միջնադարում, բայց առավել սերտ է առնչակցվում Գրիգոր Նարեկացու տաղային արվեստի հետ: Գրիչները երբեմն Շնորհալու որևէ տաղը ընդօրինակելիս մշել են Նարեկացու մի տաղի սկզբնաբառը՝ հուշելով, որ այն պետք է երգվի Նարեկացու տվյալ տաղի եղանակով: Հետագային Շնորհալու տաղերն են դառնում չափանշում, միանալով ուրիշների ստեղծած գրական խոսքին: Այս տաղերը ունեն կատարողական դժվարություն, որովհետև այստեղ «օգտագործված է հայկական միջնադարյան երգարվեստի հիմքում ընկած գրեթե ողջ ձայնածավալը»: Տաղերի գրական խոսքը ընդարձակ չէ, ավելի հաճախ՝ մեկ տուն, իսկ վանկը ենթարկվում է ազատ երկարաձգումների:

Երրորդ խումբը ընդգրկում է այն ստեղծագործությունները, որոնք կոչվում են «երգ»: Սրանք շարականներ չեն (երբեմն շարականատիպ են), այլ հասարակաց աղոթքի ոգին արտահայտող գրական խոսք և երաժշտություն, ավելի հանրամատչելի: Գրական խոսքը խիստ չափավոր քանաստեղծություն է, իսկ եղանակը՝ սահուն,

պարզ, հավասարաչափ կշռույթային հիմքով: Այս երգերով Շնորհալին լայն շփման մեջ է մտնում ժողովրդական արվեստի հետ: Այս տեսակետից բնորոշ են Արևազայի երգերը, որանել լուսի փառաբանումը (որպես Քրիստոսի խորհրդանշ) արտահայտում է ժողովրդի հոգու մեծ ծարավը լուսի նկատմամբ:

Չնայած գրքի խորագիրը խոստանում է Շնորհալուն ծանոթանալ նաև որպես երածիշտ, այս բառի տեսարան իմաստով, սակայն գրքում ուղղակիորեն այս հարցը լուսաբանող քիչ բան ենք գտնում (բերված օրինակները որոշող չեն): Հեղինակը դա համարում է հետագայի գործ, որովհետև համարում է հետագայի գործ, որովհետև այդ բանի համար անհրաժեշտ էր ի մի բերել Շնորհալու մտքերն ու ասույթները: Նա աշխատում է Շնորհալու երածիշտական սկզբունքները բացահայտել իր ստեղծագործության բնութագրման միջոցով: Ահշտ է, յուրաքանչյուր արվեստագետի ստեղծագործությունը նրա տեսական մտնեցման կրողն է, քայց միայն դրանով սկզբունք պարզել մեզ միշտ չի թվում, որովհետև հնարավոր է, որ ստեղծագործության մեկնաբանությունը համոզիչ չլինի: Վաղուց ի վեր բացահայտված ճշմարտություն է (և հակառակը անհասկանալի կլիներ), որ հայ հոգևոր երածիշտությունը ի սկզբանե անտի հենվել է ժողովրդական երգարվեստի վրա: Բայց Թահմիզյանը հատուկ մարմաջ է ցուցաբերում ավելի ուղղակի և ընդարձակ դարձնելու Շնորհալու արվեստի շփման կետը աշխարհիկ երգի հետ (ուզում է հավատալ, որ Շնորհալին ստեղծել է նաև աշխարհիկ երգեր): Այդ պատճառով էլ Շնորհալին հայտարարվում է իր «քարձր պաշտոններով կաշկանդված» մտածող և նրա խստությունը՝ եկեղեցում պսակի ժամանակ գուսանական երգերի արգելումը, համարվում է «ի պաշտոնե»: Մնում է զարմանալ, ինչպե՞ս կարող էր կաթողիկոսը թույլ տալ պսակի ժամանակ հենց եկեղեցում գուսանական երգեր նվագել և երգել. միթե՞ դա նշանակում էր արհամարհանք ժողովրդականի նկատմամբ: Շնորհալին «դիակալան» է անվանել դրանք ոչ թե ի պաշտոնե՝ արհամարհանքով, այլ պարզապես ի հակադրություն հոգևորի: Այսպիսի մարմաջով մենք հակասություն չենք դնում արդյոք Մեծ կաթողիկոսի գործի և խոսքի միջև, չենք փորձում նրա էությունը հոգևորից տեղափոխել խիստ աշխարհիկ ոլորտ. «Եվ այստեղ (լուսի փառաբանումով—Ե. Մ.) բանաստեղծ-երածիշտ հեղինակը այնքան է գերազանցում հոգևոր պետից, որ քառա-


ցիորեն արբենում է նաև հեթանոսական զգայական ասպրումների գեղեցկությամբ»: Պարզապես շատ է ասված. առանց այդ խտացման հեղինակի մտքերը ավելի համոզիչ կլինեին:

Գիրքը շատ բան կշահեր, ոչ միայն կառուցվածքի տեսակետից, թեև որոշ տողատակեր մտնեին բուն տեքստի մեջ, որովհետև երբեմն ավելի ծանրակշիռ հաստատում են քովանդակում, քան այն հատվածը, որի համար որպես լրացում են բերված, օրինակ 59-րդը, որտեղ այն միտքն է փաստարկվում, որ «Շնորհալու ստեղծագործությունը մի մեծ հանգրվան է, ուր գալիս, միանում են նախորդ դարերի հայկական մասնագիտացված երգարվեստի քարզվածման ուղիները, և որտեղից սկիզբ են առնում նույն արվեստի հետագա առաջընթացի շաղկիռները»: Նույնպես 76-րդը, 271-րդը և այլն:

Գրքում կան նաև որոշ լեզվական անհարթություններ, չնայած հեղինակը գրում է նախանձնելի մաքուր հայերենով, նույնիսկ խիստ մասնագիտական հատվածները, թեև երբեմն հանդիպում են խրթին տողեր: Կան նաև որոշ բառերի անճիշտ օգտագործում, օրինակ՝ խոսք (բառ-ի փոխարեն), արտահայտվելակերպ, քախվում ենք ցանկերի, կենցաղավարած ըմբռնումներ և այլն:

Գրքին կցված է 140 էջանոց բնագրերի պատկառելի հավաքածու եվրոպական ձայնանիշերով, որտեղ վերածումը «Ջայնագրեայ Ծարակնոցից» կատարվել է հեղինակային անհրաժեշտ միջատությանը, ելնելով Շնորհալու ոճի ընդհանուր բնույթից: Այս բնագրերի մեծագույն օգուտը Շնորհալու երգարվեստի կայունացումն է, մի բան, որ պետք է յուրացնեն մեր քոլոր եկեղեցիները, խայտաբղետությունից և անճշտությունից խուսափելու համար:

Ն. Թահմիզյանը գրել է մի գիրք, որը շատ բան է սովորեցնում Մեծ Շնորհալու մասին որպես երածիշտ և երգահան: Հավատում ենք, որ հեղինակը վճռականությամբ լի կշարունակի իր որոնումները և կբացի հայ հոգևոր երածիշտության նորանոր երեսներ: Այդ մասին ասում է և հեղինակն ինքը. «Տակավին երկար ժամանակ և մանրակրկիտ բազմապիսի աշխատանքներ պահանջող գործ է, և իրագործելի՝ հայագիտության զարգացման և հայոց միջնադարյան երածիշտական մշակույթի ուսումնասիրության քոլորովին այլ մի մակարդակի վրա»: Համոզված ենք, որ հեղինակն ինքը կլինի այդ մակարդակի ստեղծողներից մեկը:



ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՄՇԱԿԸ

(Հակոբ Անասյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ հայագիտության քաջաոճիկ նը-
վիրյալներից մեկի՝ քազմահմուտ մատե-
նագետ ու աղբյուրագետ, պատմաբան ու
բանասեր, Հայկական ՍՍՀ Գիտություննե-
րի ակադեմիայի Պատմության ինստիտու-
տի ավագ գիտական աշխատող Հակոբ
Սեդրակի Անասյանի ծննդյան յոթանաս-
նամյակը:

Առաջին հայացքից մեզ անհավատալի է
թվում, որ մեր անխոնջ մշակը արդեն իսկ
լրացրել է իր կյանքի 70 տարին: Անհավա-
տալի է մանավանդ այն պատճառով, որ
սույն տողերը ստորագրողը շուրջ 30 տար-
վա հաճելի հուշեր ունի կապված հարզելի
հորեկարի հետ և միաժամանակ ավելի
բան քառորդ դար գրեթե ամեն օր առավո-
տից մինչև երեկո Մաշտոցյան Մատենա-
դարանի ընթերցասրահներում ակաճատես
է լինում նրա աշխատանքային անդադրում
է քաջաոճիկ եռանդին, մեղվաչառն մի աշ-
ուստանք, որը հե ի հե շարունակվում է
նաև գիտնականի տանը, մինչև ուշ գիշեր:
Մաշտոցյան Մատենադարանում աշխա-
տողներից և կամ լատահական այցելու-
ներից ո՞վ արդյոք չի նկատել այս ժիր ու
բրիտանուսրդական կենսախնդությամբ առ-
նցուն նետազուտողին՝ միշտ պեղելիս մեր
եռնագիր ժառանգության անհատակ գան-
եղը: Եվ դարձյալ, ո՞վ արդյոք չի տեսել
նրա գոմ ու ժպտերես դեմքը, մանավանդ
այն պահերին, երբ քննական-հետազոտա-
ան երկարապատում ու տքնաչան աշխա-
տանքներից հետո նրան հաջողվել է հայտ-
աբերել ցարդ մթության քողով ծածկված
ի մատենագրի անուն և կամ կորստյան
ատուված մի բնագիր: Գիտնականի ուրա-
տությամբ համակրված կայծկլտող աչքերը
սվազույն ցուցանիշն են այն բանի, որ այդ
յանին իր շնորհիվ կատարվել է մի նոր
աչնամաքերություն, որը կարևոր մի նոր ա-

վանդ է լինելու հայագիտության գանձա-
րանում:

Այնուամենայնիվ փաստ է, որ գիտնա-
կանը օրերս, ինչպես միշտ, իր գլուխը մա-
գաղաթների դեզերի մեջ մխրճելով և ճրգ-



մեղով վերծանել դարերի յուրյան գաղտ-
նիքը, դիմախորում է իր հորեկարն հառնեսու
ու անաղմուկ և աշխատանքային նոր
սխրանքներով: Եվ իսկապես եթե այժմ մեզ
անուավատալի է թվում «յուրյամբ» անց-

կացված այդ տարիների գումարը, ապա, փորձելով մի ակնարկ գցել հորեղյարի գիտական վաստակի վրա, կարելի է լրիվ չափով համոզվել, որ նրանց ստեղծողը պետք է մի քանի լիներ նրանց վրա, քանի որ տանը թափած լիներ նրանց վրա, քանի որ նրա վաստակը առանց չափազանցության համազոր է մի անրոշ գիտահետազոտական հիմնարկության աշխատանքին:

Հակոբ Մեղրակի Անասյանը ծնվել է 1804 թ. մայիսի 15-ին Էսկիշենի քաղաքում, հանճարեղ կոմիտաս վարդապետի ծննդավայր կոտիկայից ոչ հեռու, կոտիկացի ընտանիքում¹: Իր նախնական ուսումը կոտիկայում և Կ. Պոլսում ստանալուց հետո, ուսման ծարավի պատանին հասնում է մինչև Վենետիկի Ս. Ղազար կղզին և հետպատերազմյան առաջին ուսանողության մաս է կազմում: Այստեղ դեռատի Հակոբը հիմնավոր գիտելիքներ է ձեռք բերում հայագիտությունից և եվրոպական լեզուներից՝ աշակերտելով Հ. Թադեոս Թովմանցիին, Հ. Քերոպե Չրաքյանին և ուրիշների:

Հետագայում Անասյանը բնակություն է հաստատում Փարիզում և մոտիկից հաղորդակից լինում տեղի հայ մտավոր կյանքին: Նա սերտ շփումների մեջ է եղել հայ քաղաքացիության և գրականության երախտավորներ կարապետ Բասմաջյանի, Արշակ Չոպանյանի, Ավետիք Իսահակյանի և այլոց հետ: Այստեղ էլ նա 1828 թվականից սկսած պատմա-բանասիրական բնույթի հոդվածներով իր աշխատակցությունն է բերում տեղական մամուլին: Անասյանի հրատարակած ուշագրավ հոդվածներից մեկը լեզվաբանական բնույթի էր: 1832 թ. Փարիզի «Երկունք» հանդեսում լույս տեսավ Անասյանի հոդվածաշարը նվիրված արևմտահայերեն «Ինքզինք» դերանվան շտրջ եղած բանավեճին, որի առիթը Հ. Արսեն Ղազիկյանի մի հոդվածն էր՝ լույս տեսած «Բազմավեպ»-ում:

¹ Հայկական ազգանունների ծագման մասին խոսելիս Հ. Անտոյանը ի թիվս այլ օրինակների բերում է հետևյալը. «Համալսարանում ունենք Անասյան ազգանունով մի թանասեր: Հարցրի նրան այս ազգանունի ծագումը: Նա պատմեց, թե իր պապը եղել է սակավախոս մարդ, ուստի կոչել են Սոցեմեզյան (թուրքերեն «չխոսող»): Իր հաջորդները հայերենի շարգմանելով այդ անունը՝ դարձրել են Անասյան, այսինքն չասողյան» (Հ. Անտոյան, «Էկակատար քերականություն հայոց լեզվի», հտ. 8, Երևան, 1871, էջ 770):

Ի լրացումն այս տեղեկության ավելացնենք, որ սակավախոսությունը նշանակող այդ ազգանունը գերդաստանն ունենել է դեռևս ԺԸ դ. վերջերին, իսկ հայացնողը եղել է նույնից մեր հորեղյարը:

Սակայն դեռևս այդ ժամանակից պատմաբանն իրեն զգալ էր տալիս Անասյանի մեջ: Նույն «Երկունք» ամսագրում 1834 թ. լույս տեսավ Անասյանի «Նպաստ մը հայոց ազատագրական պատմության» (ԺԷ դար). Մահտեսի Ծամուրատ և Հովհաննես Թուրունջի» հոդվածը, որով հայ պատմագրության մեջ առաջին անգամ հայտնաբերվում էր ԺԷ դարի երկրորդ կեսում տեղի ունեցած արևմտահայ ազատագրական շարժումը: Այստեղ հայտնված նախնական թեզերը հետագա տարիներից կատարված երկար և համառ պլեր-պրտումների և ուսումնասիրությունների արջոցով հիմք հանդիսացան հեղինակի «ԺԷ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» պատմագիտական ստվար հետազոտության համար, որի մասին խոսք կլինի ստորև:

Սակայն հայրենասեր երիտասարդի համար ոչ մի հրապույր չունեին օտար ափերը: Նա հավատացած էր, որ միայն հայրենիքում է հնարավորություն ունենալու՝ ամբողջովին նվիրվելու հայագիտական իր նախասիրություններին: Արշակ Չոպանյանի և Ավետիք Իսահակյանի միջամտությամբ շուտով իրականացավ հայրենաբաղձ խոստումնալից հայազեռի երազանքը և ամա 1836 թ. «Միմայ» ֆրանսիական շոգենավով Անասյանը ևս իր ընտանիքի հետ ուրք դրեց հայրենի հողի վրա և Արարատի ստորոտին նա կառուցեց իր հարազատ տունը: Հայրենիքում Անասյանը սնմիջապես աշխատանքի անցավ Երևանի պետական համալսարանում իբրև գրադարանի մատենագիտական բաժնի վարիչ և ապա պատմության ֆակուլտետին առընթեր՝ Մառի անվան կաթինետում որսյեռ գիտական աշխատող:

1841 թ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և պարգևատրվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի անունից «ՍՍՀՄ զինված ուժերի 50 տարին» հորեղյանական մեդալով: Այդ տարիների ընթացքում գտնվել է Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում, ուր մի ամբողջ տարի աշխատել է «Հայ մշակույթի տան» մատենագրարանում ստատիկով հայագիտական գրադարանի աշխատանքներին և միաժամանակ ուսումնասիրելով այնտեղ գտնվող հարուստ նյութերը ռումինահայ գաղութի հնամենի պատմության վերաբերյալ:

Հայրենիքի հանդեպ իր պարտականությունները կատարելուց հետո Հակոբ Անասյանը վերադառնալով Երևան դարձյալ շարունակեց պետական համալսարանում իր ունեցած աշխատանքները:

1847 թ. սեպտեմբերից նա հրավիրվեց

աշխատանքի Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, ուր որպես ավագ գիտական աշխատող Անասյանը գործում է մեծ եռանդով շուրջ 30 տարի անընդհատ և իր կարեկոր նպատակ է բերում հայագիտության զարգացման գործում: Ի դեպ՝ նշենք նաև, որ իբրև հայագիտության կենդանի մի հանրագիտարան, Հսկոր Անասյանի ներկայությունը պատմության ինստիտուտում, ինչպես նաև Մաշտոցյան Մատենադարանում և «Հայկական Սովետական հանրագիտարանի» խմբագրությունում մեծ չափով իր նպաստի բաժին է բերում հայագիտությանը զարգացնող մեր նորագոր սերունդների զարգացման գործում:

Նա, որպես իր գիտական աշխատանքները գերազանց կատարող, 1974 թ. Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահության կողմից պարգևատրվել է «Գովեստագրով»:

Իր և հայագիտության բացառիկ նվիրյալ մշակ՝ Հակոբ Անասյանը այքի է ընկնում նախ և առաջ իր հազվագյուտ աշխատասիրությամբ, փաստերի նկատմամբ իր ցուցաբերած մեծ բժախնդրությամբ և այդ բոլորը համատրելու և վերլուծելու ինքնատիպ մեթոդով: Նա տրորված ճանապարհներով սնցնող գիտնականը չեղավ, նրա լուրսբանջյուր մեծագրությունը և նույնիսկ հողիվածն ու անգամ գրախոսությունը այքի է ընկնում իր նորահայտ նյութերով, հայկական աղբյուրագիտությունը հարստացնելու անսահման սիրով, իր առաջ դրած հարցերը ուսումնասիրելու և վերլուծելու ակնառու կարողությամբ:

Հայրենիքում լույս տեսած նրա առաջին մեծագրական աշխատությունն է «Հայկական աղբյուրները հյուզանդիայի անկման մասին» գործը (Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1957, 150 էջ): Կ. Պոլսի անկման 500-ամյակի առիթով լույս տեսած այս աշխատության մեջ հեղինակը հայկական և օտար աղբյուրների հիման վրա վերլուծման է ենթարկում այդ անկումը նկարագրող հայկական աղբյուրների գիտական նշանակությունը: Նույն գրքում հեղինակը հրատարակել է նաև անկման վերաբերյալ Աբրահամ Անկյուրացու, Առաքել Բաղդեցու և Երեմիա Քյոնուրջյանի ողբերը՝ ձեռագրերի համեմատությամբ և անհրաժեշտ ծանոթագրություններով, որոնք լուսարանության են ենթարկում բնագրերը: Բնագրերը հավասարապես լույս են տեսել հուլյերեն և ռուսերեն: Իրա ռուսերեն մասը նախապես հրատարակվել էր «Византийский временник» պարբերականի 1953 թ. հատորում:

Սույն աշխատության արժանիքների մասին են վկայում այն չորս գրախոսությունները, որոնց նա արժանացավ և որոնցից վերջի երկուսը լույս տեսան վեցնետիկում և Մոսկվայում²:

Աղբյուրագիտական նշանակություն ունեցող վերոհիշյալ հրատարակությանը հաջորդեց Հովհաննես Կամենացու «Պատմություն պատերազմից Խորինու» մինչև այդ անհայտ ու անտիպ մնացած աշխատության բնագրի հայտնաբերումը Մաշտոցյան Մատենադարանում և նրա ռուսերեն թարգմանության հրատարակումը նախ «Պատմաբանասիրական հանդեսում» (1958, № 2, էջ 258—286) և ապա նրա հայերեն բնագրի լույս ընծայումը առանձին գրքով (Երեվան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1964, 124 էջ) ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով: Սա մի թանկագին աղբյուր է 1821 թ. լեհ-թուրքական պատերազմի պատմության վերաբերյալ և կարևոր նշանակություն ունի արևելյան Եվրոպայի թի շարք ժողովուրդների պատմության համար, ի մասնավորի լեհական և զապորոջյան կազակների համար:

Սույն նորահայտ աղբյուրի կարևոր նշանակության վեր հանման են նվիրվել սովետական գիտնական Ն. Ս. Ռաջբայի կողմից՝ Մոսկվայում լույս տեսնող «История СССР» ամսագրում (1958 թ., № 5) և լեհ գիտնական Էդ. Տրիարսկու՝ Վարշավայի «Przeegląd orientalistyczny» պարբերականում (1958 թ., № 2) հրատարակված գրախոսությունները:

Հեղինակի առավել կարևոր պատմագիտական մեծագրություններից է «ԺԷ դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում» աշխատությունը (Երեվան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1961, 442 էջ): Ընչպես նշեցինք վերևում՝ այս աշխատության շնորհիվ ի հայտ է գալիս մինչև այդ անծանոթ մնացած մի նոր օղակ հայ ազատագրական շարժումների պատմության մեջ: Դա իսրայել Օրու կողմից գլխավորվող արևելահայ շարժումից դեռևս 20 տարի առաջ Արևմտյան Հայաստանում սաղմնավորված արևմտահայ մի շարժում էր, որը միահյուսված էր միաժամանակ Օսմանյան կայսրության մեջ ապրող հույների,

² Ա. Մարտիրոսյան, «Տեղեկագիր», 1957, № 10, էջ 124—126: Ա. Մարտիրոսյան, «Բանվոր» (թերթ), Լենինական, 1957, 3 հուլիսի, № 180(8212): Լ. Քյոնուրջյան, «Բազմավեպ», Վենետիկ, 1958, էջ 222: И. К. Русныян, «Византийский временник», Москва, т. IV, 1959, стр. 215—216.

վրացիների և ասորիների շարժումների հետ: Այս շարժման վերաբերյալ հետագաում ակաճավոր պատմաբաններ Արշակ Ալաուդյանի, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի և ուրիշների կողմից հայտնված կարծիքները քուր դեպքերում ծագում են և կախում ունեն այս աշխատությունից, որի հսկանական թեզերը, ինչպես նշեցինք վերելում, սփյուռքահայ մամուլում հրատարակվել էին նույն հեղինակի կողմից դեռևս 1934 թ.: Այս գործը պատմագիտական ուսումնասիրություն լինելով հանդերձ միաժամանակ արդյուրագիտական նշանակալից ներդրում է, որովհետև մեջ բերված արդյուրները մոտ երեք տասնամյակի ընթացքում հայտնաբերվել են հեղինակի կողմից:

Սույն գործը իր զարգացման նոր շրջան է ապրել հեղինակի՝ Բուխարեստում գտնված միջոցի: Այստեղ Անասյանը վերստին զբաղվեց Արևմտահայերի ազատագրական շարժման նվիրած իր աշխատությամբ, որի նոր մշակված օրինակը «Հայր Օտտոմանը և Արևմտահայոց ազատագրության խնդիրը» (ԺԷ դար): Պատմական ուսումնասիրություն: Գրեց Արամ Նայիրյան: Բուխարեստ, 1945» խորագրով և բաղկացած 64 ձեռագիր էջից, ներկայացրեց «Հայ մշակույթի տան» կազմակերպած հայագիտական աշխատությունների մրցույթին: Անասյանի աշխատությունը գրադատ ատյանի կողմից, որը բաղկացած էր անվանի գրողներ և բանաստեղծներ ղոկտ. Արամ Սալբիից, Եղևարդ Գոյանճյանից և Զարեհ Պապուլից, 1945 թ. հունիսի 5-ին միաձայնությամբ արժանացավ Բուխարեստի «Հայ մշակույթի տան» «Ստեփան Գևորգյան» հայագիտական մրցանակին: Այդ մասին գրադատ ատյանի արձանագրության մեջ գրված էր հետևյալը.

«Պուրբեշի Հայ Մշակույթի Տան (Ս. Գեորգյան) հայագիտական մրցումի Գրադատ Ատյան» պր. Արամ Նայիրյանի (Հակոբ Անասյան, ծանոթ. Ս. Զ.) սույն երկասիրությունը կը գտնե լուրջ և խնամված աշխատություն մը, որ նորություն մը կը բերե մեր ցեղի ազատագրության պատմության մեջ, և միաձայնությամբ արժանի կը նկատե մրցանակի:

Հայ Մշակույթի Տան
Գրադատ Ատյան
Տոթթ. Ա. Սալբի
Խղ. Գոյանճյան
Զ. Պապուլ:

5 նունիս 1945

(Կնիք Բուխարեստի
«Հայ Մշակույթի
Տան»)

Անասյանի սույն աշխատությունը հետագայում էլ ավելի է ճոխացվել նորահայտ նյութերով: 1951 թ. հեղինակը իր նոր որոնումները շարադրել է «Թուրքական տիրապետությունը Հայաստանում ԺԷ դարում» հոդվածում (տես «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՀ Գիտ. ակադեմիայի, (1951, № 5). 1954 թ. նա դարձյալ անդրադարձել է այս հարցին՝ իր «Հայ-հունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից (ԺԷ դար)» հոդվածով («Տեղեկագիր» Հայկ. ՍՍՀ Գիտ. ակադեմիայի, 1954 թ. № 3): Ահա այս քուրից հետո է, որ դեռ երկարորեն աշխատելով, գիտնականը կարողացավ վերջացնել, 1961 թ., շուրջ 30 տարվա տքնաջան ուսումնասիրություններից հետո, տպագրության հանձնել այն:

Սույն աշխատության մասին գրախոսություններով հանդես եկան Մաշտոցյան մըրցանակակիր պրոֆ. Վ. Հակոբյանը¹ և ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը²: Պրոֆ. Վազգեն Հակոբյանը «Մեծարժեք մեծագրություն» խորագրով իր գրախոսությունը եզրափակել է հետևյալ տողերով. «Ուշագիր կարդալով հեղինակի այս գործը, որը մի նոր երևույթ է սովետահայ պատմագրության մեջ, մտաբերում ենք բազմախորհուրդ այն ասացվածքը, թե նա գիտությունը սիրում է իր մեջ և ոչ թե գիտության մեջ իրեն»:

Հակոբ Անասյանի գլուխ գործոցը, սակայն դարձավ նրա «Հայկական մատենագիտություն Ե—ԺԸ դդ.» կոթողային երկը, որի առաջին հատորը ընդգրկում է 85+1230 էջ, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1959): Երկար տարիների համառ և տքնաջան աշխատանքի արդյունք եղող այդ գործը, իր նյութերի ընդգրկման ծախալով կատարյալը անցյալում լույս տեսած քուր տեսակի մատենագիտություններից, իրավամբ այն ժամանակ համարվեց Հայ մատենագրության հանրագիտարան: Այդ վիթխարի գործի արժանիքները շատ մեծ են, քանի որ այն ընդգրկում է ոչ միայն տպագիր, այլև ձեռագիր փնակում մնացած մեր մատենագրության շուրջ 1500-ամյա քովանդակ ժառանգությունը: Ի դեպ, նշենք նաև, որ առաջին անգամ լինելով այնտեղ ընդգրկված են և լայն տեղ են գտել նալ

¹ Վ. Ա. Հակոբյան, «Տեղեկագիր», 1962, № 9, էջ 83—88:

² Ա. Գ. Հովհաննիսյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 235—248:

միջնադարյան անտիպ նյութերը, որոնցից մի կարևոր մասը առաջին անգամն է մտնում ինչպես մատենագրության, այնպես էլ հայ մատենագիտության պատմության մեջ: Այս գործը անմախքաբար երևույթ հանդիսացավ հայագիտության համար: Այն ունի ոչ միայն աղբյուրագիտական և ձեռագրագիտական մեծ արժեք, այլև յուրաքանչյուր հոդվածի և կամ նշման մեջ երևում է հեղինակի մեծ պրպտիչի և ստուգաբանողի հմտությունը. կատարված են բնագրագիտական և մատենագիտական բազում ճշտումներ, բնագրերի զանազան խմբագրությունների բացահայտումներ, երկերի բովանդակության զխացանկերի հրապարակում, մեր մատենագիրների ցարդ անհայտ մնացած երկերի հայտնաբերում և ծանոթացում, և այլն, և այլն: Վերոհիշյալներից բացի, գրականության ցանկերում ցույց են տրված հազարավոր առանձին մենագրություններ, պարբերականներում ցրված հոդվածներ և անգամ նշված ուսումնասիրությունների շուրջ գրված գրախոսականներ՝ հայերեն և այլ լեզուներով: Ինչպես նշել ենք այն ժամանակ, Անասյան Մատենագիտությունը լինելով հայ մատենագրության խոշորագույն գանձարանը, նրան կարող են դիմել նույնիսկ հեռավոր վայրերում ապրող և մասնագիտական խոշոր գրադարաններից գուրկ եղող հայագետներ, քանի որ այս աշխատությունը լրացնում է ոչ միայն ձեռագրերի, այլև բազմաթիվ գիտական գործերի և պարբերականների պակասը:

Այստեղ մենք հնարավորություն չունենք հայագիտության մեծագույն նվաճումներից մեկը եղող այս գրքի մասին ավելի հանգամանալից խոսելու, սակայն իր ժամանակին ինչպես նախնական հաղորդումով, այնպես էլ երկու անգամ ընդարձակ գրախոսություններով հանդես ենք եկել պարբերական մամուլում:

Վերջում նշենք, որ հայագիտության պատմության մեջ դժվար է գտնել նման մի երկ, ինչպիսին է Անասյանի «Հայկական մատենագիտություն»-ը, որը աշխարհով մեկ, այն էլ տարիներ շարունակ, միա-

համուռ բարձր գնահատականի հասած լինի հայ և օտար գիտական աշխարհի կողմից: Բավական է նշել, որ ինչպես նրա հրատարակումից առաջ, սկսած 1956 թ., այնպես էլ նրա հրատարակումից հինգ տարիներ հետո 1964 թ. լույս են տեսել, բացի Հայաստանից, Մոսկվայում, Բեյրութում, Փարիզում, Կահիրեում, Լայպցիգում, Վիեննայում, Նյու-Յորքում, Բուխարեստում, Վենետիկում, Վարշավայում, Թեհրանում, Բուենոս-Այրեսում և այլ վայրերում շուրջ 22 գրախոսություններ, առանց հաշվելու նաև նրանց բազմաթիվ արտատպումները: Նշենք, որ գրախոսությունները, բացի հայերենից, գրվել են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և լեհերեն լեզուներով և պատկանում են անվանի հայ և օտար հայագետների գրչին, որոնցից հիշատակենք. պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանին, Հ. Հ. Մըսրոյանին, պրոֆ. Յ. Ասֆալզին, սրոֆ. Վլադ Բրնցեանուին, Հ. Ներսես Տեր-Ներսեսյանին, ակադ. Ս. Տ. Երեմյանին, թղթակից անդամ Ա. Ղանալանյանին, Կ. Ռոշկոյին, դոկտ. Գ. Վ. Արզարյանին, Հ. Հ. Ոսկյանին, Կ. Ն. Յուզբաշյանին, Ի. Իշխանյանին, դոկտ. Ա. Մարտիրոսյանին և այլն:

«Հայկական մատենագիտության» նշանակությունը գնալով էլ ավելի է մեծանում և այժմ կարելի է ամենայն համարձակությամբ ասել, որ նրա լույս տեսնելուց հետո դժվար է գտնել հայ մատենագրության նկիրված որևէ լուրջ աշխատություն, որը դիմած չլինի Անասյանի հիշյալ գործին:

Նրա պատմա-աղբյուրագիտական բնույթի մենագրություններից է նաև «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի յուսի տակ» աշխատությունը, որը լույս տեսավ նախոսպես Վենետիկի Մխիթարյան միաբանության պաշտոնաթերթ «Բազմավեպ» հանդեսի 1968 թ. 7—12 համարներում և այսա հրատարակվեց առանձին գրքով (Վենետիկ—Ս. Ղազար, 1968 թ., 48 էջ):

Մինչև Անասյանի կողմից վերոհիշյալ աշխատության լույս ընծայումը Վարդան Այգեկցին հայագիտությանը առավելապես հայտնի էր իբրև առակագիր: Հեղինակի կողմից Մաշտոցյան Մատենադարանում հայտնաբերված՝ Վարդանի երեք աշխատությունների շնորհիվ այժմ մեծ չափով ամբողջանում է նրա ժառանգությունը և լրանում նաև նրա մեծ մասամբ անհայտ մնացած կենսագրությունը: Անասյանի կողմից հայտնաբերված Վարդանի անտիպ գործերն են. «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» ամբողջական՝ դավանաբանական բնույթի արձեքավոր աշխատությունը, որն ավարտվել է 1205 թ., «Վասն

³ Տե՛ս Ս. Բողանջյան, Հայկական մատենագիտություն գրքի հրատարակումը (նախնական հաղորդում), «Նոր կյանք», Բուխարեստ, 1956, 20 հոկտ., № 43(334): Նույնի՝ Հայ մատենագրության հանրագիտարանը, «Էջմիածին», 1961, № 2, էջ 51—60, սրտասույ. «Լիլյո», Թեհրան, 1961, 22, 23, 25, 26, 27, 28 և 30 սպրիլի և 2, 4 և 6 մայիսի, №№ 84—87 (888—893) և 93—94 (898—899), և դարձյալ նույնի՝ «Հ. Ա. Անասյան—Հայկական Մատենագիտություն», «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 3, էջ 225—231:

շատահաջ քննողացն յանդիմանութիւնս թողողը և «Վասն անիրաւ բամբարտողաց եկեղեցոյս Հայաստանեայց» գրութիւնը: Ինչպես այս գործի մասին մեր գրած գրաստութեան մեջ ասել ենք, «սույն աշխատութիւնը կարևոր ներդրում է հայ մատենագրութեան պատմութեան համար: Դրա շնորհիւ այժմ Վարդան Այգեկցին, իր ամբողջ հասակով կանգնած, ի հայտ է գալիս մեր երախտավորների շարքում. նա այժմ արդեն ունենում է իր կենսագրությունը և իր արժանի տեղն է գրաւում հայ գրականութեան պատմութեան մեջ: Նա, խոշոր առականագիր լինելուց բացի, այժմ հայտնի է դառնում նաև իբրև իր ժամանակի մեծագույն հայ եկեղեցական, հասարակական և մշակութային գործիչներից մեկը: Վարդանը կարևոր նպաստ է բերել իր ժամանակին հուզվող դավաճարանական հարցերին և, պայքարելով լատինամուկ հոսանքի դեմ, դարձել ազգային ինքնորոշւոյնութեան համար պայքարող հայ կարկատուն դեմքերից մեկը»:

Մեծարժէք աղբյուրաբանական և բնագրաբանական մեծագրություն է նաև ներհուն քանասերի «Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրութեան համաբարբառը» աշխատությունը, որ նախապես լույս տեսավ «Էջմիածին» ամսագրում (1871 թ. № 11—12 և 1872 թ. № 1—4) և ապա առանձնատիպ (Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի տպարան, 1872, 100 էջ):

Այս աշխատութեան մեջ առաջին անգամ լինելով ուսումնասիրվում է համաբարբառների պատմությունը հայ մատենագրութեան մեջ և արժարժիւում են քանասիրական մի շարք հարակից հարցեր: Հայերեն համաբարբառների պատմությունն սկսվում է Ե դարում թարգմանական համաբարբառներով, որոնց մեջ հնագույնը, ըստ երևույթին, Տատիանոսի համաբարբառն էր, որի և ժամանակագրորեն հաջորդների վրա հանգանակորեն կանգ է առնում Անասյանը: ԺԳ դարում Արևմուտքում հանդես եկած Հուգոնյան համաբարբառի ազդեցութեան առաջին հետքերն Անասյանը նկատում է նույն դարի վերջերից հայերեն ձեռագիր Աստվածաշնչերում հանդես եկող նոր «Ֆիուսնկաց» կոչված գլխաբաժանումների

մեջ և ցույց է տալիս, որ նրա ազդեցութեան տակ ԺԷ դարում է, որ ի հայտ են գալիս հայերեն սուրբգրական այբբենական համաբարբառներ կազմելու առաջին փորձերը՝ Ղազար Բաբերդացու և Ռուկան Երևանցու ջանքերով, իսկ իսկական համաբարբառային բառարաններ կյանքի են կոչվում սկսած ԺԸ դարից: Դարձյալ, շնորհիւ սույն աշխատութեան, ի հայտ է գալիս, որ դեռևս ԺԸ դարից սուրբգրական համաբարբառների կողքին փորձեր են արվել կազմելու նաև գիտական համաբարբառներ և դրա հոյակապ նմուշն է Գրիգոր Նարեկացու երկերի անտիպ համաբարբառը, որի հեղինակն ամենայն հավանականութեամբ Հակոբ պատրիարք Նալյանն է: Արժարժիւած քանասիրական հարակից հարցերի մեջ առանձնապես կարևոր են հայերեն ձեռագրերում գտնվող լուսանցային կանոնների ծագման և նրանց կրած քարեփոխումների մասին հեղինակի եզրահանգումները, որոնց համաձայն այդ կանոնները մնացորդ են հայերեն Աստվածաշնչի այն սկզբնական թարգմանությունից, որն ասորերենից էր կատարվել: Անասյանը միաժամանակ համոզիչ կերպով ցույց է տալիս, որ հայերեն չորս ավետարանների նախադրություններն ու գլխակարգությունները և վերջիցներիս կցված համաբարբառային աղբյուրները, որոնք առաջին անգամ 1270 թ. են երևան գալիս ձեռագրերում, Գեորգ Ակեռացու հեղինակությունն են: Անասյանի սույն գործը միաժամանակ նոր միջնա այժմ մասնագետների ուշադրությունից վրիպած երկություններ է մատնացույց անում նաև հայ բառարանագրութեան մեջ՝ պարզելով այբբենական դասավորման սկզբունքների աստիճանական զարգացման ընթացքը:

Անհրաժեշտ է նշել, որ, Անասյանի մեծագրությունների մասին խոսելուց բացի, պետք է կանգ առնել նաև նրա բեղուն գրչին պատկանող շուրջ հինգ տասնյակի հասնող հոդվածների գեթ մի մասի վրա ևս, քանի որ նրանց ճշող մասը համագոր է առանձին արժեքավոր մի ուսումնասիրութեան և, բացի գիտական նորություն լինելուց, լի են ստուգաբանական, բնագրագիտական և աղբյուրագիտական քազմակողմանի արժանիքներով: Հոբելյարի ստորագրութեամբ շուրջ կես դար ինչպես Սիկոնքի տարածքի վրա, այնպես էլ Մայր Հայրենիքում լույս տեսնող քազմաթիւ պարբերականների էջերում ցանցցված պատմաբանասիրական հոդվածների ամփոփումը մի հատորում կարևոր նպաստ կլինի հայագիտութեամբ զբաղվողների համար:

Նրա «Բուզանդարանի ուսերեն թարգմանությունը» (Երևան, ապակետիպ, 1854

⁹ Տես ավելի մանրամասն Սուրեն Բուզանջյան, Վարդան Այգեկցին և «Այնտառ հատար» ծողովախոն (գրախոսութեան փոխարեն), «Էջմիածին», 1872 թ. № 3, էջ 37—43: Տես նաև, Լ. Թիդյաթյանի գրախոսութեանը, «Երասի» Հայկ. ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների, Երևան, 1871, № 2, էջ 124—126:

թ., ինչպես նաև մասամբ «Տեղեկագիր» Հայկ. գիտությունների ակադեմիայի հասարակական բաժանմունքի, 1954, № 12, էջ 89—105) երկը թեև խորագրված է իբրև գրախոսություն, սակայն քննական կարևոր ուսումնասիրություն է նվիրված Փավստոս Բուզանդի Հայոց պատմության ոտներեն թարգմանությանը (Երևան, 1953, թարգմանություն Մամիկոն Գևորգյանի): Այստեղ Անասյանը ոչ միայն կատարում է քննադատական միանգամայն արժեքավոր դիտողություններ և ճշգրտումներ, այլ նաև Փավստոսի քննադրից դուրս հարակցաբար լուծում է քանասիրական այլ հարցեր, օրինակ՝ այն, որ, ինչպես ապացուցում է նա, է դարի կոչված «Անանու ժամանակագրություն»-ը Անանիա Ծիրակացու Զատիկի ճառում անվանվում է «Ժամանակական կանոն» և որ դա նույնիսկ Ծիրակացու հեղինակությունն է: Այս հայտնաբերումն ունի քանասիրական կարևոր նշանակություն, նրանով, որ նախկինում քանասիրները (Հ. Բ. Սարգսյան, ակադ. Ստ. Մալխասյանց, պրոֆ. Ա. Գ. Աբրահամյան և ուրիշներ) այդ ժամանակագրության հեղինակությունը պարզապես վերագրում էին Ծիրակացուն, իսկ այս փաստն ապացուցեց, որ նրանց կոառնումները ճիշտ էին:

Նրա գրախոսություններից է նաև «Խորենացու ժամանակագրական համակարգի հարցը» («Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, № 1) հոդվածը, որը նվիրված է Գ. Խ. Սարգսյանի «Մովսես Խորենացու Հայոց պատմության ժամանակագրական համակարգը» (Երևան, 1965) գրքին: Անասյանը բարձր գնահատական է տալիս այդ աշխատությանը և, հատկապես կանգ առնելով նրա կովանների տեսության վրա, եզրակացնում է. «Պետք է ասել, որ Խորենացու համակարգի վերլուծության համար առաջ քաշված կովանների այս տեսությունը հեղինակի դրույթների մեջ փայլուն տեղ է գրավում»:

Անասյանը գրել է նաև այլ գրախոսություններ, որոնցից հատկապես մեծ արժեք է ներկայացնում Ա. Սալմասյանի «Հայաստանյան մատենագիտության» նվիրվածը (տես «Պատմա-քանասիրական հանդես», Երևան, 1971, № 1, էջ 239—254) և որը գրախոսություններ գրելու համար դասական օրինակ է հանդիսանում: Եվ իրոք, «Հայաստանյան մատենագիտություն» գրախոսությունը մի իսկական գիտահետազոտական աշխատություն է, համբերատար և ինչպես աշխատանքի արդյունք, որը փաստերի անալոգիկի լույսի տակ ամփոփում քննադատության է ենթարկում բարև-խղճության բացակայության պայմաններում

պատրաստված մի աշխատություն: Ցույց է տրվում, որ այդ մատենագիտությունը 22 բաժինների է վերածված, բայց բազմաթիվ հրատարակությունների իրենց տեղում չեն: Անասյանը իր կատարած մանրագին պեղումների միջոցով բացահայտում է գիտական հասկացողության չզոյության հարյուրավոր աներևակայելի երևույթներ, որոնց մասին պատկերացում կազմելու միակ միջոցն է կարդալ այդ ուսումնասիրություն-գրախոսությունը: Գրախոսվող գրքում տեղ գտած թյուրիմացություններից, որ բացահայտել է Անասյանը, բավականաճանր տեղի սղության պատճառով միայն մեկ օրինակի հիշատակությամբ.

„Eutychius (Patr.), „De Alexandr. ecclesiae origin., Omtia ex orient. monument. Partim armenice. Romae, Typ. Prop. Fide, 1661“.

Հայերեն հնատիպ գրքերի խոզարկուների համար գրավիչ կլինի այս նկարագրության մեջ գտնվող armenice (հայերեն) բառը, ինչպես եղել է Սալմասյանի համար, և անխուսափելիորեն կսկսվեն հետազոտությունները: Այդ աշխատանքը մենք չուզեցինք թողնել ուրիշների. և ի՞նչ պարզելվ: Այստեղ գործ ունենք ոչ թե armen-երեն, այլ arab-երեն մի հրատարակության հետ, այն էլ խիստ աղավաղված կերպարանքով: Գրքի նկարագրությունը ծագում է բարդ ու կասկածելի աղբյուրներից: Գրքի հեղինակը Ալեքսանդրիայի մելքական պատրիարք Լվտիքիոս Եգիպտացին է, ժ դար: Նրա արաբերեն աշխատություններից հանված մի գլուխ, որը քանանայական աստիճանների մասին է խոսում, հրատարակվել էր նախ 1842 թ. Լոնդոնում՝ „Eutychii patriarchae Alexandrini Ecclesiae saae origines, ex ejusdem arabico nunc primum typis editi ac verstone et commentario auxit I. Selden. Londini, 1642“.

Սակայն 1661 թ. Հոսմի աստվածաբաններից Abrahami Ecchellenstis-ը դեմ էր դուրս եկել վերոհիշյալ հրատարակությանը և հրատարակիչ Selden-ի տեսակետներին և արաբերեն քննադրը նորից էր հրատարակել լատիներեն նոր թարգմանության հետ միասին՝ „Eutychius... vindicatus et suis restitutus Orientibus, sive responso ad Joan. Selden Origines... auctore Abr. Ecchellenst. Romae, 1661“.

Այս բոլորի խառնումն ու աղավաղումն է Սալմասյանի նշած միավորը:

1969 թ. Միխիթարյան միաբանության հիմնադրման 250-ամյակին նվիրված

¹ J.-Ch. Brunet, Manuel du Libraire..., t. II, Paris, 1861, p. 117.
² Նույն տեղում, էջ 117:

«Armeniaca» հայագիտական ժողովածու-
 նու լույս տեսավ Անասյանի «Նոր հայացք
 աղվանագիտության բնագավառում» ու-
 սումնասիրական հոդվածը՝ նվիրված բազ-
 մավատակ հայագետ Ա. Օ. Մնացական-
 յանի «Աղվանից աշխարհի գրականության
 հարցերի շուրջ» (Երևան, 1966) գրքին:
 Անասյանը մախ մի ընդհանուր ակնարկով
 հանրագումարի է բերում վերջին տասնամ-
 յակների ընթացքում սովետահայ աղվա-
 նագիտության մեջ մուտք գտած այլազան
 և իրարամերձ կարծիքները և ապա կանգ
 է առնում Մնացականյանի տեսակետների
 վրա, որոնք նոր ուղի են գծում աղվանագի-
 տության բնագավառի հետագա աշխա-
 տանքների համար: Անասյանի նպատակն
 է եղել ոչ թե գրական Մնացականյանի
 այդ աշխատությունը, «այլ վեր հանել նրա
 քերած նոր տեսակետի նշանակությունը
 աղվանագիտության էական հարցերի լուծ-
 ման համար՝ որպես գիտության վերջին
 խոսք»: Աղվանագիտության մեջ նոր մուտք
 գործող այդ հայացքի համաձայն տարբեր
 հասկացություններ են կուրից դեպի հյուսիս
 տարածվող բուն Աղվանքը, որի բնակիչնե-
 րը աղվանական ցեղեր էին, և կուրից դեպի
 հարավ տարածվող նոր կամ հայկական
 Աղվանքը, որի բնակչությունը հայկական
 էր, հետևաբար և հայկական էին նրա լե-
 զու, մշակույթը և գրականությունը, «աղ-
 վանական» այն հարուստ գրականությունը,
 որը մեզ հասել է հայերեն լեզվով: Այս
 դրույթը նոր փաստարկումներով խորագ-
 վում և ամրապնդվում է Անասյանի հոդվա-
 ծում: Օրինակ՝ աղվանական այբուբենի
 ստեղծման գործում Մաշտոցին օժանդակող
 յարգման Բենիամինի ինքնությունը նոր
 լուսաբանություն է ստանում Անասյանի
 մոտ՝ որպես հայ-աղվան: «Վերոհիշյալ Բե-
 նիամինը, որը,—գրում է Անասյանը,—
 գարգարագետ էր և կորյունի վկայությամբ՝
 «Աղուան ազգա», ոչ թե բուն աղվան էր,
 այլ հայ-աղվան, հայկական Աղվանքի
 ծնունդ, և այդ առթիվ հատկապես Այունի-
 ջից էր հրավիրված, ինչպես պարզ երևում
 է Խորենացու վկայությունից»⁹: Եվ փաս-
 տարկումը հիմնավորվում է:

⁹ Հմմտ. «Մովսեսի Խորենացու Պատմության Հա-
 յոց», Թիֆլիս, 1913, էջ 329:

¹⁰ Հ. Ս. Անասյան, Հայկական մատենադատու-
 թյուն, հատոր Ա, Երևան, 1959, էջ 814—18:

րում, եթե ընդունենք, որ Մաշտոցյան մա-
 տենադարանի № 7117 ձեռագրում գտնված
 այբուբենը, որը 52 նշանագրերից է բաղկա-
 ցած, աղվանական հնագույն՝ լիակատար
 ցած, աղվանական է ներկայացնում, հիմք չկա նաե
 այբուբենն է ներկայացնում, հիմք չկա նաե
 չընդունելու, որ նույն մատենադարանի №
 3124 ձեռագրում գտնվող այբուբենը, որի
 տառերն ունեն հայկական տառերի թիվը,
 դասավորումն ու նրանց հետ մնամությունն
 պահպանված, խմբագրված և հայերեն լեզվի
 բնիկիված, խմբագրված և հայերեն լեզվի
 պահանջների համաձայն լրացված մի աղ-
 վանական այբուբեն, որ հայացած աղվան-
 ցեղը կարող էին օգտագործել հայերեն
 գրելիս, ինչպես իրենց մայրենի լեզուն
 կորցրած հայերը Գալիցիայում գրում էին
 հայատառ կոմաներեն (ղվիչաղերեն) և
 կամ՝ Օսմանյան կայսրության մեջ՝ հայա-
 տառ թուրքերեն (էջ 300—301):

Ակադ. Ա. Շահինյան իր հավանությունն է
 տվել Անասյանի այս կարծիքին: Ի դեպ,
 Անասյանն ավելացնում է, որ «Եթե կարող
 է խոսք լինել հայացած կամ հայախոս դար-
 ձած աղվանների մասին, դա կարող է վե-
 րաբերել միայն և միայն հյուսիսային Աղ-
 վանքի բնիկ ցեղերին, քանի որ հարավա-
 յին Աղվանքի՝ Ուտիքի և Արցախի բնակիչ-
 ներն արդեն հայեր էին, հայախոս էին և,
 ինչպես տեսանք, Մեսրոպից ուղղակի հայ-
 կական այբուբենն էին ընդունել»:

Անասյանի այս հոդվածում բանասերի և
 պատմաբանի սուր միտքը ցույց տվող այ-
 լազան դիտողություններ ու փաստեր շատ
 կան: Կարելի է առանձնապես նշել Ստրա-
 բոնի կողմից հիշատակվող Բորգենն գա-
 վառի տեղագրմանը վերաբերող ընդար-
 ձակ հատվածը (էջ 306). կամ թե՛ Խորե-
 նացու մոտ սլավոնոլ փաստերի վրա հեն-
 վելով բուն Աղվանքը հայկական Աղվան-
 քից տարբերելու հարցին նվիրված ընդար-
 ձակ հատվածը, որի վերջում նա ավելաց-
 նում է. «Խնդիրը այն է, որ Պատմութիւն
 Աղուանից երկի հեղինակը կամ կազմողը
 Խորենացու մոտ եղած այս երկու տարբեր
 տվյալները թուրքիմացաբար ի մի է ձուլել՝
 Միսական Առանի իշխանության տակ՝ և
 դրանով առաջ է եկել այն սխալ տպավոր-
 ությունը, թե խոսքը վերաբերում է մի
 ընդհանուր տարածության, որը միասնա-
 բար Աղվանք էր կոչվում, և հետևաբար
 պատմական Աղվանքի սահմաններն ընդ-
 գրելով էին նաև հարավկուրյան շրջաննե-
 րը, ինչպես կառնենում են կարծել մեր ժա-
 մանակի որոշ ուսումնասիրողներ» (էջ
 313):

¹¹ Հմմտ. «Մովսեսի Կողակատուացու Պատմու-
 թյուն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 14:

Ա. Շ. Մնացականյանի վերոհիշյալ մեծարժեք աշխատության անթիվ Անասյանի կողմից գրված նույնքան մեծարժեք հոդվածը միջազգային ասպարեզ դուրս քերելու նպատակով Փարիզում լույս տեսնող ֆրանսերեն «Հայագիտական հանդես»-ի խմբագրությունը արժանի գտավ այն ամբողջությամբ հրատարակել նաև ֆրանսերեն թարգմանությամբ¹²:

Ստուգարանական միանգամայն ուսանելի քաղմաթիվ ճշգրտումներ կարելի է գտնել Անասյանի նույնիսկ փոքրածավալ հոդվածներում: Այդպիսիներից է օրինակ նրա «Ջել և Ուրբաթագել» հոդվածը («Լրաբեր հաս. գիտ.-ի», 1966 թ., № 9, էջ 78—81): Այդ բառերից առաջինը՝ «զել»-ը, որը երկրորդի քաղաղիչ մասն է, քոլորովին անծանոթ է եղել հայերեն լեզվի անգամ ամենահեղինակավոր քառարաններից (Նոր Հայկազյան, Առձեռն և Արմատական), իսկ երկրորդը, որը տեղ է գտել Վենետիկյան քառարաններում, աղավաղված էր «ուրբաթալեզ» կամ «ուրբաթագել» ձևերով և ճիշտ չէր քացատրված: Ի վերջո կողմնակի աղբյուրների և փաստարկումների միջոցով Անասյանին հաջողվում է ճշտել այդ բառերի ուղիղ ձևերը: Անասյանի ստուգարանությունը «զել»-ը կապ ունի «զելանել» քայի հետ և նշանակում է «խախտում»: Այսպիսով «ուրբաթագել»-ը հայերի համար նշանակում էր «ուրբաթ օրվա պահքի ժամերի խախտում», որը կատարվում էր ասորիների կողմից՝ Ներսես ՇՆորհայտու և Վարդան Այգեկցու ժամանակներում:

Հարգելի հոբելյարը իր աշխատակցությունն է քերել «Երկունք» (Փարիզ), «Տեղեկագիր» (այժմ «Լրաբեր»), «Պատմաքանասիրական հանդես», «Սովետ Էրմանիտանը», «Բանբեր Մատենադարանի», «Սովետական գրականություն», «Սովետական արվեստ», «Византийский вестник» (Մոսկվա), «Բազմավեպ» (Վենետիկ), «Armeniaca» (Վենետիկ), «Revue des Etudes Arméniennes» (Փարիզ) և այլ պարբերականներին:

Սակայն քաղմաթաստակ մշակի աշխատակցությունը հատկապես քելմնավոր եղավ «Էջմիածին» ամսագրի էջերում, ուր ուղիղ քառորդ դար է, որ մեծ սիրով հյուրընկալվում են նրա ուսումնասիրությունները, որոնք բոլորն էլ աչքի են ընկնում իրենց բացառիկ ոգով: Նրանք գրված են հայրենասիրության և հայ ավանդապահության դիրքերից և ուսանելի շատ բան են պարունակում հայագիտության համար մինչ

այդ անհայտ մնացած քաղմաթիվ հարցեր լուսարակելու և գիտական նորություններ հայտնաբերելու տեսակետից: Հոբելյարի մենագրությունների շարքում կանգ առանք նրա «Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը» առանձնատիպ գործի վրա, որը նախապես պարբերաբար լույս տեսավ «Էջմիածին» հանդեսում: Այժմ փորձենք անդրադառնալ նույն ամսագրում լույս տեսած նրա միայն մի քանի հոդվածներին:

Անասյանը իր «Գրական նմուշներ Գրիգոր Շղթայակրից» հոդվածում¹³ ուսումնասիրության առարկա է դարձրել Մաշտոցյան Մատենադարանի № 797 ձեռագրում գտնվող երեք խրթնաբան անտիպ տաղեր, որոնք Գրիգոր Շղթայակրի գրչին են պատկանում և գրված են նրա կյանքի նախապատրիարքական շրջանում: Ամենայն հաջողությամբ վերծանելով այդ տաղերը՝ ցույց է տալիս, որ նրանցից երկուսը Երուսաղեմի հայոց պատրիարք Հովհաննես Կ. Պոլսեցուն (1684—1697) նվիրված ներբողներ են և պատմական թանկարժեք նորություններ են տալիս նրա գործունեության վերաբերյալ. իսկ երրորդը, ինչպես ցույց է տալիս վերծանումը, պանդխտությունից հոգեհարազատների հասցեագրված մի ուղերձ է, գրված 1705—1715 թթ. շրջանում: Անասյանը հրատարակում է առաջին տաղը, որը գրված է 1694 թ.:

Նրա «Գիտողություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության վերաբերյալ» հոդվածաշարը¹⁴ ձեռագրական տղվայների, պատմական աղբյուրների և հատկապես Կամենիցյան տարեգրության քննության ցույց է տալիս, որ Սալմաստեցին Հռոմից վերադարձին չի մահացել Լվովում 1551 կամ 1552 թթ., այլ կենդանի է եղել դեռ 80-ական թվականներին էլ, հետևաբար նրա այն տապանաքարը, որը գտնվում է Լվովի հայոց արքեպիսկոպոսական եկեղեցում, Պրոպագանդայի գործակալների կողմից ժԷ դ. ստեղծված կեղծիք է: Մյուս կողմից հետաքրքրական է, որ Սալմաստեցու նման մի նշանավոր անձնավորության՝ Լվովում մահացած լինելու վերաբերյալ արխիվային ու պատմական ժամանակակից աղբյուրներում ոչ մի տվյալ չի հայտնաբերվել մինչև այսօր:

Դարձյալ «Էջմիածին» ամսագրի էջերում Անասյանը երկու հոդվածներ է նվիրել ժԷ—ԺԸ դարերի հեղինակ՝ բանաստեղծ Թովմաս Ագուլեցուն. «Մի անծանոթ հեղի-

¹³ «Էջմիածին», 1950, № 9—4, էջ 98—48:

¹⁴ «Էջմիածին», 1956, № 8—8, էջ 85—88. № 11—12, էջ 88—78:

¹² «Revue des Etudes Arméniennes», Paris, nouv. serie, t. VI, 1969, p. 299—330.

Գեորգ Ակեռացու կարգավորած օրինակից» (էջ 86): Ապա մանրագին կերպով մի առ մի կանգ առնելով Աստվածաշնչի մյուս հրատարակությունների վրա, Անասյանը եզրակացնում է, որ նրանցից «ոչ մեկը ձեռագրական նշանակություն չունի, ուստի և չի կարող տեղ ունենալ տարրըթերցումների բաժնում»:

Ինչ խոսք, որ Աստվածաշնչի քննական հրատարակության պատրաստման համար մասնագիտական արժեքավոր ցուցմունքներ են Անասյանի այս և նման թելադրանքները:

Իր կողմից վերջերս հայտնաբերված Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» ժողովածուին են վերաբերում Անասյանի վերջին երկու տարիների ընթացքում դարձյալ «Էջմիածնում» լույս ընծայած երկու այլ հոդվածները ևս. «Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը. «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ»¹⁹, «Ներսես Շնորհալին և «Արմատ հաւատոյ» ժողովածուն»²⁰:

Նա հոդվածներ ունի նվիրած պարբերական մամուլում նաև մեծ քանաստեղծ Սալաթ-Նովայի տաղերին²¹ և նրա տաղերի երաժշտական հրատարակություններին²²: Նա հատուկ հոդված է նվիրել Ռումիճիայի մեծանուն քանաստեղծ Միհայիլ Էմինեկուին²³, որը հոր կողմից հայ ծագում է ունեցել: Եվ այլ հոդվածներ:

Հիշատակության արժանի են նաև մեր միջնադարի մեծագույն մատենագիրներից և քանաստեղծներից ոմանց գիտական հրատարակությունների վերջում Անասյանի կողմից ամենայն բարեխղճությամբ կազմված և հրատարակված լիակատար մատենագիտության քաժիցները, որոնք մեծ չափով նպաստում են հիշյալ հեղինակների գործերի ամբողջացմանը: Նման գործերից են. Փավստոսի (ոուսերեն թարգմանության վերջում, Երևան, 1953 թ.), Մխիթար Գոշի (Գոշի դատաստանագրքի ոուսերեն թարգմանության վերջում, 1954), Եղիշեի (նրա պատմության քննական հրատարակության վերջում, 1957 թ.), Կիրակոս Գանձակեցու (նրա պատմության գիտ. հրա-

տարակության մեջ, 1961 թ.), Կոստանդին Երզնկացու (նրա բնագրերի գիտական հրատարակության վերջում, 1962 թ.), Արիստակես Լաստիվերցու (նրա պատմության գիտ. հրատ. վերջում, 1963 թ.) մատենագիտությունները:

Հակոբ Անասյանը իր մեղվաջան քաղաքիկ աշխատասիրության շնորհիվ աչտ աչտ մեր հայագիտության նրախտավորների շարքումն է ոչ միայն իր հարուստ տպագիր գործերով, այլև իր անտիպ բազմաթիվ աշխատություններով, որոնցից մի մասը արդեն իսկ պատրաստ է տպագրության, իսկ մի քանիսն էլ աշխատանքի ընթացքումն են: Առաջին հերթին պետք է հիշատակել իր անցման «Հայկական մատենագիտության» երկրորդ հատորը, որը տպագրության ընթացքումն է և բաղկացած է լինելու դարձյալ 50 մամուլից և ընդգրկելու է Առաքել Սյունեցուց մինչև Բ տաղի վերջը: Նա այժմ աշխատում է նույն կորոշային գործի երրորդ հատորի վրա, որը շուտով իր ավարտին է հասնելու. այն ևս ընդգրկելու է նույն սովոր ծավալը և պարունակելու է Գ—Է տառերը: Տպագրության համար դարձյալ պատրաստ է Սալաթ-Նովայի լիակատար մատենագիտությունը, 10 մամուլ ծավալով, ուր տրված են նաև հաճախեղ աշուղի թղթ տաղերի թարգմանությունները և նրա մասին գրված թղթ ուսումնասիրությունները: Նա տպագրության համար պատրաստում է իր կողմից հայտնաբերված Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» դավանաբանական ժողովածուի համահավաք բնագիրը Երևանի, Վենետիկի, Հոռմի, Երուսաղեմի և Փարիզի մատենադարանների բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ: Այն ունենալու է 15 մամուլ ծավալ: Նա նույնպես պատրաստում է հրատարակության ԺԷ դարի մանկավարժ-հեղինակ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհածողով» և «Դուռն համարողական արհեստին» երկերը, ուսումնասիրությամբ, բնագրերով և ծանոթագրություններով հանդերձ, 12 տպագրական մամուլ ծավալով: Աշխատանքի ընթացքում է նաև «Մի էջ ռուս-թուրքական հարաբերությունների պատմությունից և Երևանի 1724 թ. հերոսամարտը», 4 մամուլ ծավալով, և այլ գործեր: Նա պատրաստվում է նաև մեզ հայտնություններ անելու Հովհան Մայրազոմեցու և Գեորգ Ակեռացու գործունեության, ինչպես և Անանիա Նարեկացու կորած «Հաւատարմատ»-ի մասին:

Բազմահմուտ գիտնականին հաճախ է, որ վստահվել է իբրև խմբագիր իր մասնակցությունը բերել հայագիտական կարելիոր նշանակություն ունեցող մի շարք աշ-

¹⁹ «Էջմիածին», 1972, № 8, էջ 27—36. № 9, էջ 45—58:
²⁰ «Էջմիածին», 1973, № 12, էջ 83—82:
²¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 223—224: «Սովետական գրականություն», 1963, № 10, էջ 130—154:
²² «Սովետական արվեստ», 1963, № 12, էջ 42—44:
²³ «Սովետական գրականություն», 1961, № 1, էջ 145—148:


խատությունների: Նա պատասխանատու խմբագիրն է եղել Հայկ. ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի վարիչ՝ պրոֆ. Վազգեն Հանդրյանի աշխատասիրությամբ լողս տեսած «Կանոնագիրք Հայոց» երկու հատորանոց մեծաթեք աշխատության (1984, 1971), որը վերջերս արժանացավ Մեսրոպ Մաշտոցի մրցանակին, ինչպես նաև բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Մարտիրոսյանի «Մարտիրոս Ղրիմեցի» (1958 թ.), «Հայ Ռեստիպ գրքի մատենագիտական ցուցակ 1512—1800» (1968) և Հաչկ Դավթյանի «Հայ գիրքը 1801—1850 թթ.» (1967) հրատարակությունների:

Բազմալատուակ հոբեյար Հակոբ Անասյանի համար հայագիտությամբ գրադվելը նրա կյանքի տարերքն է ու միաժամանակ նրա գոյության իմաստը: Հայագիտության նվիրյալը չի հանգստանում ոչ օրվա հանգրստի ժամերին, ոչ էլ հանգստյան համար

սամանված օրերին և ոչ իսկ ամառային արձակուրդներին: Նրանից շատ հեռու է նաև հանգստյան թռչակի անցնելու գաղափարը, սակայն չե՞ որ 10 տարի է արդեն անցել օրերով նախասահմանված տարիքից...:

Այսօր, երբ բազմալատուակ մեր մշակը աղմուկից հեռու՝ մագաղաթներից շրջապատված գիտական նոր հաջողություններով է դիմավորում իր ծննդյան 70-ամյա հոռելանը, նրա մնայուն արժեքի վատակի վրա հիացողների կողմից ամբողջ սրբտով ցանկանում ենք երկար ու առողջ կյանք և աշխատանքային նորանոր հաջողություններ ի փառս հայ մշակույթի և հայագիտության, որոնց բացառիկ նվիրյալն է ինքը՝ միշտ երիտասարդ և ստեղծագործող մեղվաջան գիտնական և համետագույն հայագետ Հակոբ Անասյանը:

ՍՈՒՌԵՆ ՔՈՒԱՆՋՅԱՆ



Լ ՈՒՅՍ ՏԵՍԱՎ

1. Մայր Աթոռի հրատարակություն «Հայկական խաչքարեր» ալբոմը, հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, 213 գումավոր և միագույն (սև) նկար, կավճապատ ընտիր թուղթ, 12500 տպաքանակ, 230 էջ, գեղարվեստական գեղեցիկ ձևավորում և ընտիր տպագրություն՝ կատարված Բելյուրի «Էրեբունի» հրատարակչության կողմից:

2. Օրացույց, Մայր Աթոռի, 1975 թվականի, 14 մամուլ, 220 էջ, պատկերազարդ, 20000 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան:

3. Պատի օրացույց, Մայր Աթոռի, 1975 թվականի, 55x76 սմ չափի, երիզված կինամոնագույն կամ կապույտ գույնի զարդանախշերով, 10000 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան:

Մ Ա Մ ՈՒ Լ Ի Տ Ա Կ Է

1. Նոր կտակարան (Չորս Անտարաններ, Գործք առաքելոց, Առաքելական թղթեր և Ցայտնութիւն), արևելահայերեն թարգմանություն, 10000 տպաքանակ, ընտիր տպագրություն, Մայր Աթոռի տպարան:

2. «Էջմիածին» ամսագրի մատենագիտություն, 1944—1974 թթ., մատենագիտություն, թեմատիկ, անձնանունների, տեղանունների ցանկեր, 400 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան: